

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Հ. ԱՃԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՁՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔԵՎԱՆ ԴԱՆԻՆԵԼՅԱՆ

Մ Ա Լ Ա Ք Ի Ա Յ Ի Բ Ա Բ Ա Ռ Ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1967

Հանրապետության լեզուների և տիրույթանքի նախարարություն

ԵՄԵԱՆ ՏԵՐԱԿՈՎԻՉ ԿԱՆՇԵԼԻՆ

ՎԱԼԱԿԻՍԿԻԱ ԴՎԱԼԵԿՏ

/Ուրարական լեզվով/

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ

1967

Մալաթիայի բարձրագույն մահացման եզրին զտնվող հայ բարձրա-
նորից մեկն է: Այդ բարձրունին այժմ տիրապետում են տարծց մա-
լաթիացիներ միայն, որոնց մի մասը ընաչվում է Հայկական ՍՍՀ-
ի Շահումյանի շրջանի նոր Մալաթիա ավանում: Նրանք Սովետա-
դան: Միությունն են հայրենադարձվել 1929-1936 և 1946-1948թթ:
Բալաթիացիներ կան նաև Սփյուռքում:

Մեր ուսումնասիրության համար հիմք է ծառայել հայրենա-
բարձ մալաթիացիների կենդանի խոսքը: Այդ նպատակով տարիներ
չարունակ անմիջական ու տևական աշխատանք ենք կատարել բար-
բառախոս մալաթիացիների հետ, նրանց Օչնությամբ կազմել զրա-
բարից բարձր ու բարձրադաս լատարանները, ինչպես նաև հավա-
քել տեքստեր և բարձրագույն նկարագրության համար անհրաժեշտ նյու-
րեր:

Բացի այդ, սույն բարձրագույն ուսումնասիրությունը ամբող-
ջական դարձնելու նպատակով՝ օգնության խնդրանքով, դիմել
ենք Սփյուռքի Մալաթիայի կրթասիրաց ընկերության օրգան "Նոր
Մալաթիա" հանդեսի խմբագրությանը:

1968թվականին այդ հանդեսի 1-ին համարում հրատարակվում
է մեր հայտարարությունը¹, որով խնդրվում է Սփյուռքում ապ-
րող մալաթիացիներին՝ մեզ տրամադրել իրենց բարձրագույն զրված
տեքստեր կամ այլ ընույթի սնդակություններ: Երախտագիտութ-
յամբ պետք է նշել, որ "Նոր Մալաթիայի" խմբագրությունը ըստ
հնարավորության օգնել է մեզ՝ իր մայրենի բարձրագույն ուսումնա-
սիրության գործում: Ֆրանսիաքնակ մալաթիացի Գևորգ Տոնապետ-
յանը այդ նպատակով մեզ ուղարկել է բարձրագույն տեքստերի մի
կապոց, որի հիման վրա մենք ստուգել ենք ամբողջ մանագրու-
թյունը:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երեք
բաժիններից (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառագի-
տություն) և հավելվածից:

1. "Նոր Մալաթիա", օրգան Մալաթիայի կրթասիրաց ընկերության,
1968, նո. 8, էջ 26:

Ներածութեան մեջ տրված են արդէ տեղեկութիւններ Մալաթիայի պատմական անցյալի և վիճակագրութեան վերաբերյալ: Մատենագրութիւնից բացի այստեղ շոշափվում է նաև Մալաթիայի բարբառի ճյուղային պատկանելութեան հարցը: Հայ բարբառագիտութեան մեջ Մալաթիայի բարբառը դասվում է կը ճյուղի բարբառների խմբում (Հ. Աճառեան¹, Ա. Ղարիբջան², էդ. Աղայան³, Ահ. Գրիգորյան⁴) : Մեր աշխատութեան մեջ առաջին անգամ ընդգծվում է այն տեսակետը, որ Մալաթիայի բարբառը պետք է դասել հայ բարբառների՝ պրոֆ. Ա. Ղարիբջանի ընդունած դասակարգման հա ճյուղին :

Աշխատութեան առաջին բաժնում քննարկել ենք բարբառի հընչիւնների փոփոխութիւնները՝ համեմատութեան եզր ընդունելով գրաբարի հնչյունական համակարգը: Աւարանութեան բաժինը ընդգրկում է բարբառի հոլովման և խոնարհման օրինաչափութիւնները և ունի նկարագրական բնույթ: Սակայն այստեղ ևս չի տեսնուել պատմական մոտեցումը, ցույց են տրված, թե բարբառի ձևաբանութեան օրինաչափութիւնները ինչ փոփոխութիւններ են կրել գրաբարի քերականութեան համեմատութեամբ:

Ստուամասիրութեան վերջին բաժինն ընդգրկում է բարբառի բառային կազմը, որի համար նյութ են ծառայել հավելվածում բերված բառարանները: Վերջում տրված են բարբառային տպուտներ:

Ինչպես նշեցինք, սույն ուսումնասիրութիւնը կատարված է հայրանադարձ մալաթիացիների անմիջական աջակցութեամբ, որոնց էլ հայտնում ենք մեր շնորհակալութիւնը: Հատկապես ուզում ենք նշած լինել մալաթիացիներ Հակոբ Ոսկերչյանին, Խոսրով Որբերյանին, Մանվել Տեր-Գողոսյանին, Գրիգոր և Հարութիւն Մարգարյաններին (հայր ու որդի), Հայկանուշ Մազմանյանին և ուրիշներին:

Մալաթիացի Հարութիւն Մարգարյանը սիրահոժար օգնել է

1. Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, Մոսկվա-նոր նախիջևան, 1911, էջ 197:
2. Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտութիւն, Երևան, 1953, էջ 413:
3. էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 404:
4. Ահ. Գրիգորյան, Հայ բարբառագիտութեան դասընթաց, Երևան, 1957, էջ 297:

մեզ՝ բարբառային բառերի բառարան և տեքստեր կազմելու գործում: Նա նամակագրութեան միջոցով Սփյուռքի իր ծանոթներից և հարազատներից բարբառային նյութեր է ստացել և արամադրել մեզ: Նրա իսկ բառերով ասած՝ իրականանում է իր վաղեմի երեզանքը՝ կորստից փրկվում է մալաթիացիների բարբառը, որի ուսումնասիրութիւնը մի տասնամյակ հետո հազիվ թե հնարավոր լիներ: Այստեղ արժե գոհունակութեամբ հիշել նաև Երևանի պետական համալսարանի դասախոս, մալաթիացի, դոցենտ Հայկազ Ժամկոչյանին, որի օգնութեամբ ստուգեցինք մեր կազմած բառարաններն ու բարբառային տեքստերը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒՄՅՈՒՆ 1

Մալաթիա բաղաբը գտնվում է հյուսիսային լայնության 38° 32' -ի և Գրինվիչից արևելք 37° -ի միջօրեականի վրա, ծովի մակերևույթից 684 մետր բարձրության վրա: Բաղաբը տարածված է լեռներով շրջապատված մի հովտում: Արևմտյան կողմում գտնվում են Աղջաղաղի, հարավում՝ Տավրոսի շարունակությունը կազմող լեռները, հյուսիսում՝ Սարի Չիչեկը և Դերսիմը, իսկ արևելյան մասի լեռները Մալաթիան բաժանում են Խարբերդից:²

Մալաթիայի հողը արգասաբեր է, ունի ինքնաբուխ ջրի առատ վաշարներ: Բաղաբի հյուսիս-արևելյան կողմով հոսում է Եփրատ գետը, որը օժանման սահում է արևելյան կողմի լեռների քղանցքից և իջնում դեպի հարավ-արևելք: Եփրատին միանում է Խոխմա գետը, որը, Աղջաղաղի լեռների միջով անցնելով, դաշտը բաժանում է նրկու մասի: Տեղական գետերից նշանավոր են Վերի և Վարի Պապուխտի (Բաբուխտի) աղբյուրները: Բաղաբում և նրա մերձակայքում կան բազմաթիվ այլ ժողովրդական աղբյուրներ: Այստեղ այգնագործության, բանջարաբուծության և պտղաբուծության զարգացման համար բնական լայն հնարավորություններ կան: Ամում են սոսի, բարդի, ընկուզանի, թթմնի և պողատու այլ ծառեր: Եանում են ցորեն, գարի, ծխախոտ, բամբակ, բրինձ և այլն:

Մալաթիան պատմության մեջ հայտնի է "Մելիաէ", "Մելիաինէ", "Մելիդիէ", "Մալդիա" անուններով: Նա ժողովրդական հնագույն բաղաբներից մեկն է և ունի պատկառելի պատմական անցյալ:

"Մելիաէ" անվան առաջին հիշատակությունը վերաբերում է 1337թ. (մ.թ.ա.): Ասորական արձանագրություններից մեկում նշված է, որ ասորական թագավոր Ասուրբալիղը այդ թվին նվաճել է Մելիաէն կամ ասորական հորջորջմամբ՝ Մալդիան:

1. Սուլեյն ակնարկը շարադրուիս օգտագործել ենք նաև Ա. Ալպոյանյանի "Պատմություն Մալաթիոյ Հայոց" գրքի, տվյալները, Բեյրութ: 2. Մ. Որբերեան, "Մալաթիա" (տես "Քիւրական", 1899, էջ 70):

1320 թվականին Մելիտինեն ապստամբում է Ասորեստանի դեմ, սակայն այն ավարտվում է պարտութամբ: Մելիտինեն այդ ժամանակ փոքրիկ, բայց ինքնուրույն պետություն էր: Մի այլ արձանագրությունից պարզվում է, որ 1260-1250թթ.(մ.թ.ա.) Մելիտինեն առանձին թագավորություն էր, որը զբաղվում է խեթների կողմից: Խեթական պետության կործանումից հետո նրա բնակորնների վրա կազմվում են մեծ ու փոքր տեղական թագավորություններ, որոնցից մեկն էլ Մելիտինեն էր: Այս թագավորությունները նրբաման միանում էին արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար, սակայն սովորաբար զործում էին ինքնուրույն: Հետագա դարերում ուժեղանում են Մելիտինեի հարաբերությունները Ուրարտուի հետ, որոնք մերթ քարեկամական բնույթ էին կրում, մերթ էլ՝ թշնամական: Ասորեստանը և Ուրարտուն Մելիտինեն դարձրել էին կռվախնձոր, քանի որ այն գտնվում էր այդ երկու նվաճողական պետությունների խաչմերուկում: Ուրարտացիների մանապարհը Տավրոսից դեպի Սիրիա անցնում էր Եփրատ գետի այն մասով, որը հարակից էր Մելիտինեին:

Ուրարտական Մենուա թագավորը (800-785 թթ մ.թ.ա.), ինչպես սրևում է իր արձանագրություններից, " . . . Մելիտե քաղաքի Եուլիեհավալի թագավորին զցեց հարկի տակ"¹ :

Ուրարտուի անկումից հետո (712-707թթ.մ.թ.ա.) ասորական Սարգոն թագավորը նորից նվաճում է Մելիտինեն, իսկ 501 թվականին Ասորեստանի կործանումից հետո այն անցնում է Մարերի կամ Մեդայացիների պետությանը: Հույն պատմաբան Հերոդոտը նշում է, որ Կիաքսարը այդ թվին նվաճեց "Վերին Նահանգները", որոնց մեջ էր մտնում նաև Մելիտինեն: 550 թվին(մ.թ.ա.), երբ կազմակերպվում է Աքեմենյան պարսից պետությունը, Մելիտինեն դառնում է նրա Նահանգներից մեկը: Դարեհ Վշաասպյանի ժամանակ այն գտնվում էր " Արմենիա" սատրապության մեջ:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ընթացքում Մելիտինեն մտավ նրա կայսրության մեջ, իսկ 301 թվականին(մ.թ.ա.), երբ Իպսոսի դաշնագրով Մակեդոնացու կայսրությունը բաժանվեց չորս մասի, Մելիտինեն դարձավ Սելևկյան ինքնակալության նա-

1. Գ. Դափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, Հայպետհրատ, 1940, էջ 151:

հանգնելից մեկը: Այնուհետև Մելիտինեն անցավ Կապուղովկիային, որի իշխանութան ներքո մնաց մինչև Տիգրան Երկրորդի աշխարհակալությունը: Տիգրան Երկրորդը 77 թվականին զրավեց ամբողջ Կապուղովկիան, այդ թվում և՛ Մելիտինեն: Սակայն 64 թվականին այն նորից անցավ Կապուղովկիային, քանի որ հռոմեական Պոմպեոս զորավարի դաշնագրով վերջ տրվեց Տիգրան Երկրորդի կայսրությանը:

Մեր թվարկության 387թ., երբ օտար նվաճողները Հայաստանը բաժանեցին Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, Մելիտինեն իր հարակից հայկական գավառներով ենթարկվեց Բյուզանդիային:

657 թվականին արաբները նվաճում են Մելիտինեն: Այդ ժամանակից սկսած Արաբիան և Բյուզանդիան անընդմեջ ճակատամարտեր են վարել Մելիտինեի համար, մինչև որ 964 թվին Բյուզանդիան վերջնականապես նվաճում է այն: Հետագա դարերում այդ քաղաքը քաղաքացի ենթարկվել է սելջուկների և մոնղոլների ասպատակություններին: 1518 թվականին օսմանյան Թուրքիան նվաճում է Մելիտինեն, որի տիրապետության տակ էլ մնում է մինչև այժմ:

Քանի որ խեթական արձանագրությունների մեջ ևս հիշատակվում է Մալդիյա կամ "Մալաթիա" անունը ("Մելիտինե" անվանը զուգահեռ), ուստի հնարավոր է, որ տեղի բնակիչները այդ դարերում Օգտաչորժեին "Մալաթիա" և "Մելիտինե" անունները, որոնցից առաջինը, հետագա դարերում գերակշռություն ստանալով, դուրս մղեց "Մելիտինե" անվանումը: Թուրքական տիրակալության շրջանում (սկսած 16-րդ դարից) այդ քաղաքը հիշատակվում է "Մալաթյա" հորջորջմամբ:

Այս համառոտ ակնարկից երևում է, որ Մալաթիայի հայերը դարեր շարունակ գտնվել են օտարերկրյա գավթիչների իշխանության տակ: Այդ արշավանքների ժամանակ քաղաքը ավերվել է, իսկ բնակիչներն էլ հարկադրաբար հստացել են իրենց բնակավայրերից: Ժիշտ է, նրանց մի մասը հեռագայում վերադարձել է իր հայրենի օջախը, քայքայ քաղաքն են ներգաղթել նաև այլ գավառների բնակիչներ, որի հետևանքով փոխվել է բնակիչների ազգային կազմը, նրանց բարբառը:

Պատմությունը Մալաթիայի հայերի բանակի մասին ոչ մի վիճակագրական տվյալ չի նշում: Այդ քաղաքի հայերի մասին

մենք տեղեկութիւններ իմանում ենք միայն կողմնակի աղբյուրներին ց կամ պատմիչների՝ այս կամ այն առիթով արած ակնարկներին ց:

Հայ և օտար պատմիչները Մելիտինեն միշտ էլ համարել են "Հայոց քաղաք", իսկ Միքայել Ասորի պատմիչը այն անվանել է "Մելիտինէ Հայոց" ¹ :

Հունա-հռոմեական աղբյուրները նշում են, որ Տիգրան Երկրորդը Կիլիկիայի և Նապաղովկիայի (որի նահանգներից մեկն էր Մելիտինեն) հունաքնակ 12 քաղաքների բնակիչներին տեղափոխեց իր նորակառույց Տիգրանակերտ մայրաքաղաքը: Այդ քաղաքների թվում չի նշված Մելիտինեն: Այստեղից կարելի է հետևութիւն անել, որ Մելիտինեի բնակիչներն այդ ժամանակ հունա-իոս չէին, այլապես Տիգրան Երկրորդը նրանց ևս կփոխադրեր իր մայրաքաղաքը: Մնում է կարծել, որ նրանք հայ էին, որովհետև այդ դարում Մելիտինեի շրջակա նահանգներում բնակվում էին հույներ, հռոմեացիներ և հայեր, և բացի այդ՝ Տիգրան Երկրորդը չէր տեղաշարժում հայ բնակիչներին:

Մելիտինեն Փոքր Հայքի կարևոր քաղաքներից մեկն էր, իսկ մեր թվարկութիւն 284թ. դառնում է նրա կենտրոնը: 390թ. Բյուզանդիայի Թեոդորոս կայսրը Փոքր Հայքը բաժանում է Երկու գավառների՝ Առաջին Հայք և Երկրորդ Հայք: Վերջինի կենտրոնը Մելիտինեն էր² : Ժիշտ է, այն ժամանակ այս Երկու գավառները չբաժան հռոմեական Հայաստանի կազմի մեջ, բայց նկատի ունենալով Մելիտինեի հայաքնակ լինելու հանգամանքը, սովորաբար այն հաշվում էին որպես հայկական տերիտորիա, Հայաստանի մի մասը: Արշակունյաց թագավորութիւն կործանումից հետո (428թ.) Մեծ Հայքի հայերը գաղթում են Փոքր Ասիայի գավառները, որոնք ավելի ապահով էին պարսկական հալածանքներից: Ինքնին հասկանալի է, որ գաղթածների մի մասն էլ բնակութիւն է հաստատում Մելիտինեում:

Բյուզանդական Հուստինիանոս կայսրը Հայաստանը բաժանում է 4 վարչական շրջանների՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք, Չորրորդ Հայք: Երրորդ Հայքի կենտրոնը դառնում

1. Միքայել Ասորի, Ժամանակագրութիւնք, Երուսաղէմ, 1871:
2. Հիւրշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 76:

է Մելիտինեն: Հուստինիանոսը Մելիտինեին " Այնպիսի փայլ
ավեց, որ ժամանակակիցները այն անվանեցին Հայաստանի գարդ¹:"

Նշենք մի այլ վկայութիւն ևս: 1045 թվականին բյուզանդական Վասիլի Բ կայսրն առաջարկում է Հայոց Գագիկ Բ թագա-
վորին՝ Մելիտինեի և նրա շրջակա նահանգների փոխարեն իրեն
գիջել Անին: Գագիկը հրաժարվում է: Արիստակես Լաստիվերոցի
պատմագիրը, որն այս դեպքերի ժամանակակիցն էր ու նկարագիրը,
պատմում է, որ Մելիտինեում այդ ժամանակ զգալի թվով հայեր
էին ապրում:

Մալաթիայի հայերի մասին վիճակագրական առաջին տվյալնե-
րը վերաբերում են 19-րդ դարի 90-ական թվականներին: Գրոֆ .
Մկրտիչ Որբերյանը, որը բնիկ մալաթիացի է, գրում է, որ 1900-
ական թվականներին Մալաթիայում 10.000 հայ կար (այսինքն
բնակիչների $\frac{1}{3}$ հասը) ² : 1915 թվականին քաղաքի հայերի թիվը
հասավ 15.000-ի: 1915թ. թուրքական կոտավարութեան կազմա-
կերպած հրեշավոր ջարդերից մեծ բաժին հասավ նաև Մալաթիային:
Քաղաքի 15000 հայ բնակիչներից հազիվ կենդանի մնաց 1000 հո-
գի, նրանց մի մասն էլ հետագա տարիներին կամ ջարդի սնթարկ-
վեց, կամ էլ մազապուրծ լինելով՝ պանդխտութեան ցուպը ձեռքին
զաղթեց օվկիանոսից-օվկիանոս, երկրից-օրկիր: Գանդուխտ մա-
լաթիացիների մի զգալի մասը ներգաղթեց Սովետական Հայաստան
և վերջնականապես բնակութիւն հաստատեց Երևանի մոտ գտնվող
Մալաթիա ավանում:

Բացի Մալաթիա քաղաքից, հայեր կային նաև շրջակա գյու-
ղերում: 1915 թվի դեպքերից առաջ հայախոս էին Մալաթիայի նա-
հանգի հետևյալ գյուղերը՝ Աղաֆի, Վարի Բարդուզի, Քիլեիզ,
Չըրմըխի, Օրդուզի, Մուշոփկա, Անսուր: Արժե նշել, որ այս
գյուղերի ո՛չ բոլոր հայերն էին խոսում Մալաթիայի բարբառով:
Բանն այն է, որ նրանց մեծ մասը այլ նահանգներից Մալաթիա էր
զաղթել 1895-96թթ. համիդյան կոտավարութեան կազմակերպած հայ
կական կոտորածների ժամանակ: Այդ գյուղերի հայերի զգալի մա-
սը նույնպես բնաջնջման սնթարկվեց 1915թ. հայկական օրհասա-
կան եղեռնի ժամանակ:

1. Ն. Ադունց, Հայաստանը Հուստինիանոսի ժամանակ, Գետեր -
օտուրգ, 1908, էջ 14 (ոռուսերսն հրատարակութիւն):
2. Քիւրաքան, 1900 թ., էջ 87:

Ակադ. Հ. Աճառյանի վկայութեամբ Մալաթիայի քարքառով էին խոսում նաև Աղիյաման կամ Հյուսնի Մանսուր քաղաքի բնակիչները, որտեղ 1915թ. 3000 հայ կար: "Աղիյամանը հայութեան հարավային սահմանն է"-գրում է Հ. Աճառյանը¹:

Ի հավելումն այս ակնարկի՝ նշենք, որ պատմական Մելիտինե քաղաքը և այժմյան Մալաթիան միևնույն աշխարհագրական տնդում չեն գտնվում: Մալաթիացիք իրենց բուն բնակավայրից բացի ունեին նաև ամառանոցներ, որոնք գտնվում էին քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ Ասրուզի կոչվող վայրում: Նրանք այնտեղ լափում էին իրենց անասունները, ունեին բանջարանոցներ, այգիներ և այլն: Ուշ աշնանը քաղաքի բնակիչները վերադառնում էին իրենց հիմնական բնակավայրը՝ Մելիտինեն, որն անվանվում էր Վարի քաղաք: Ամեն տարի Վարի քաղաքում վառելիքի և ջրի պակասություն էր զգացվում: Ծվ երբ 1839-41 թ.թ. թուրք-եգիպտական պատերազմի ժամանակ քաղաքը լցվում էր զինվորներով, տեղական բնակիչները ձմեռը ևս հարկադրաբար մընում են Ասրուզի ամառանոցավայրում: Այդ հանգամանքը պատճառ է դառնում, որ մալաթիացիք ընդմիշտ թողնեն քաղաքը՝ իրենց համար մշտական բնակավայր ընտրելով Ասրուզին: Այդ նոր բնակավայրը վերանվանվում է Մալաթիա: Իսկ բուն քաղաքը՝ Մելիտինեն (Մալաթիան) կոչվում է Վարի քաղաք (էսքի շահար): Այդ ժամանակվանից պատմական Մելիտինեն դադարում է բնակավայր լինելուց և "հիշեցնում է որպես պատմական հուշավայր, ուր մնում են նախկին պարսպի հետքերը"²:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գոլտում հրատարակվող "Բիւրակն" հանդեսի 1898 թվականի համարներից մեկում տպագրված մի հոդված մալաթիացիներին նախապաշարումների մասին³: Այնտեղ հիշատակվում է Մա-

1. Հ. Աճառյան, Հայ քարքառագիտություն, Մոսկվա -նոր նախիջևան, 1911, էջ 198:
2. "Բիւրակն", 1900, էջ 114:
3. "Բիւրակն", 1898, էջ 620:

լաթիայի բարբառի մասին ու օրինակներ բերվում այդ բարբառով (առանձին բառեր կամ ոճեր): 1899թվականին նույն հանդեսում լույս տեսան առաջին նմուշները Մալաթիայի բարբառով, որոնք պարունակում են 22 առած՝ առանց գիտական ստադարձման¹:

Մի տարի անց նույն տեղում ապագրվեց պրոֆ. Մկրտիչ Որբերյանի "Մալաթիա" հոդվածը, որտեղ "քիչ մը լեզվական", ենթազլխում հեղինակը, հիմք ընդունելով արտասանությունը, բերում է "աղավաղյալ բառերի" օրինակներ: Հեղինակը "աղավաղյալ" է անվանել այն բառերը, որոնք գրական լեզվում այլ արտասանություն ունեն: Բնիկ մալաթիացի լինելով՝ Մ. Որբերյանը հիմնականում ծիշտ է ստադարձել բաղձայնները, սակայն ծայնավորների փոփոխությունների ստադարձումը կատարել է յուրովի: Այսպես, բարբառում առկա է այ հնչյունը: Բայց բանի որ հայկական այբուբենում բացակայում է այդ հնչյունի տառը, ուստի հեղինակն այն ստադարձել է է տառով (արիւն-էրին, փոխանակ՝ արիւն>արին և այլն):

Սրանք են Մալաթիայի բարբառի վերաբերյալ գրավոր առաջին հիշատակությունները: 1900 թվականից հետո "Բիւրակն" հանդեսի հրատարակությունը դադարում է, իսկ ուրիշ հանդեսներում այդ բարբառով մեզ նմուշներ չեն հանդիպել:

Հանվելով հրատարակված վերոհիշյալ ավյալների վրա՝ ալաղեմիկոս Հ. Աճառյանը իր "Հայ բարբառագիտություն" աշխատության մեջ Մալաթիայի բարբառը դասեց կը Ճյուղի բարբառների խմբում, ավեց նրա շատ համառոտ նկարագիրը և որպես նրմուշնար վերցրեց "Բիւրակն" հանդեսում լույս տեսած առածներից 14-ը՝ ենթարկելով գիտական ստադարձման: Հ. Աճառյանը այդ բարբառին անդրադարձել է նաև իր "Հայ գավառական բառարան" ² և "Հայոց լեզվի պատմություն" (2-րդ հատոր)³ աշ-

խատություննարի մեջ՝ հիմնականում պահպանելով այդ բարբառի վերաբերյալ "Հայ բարբառագիտության" մեջ իր իսկ բերած ավյալները:

Ալաղ. Ար. Ղարիբյանը իր "Հայ բարբառագիտություն" աշխատության մեջ հստակ ենթազլխով տվել է Մալաթիայի բարբառի դերանունների հոլովման և քայերի խոնարհման համառոտ ուր-

1. Բիւրակն, 1899, էջ 772:

2. Հ. Աճառեան, Հայ գաւառական բառարան, 1913, էջ 32:

3. Նույնի, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, հ. 2-րդ, էջ 324:

վազիծը և ապա բերել այդ բարբառով մի նմուշ՝ " Թախթասուս Արթինը" վերնագրով: 1

1961թ. Բեյրութում հրատարակվեց Ա. Ալպոյաճյանի "Գա-
տմութիւն Մալաթիոյ Հայոց"2 ստվարածավալ աշխատութիւնը,
որի " Լեզվաբանական բաժնում " հրատարակված է մի նմուշ
Մալաթիայի բարբառով՝ "էշը, եզը և մշակը " վերնագրով: Գրը-
թում ի մի օն բնրված այդ բարբառի վերաբերյալ ապագրված կամ
ձևագիր բոլոր հոդվածներն ու կարծիքները: Այնտեղ գետեղ-
ված է նաև Կարապետ Բենեհյանի բարբառային քառերի ձևագիր
բառարանը՝ գրված արևմտահայ գրական լեզվով: Վերջին հանգա-
մանքը դժվարացնում է պարզելու քառերի արտասանութեան իսկա-
կան վիճակը: Բացի այդ՝ քառերի մի մասը գրական բնույթի է
և ոչ մի առնչութիւն չունի բարբառի հետ, ուստի մենք օգտը-
վեցինք այդ բառարանից խիստ զգուշորոն: Բարբառախոս մալա-
թիացիների միջոցով ստուգելուց հետո հավաստի քառերը մեցը-
րինք մեր կազմած բառարանը, իսկ կասկածելիները հանեցինք :
Սակայն իր թերութիւններով հանդերձ, Կարապետ քահանա Բե-
նեհյանի բառարանը շատ կարևոր է և վկայում է հայ մշակույ-
թին ծառայած լինելու հեղինակի ազնիվ ձգտման մասին: Տարի-
ներ շարունակ նա նվիրվել է հայ ժողովրդի մեջ լուսավորու-
թիւն տարածելու գործին: Իր ուժերի ծաղկման շրջանում էլ
նա գոհվեց 1915թ. հայկական եղեռնի ժամանակ:

Մալաթիայի բարբառի մասին մի քանի անգամ ակնարկվել
է նաև Մալաթիայի կրթասիրաց ընկերութեան օրգան "Նոր Մալա-
թիա" հանդեսի տարբեր համարներում: Հոդվածագիրներն այստեղ
բավարարվել են տվյալ բարբառի մասին արվող հասկանալի դըր-
վատումներով: Ուստի մենք նրանց վրա կանգ չենք առնում հայտ-
նի պատճառներով: Մնում է ավելացնել, որ, ինչպես Ա. Ալպո-
յաճյանն է ասում, " Մալաթիա իր անմիջական շրջակայքով կը-
նարկայացնե լեզվական տեսակետով առանձին խմբավորում մը և
ունի իր հատուկ բարբառը, որ դժբախտաբար լրջորեն չէ ուսում-
նասիրված " 3 :

1. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտութիւն, Երևան, 1958, էջ
413-417:
2. "Գատմութիւն Մալաթիոյ Հայոց" աշխատասիրութեամբ Ա. Ալպո-
յաճեանի, Բեյրութ, 1961, էջ 1157-1160:
3. "Գատմութիւն Մալաթիոյ Հայոց", էջ 1027:

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱՐՔԱՌԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՊԱՏԿԱՆՆԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՐՏԻ ՇՈՒՐՋԸ

Ակադեմիկոս Հ. Աճառյանը իր " Հայ բարբառագիտութիւն " ¹
աշխատութեան մեջ, ելակետ ունենալով բայի սահմանական
եղանակի նարկա և անցյալ անկատար ժամանակների կազմութեան
ծւր, Մալաթիայի բարբառը համարում է կը ժյուղի բարբառ:

Հենկելով Մալաթիայի բարբառի մասին մինչև 1911թ. հրա-
պարակում եղած տվյալների վրա՝ Հ. Աճառյանը հանգում է այն
եզրակացութեան, որ այդ բարբառը ունի պայթական ըրաձայննե-
րի նրու շարք՝ "թրթուրն և ռազ (ձայնեղ և շնչեղ խուլ)" ² :
Խոսելով ձևաբանութեան մասին, Հ. Աճառյանը նույն անդում
զրում է . " Քերականութեան մեջ չկրցանք գտնել առանձին հատ-
կանշանան ձևեր, և մթ հրատարակված հատվածները ³ ճիշտ են,
կրնանք ըսել, թա Մալաթիո բարբառին բարակունութիւնը առան-
ձին նորութիւններ չունի: ⁴

Սակայն նույն հոդինակի " Հայոց լեզվի պատմութեան " նը-
կըրորդ հատորում Մալաթիայի բարբառի բարբառանութեան վերաբը-
յալ հոբը-ինչ այլ կարծիք է հայտնված. " Քերականութեան մեջ
հատկանշականն այն է, - զրում է Հ. Աճառյանը, որ ա մասնի-
կով կրգում են շարունակական նարկա և շարունակական անցյալ
ժամանակներ (եէրիմ ա, եէրէի ա) " ⁵ :

Ակադեմիկոս Ար. Գարիբյանը իր Հայ բարբառագիտութիւն " ⁶
աշխատութեան "Մալաթիայի բարբառը " անթազլիխում նույնպես նը-
շում է, որ այդ բարբառը սրականում է կը ժյուղին և ա մաս-
նիկով կազմում են շարունակական ներկա և անցյալ անկատար ժա-
մանակներ: Նա միաժամանակ ավելացնում է, որ սահմանական եղա-

1. Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, Մոսկվա-նոր նախիջւան,
1911, էջ 197:

2. նույն անդում:

3. Խոսքը վերաբերում է " Բիւրակնում " հրատարակված 22 առած
ներին, որոնցով իրոք դժգար է պարզել այդ բարբառի սահմ. ե-
ղանակի նարկայի կազմութիւնը: Հրատարակված նմուշները առա-
ձանիի նարկայով են:

4. Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 198:

5. նույնի, Հայոց լեզվի պատմութիւն, 2-րդ հատոր, Երևան,
1951, էջ 327:

նակի նսրկա և անցյալ անկմտար ժամանակների շարունակական ժամանակներ կազմող ա մասնիկը գործածվում է նաև նշված ժամանակների ժխտական ձևերի կազմության մեջ¹ :

Ըստ Ար. Ղարիբյանի հնչյունաբանական դասակարգման՝ Մալաթիայի բարբառը պատկանում է տեղաշարժ-տեղափոխության խմբի երկաստիճան խլազուրկ (շնչեղ խուլներով հարուստ) սնթախմբի բարբառների շարքին: Այսպիսով Մալաթիայի բարբառի հնչյունաբանական դասակարգման վերաբերյալ Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի տեսակետները՝ ըստ էության, համընկնում են և ճիշտ են:

Ձարգացնելով բարբառների ձևաբանական դասակարգման Աճառյանի ընդունած սկզբունքը, Ա. Ղարիբյանը, ինչպես հայտնի է, հայ բարբառների ճյուղերի թիվը հասցրեց 7-ի՝ ու, լ, ս, կ, կա, հա և գրաբարատիպ²: Զանի որ հա ճյուղի բարբառները և Մալաթիայի բարբառը իր ա մասնիկով շարունակական ժամանակներ կազմելու սրևույթով համեմատության որոշ սզրներ ունեն, Ա. Ղարիբյանը գտնում էր.

" Ահա > հա ճյուղի բարբառները (1953թ. հեղինակը այդ ճյուղին վերագրեց **Քեսաթի** բարբառը, ալա հետազայում ավելացրեց նաև **Քարուսի** և **Եղեսիայի** բարբառները -Թ.Դ.) թույլ են սղել և ենթարկվել են կը ճյուղի բարբառների ազդեցության կամ բոլորովին ձուլվել են նրա մեջ ու դարձել կը ճյուղի բարբառներ, կամ սովորական ներկան կազմելու համար ընդունել են կը մասնիկը, իսկ ա > հա > ա մասնիկները թողնել են շարունակական ձևեր արտահայտելու համար, ինչպիսիք են Մալաթիայի և Համշահի բարբառները"³ :

Այսպիսով Ա. Ղարիբյանը այն կարծիքն է հայտնում, որ Մալաթիայի բարբառը սկզբում եղել է հա ճյուղի բարբառ, որը հետագայում մեթարկվել է կը ճյուղի բարբառների ազդեցությանը:

1956թ. նույն հեղինակը, բննության ենթարկելով **Քարուսի**, **Արամոյի** և **Եղեսիայի** բարբառները, հանգեց այն տեսակետին, որ **Տիզրանալարտի**, **Մալաթիայի** և **Եղեսիայի** հայ բնակչու-

1. Տես Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 415:
2. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 256:
3. Նույնի էջ 443:
4. Նույնի Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երեվան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1958, էջ 147:

թյան բարբառները պատկանում են միևնույն ասոցիացիային: Սակայն, շարունակում է Ար. Ղարիբյանը, Եղեսիայի և Մալաթիայի բարբառների տարբերությունն այն է, որ եթե առաջինը սովորական ներկան կազմում է ա մասնիկով (քրիմ ա), իսկ շարունակական ներկան կազմելու համար սկզբից ավելացնում կը մասնիկը (գը քրիմ ա), մինչդեռ Մալաթիայի բարբառում ա մասնիկով կազմում են շարունակականը, իսկ կը մասնիկով՝ սովորական ներկան **1** :

Քանի որ Հ. Աճառյանի ընդունած և հայ բարբառագիտության մեջ ավանդապես ընդունված ձևաբանական դասակարգման հիմնական հատկանիշը սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմության ձևն է, ուստի պարզանք, թե Մալաթիայի բարբառում ինչպես են կազմվում այդ ժամանակները, որով և պարզ կլինի խնդրո առարկա բարբառի ճյուղային պատկանելության հարցը:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որն ընթացքի մեջ է: Սակայն " ընթացքի մեջ" հասկացողությունը ինքնին հարաբերական է, որովհետև այն ունի այլևայլ դրսևորումներ:

Այսպես .

ա) ներկա ժամանակով արտահայտվում են այնպիսի գործողություններ, որոնք ցույց են տալիս մշտնջենական պրոցեսներ: Օրինակ՝ ձուկն ապրում է ծովում, երկիրը պտտվում է արևի շուրջը, տարւը շարժվում է քամուց և այլն:

բ) նույն ժամանակով են արտահայտվում նաև գործողություններ, որոնք տևական են միայն ժամանակի որոշ հատվածի մեջ: Օրինակ՝ ես ապրում եմ Երևանում, ամեն օր ճաշում եմ ժամը 4-ին, հորիցս նամակ եմ ստանում: Սրանք վերաբերում են ժամանակի որոշ հատվածի, ուստի հարատև պրոցեսներ լինել չեն կարող: Պայմանականորեն այն անվանենք հատվածային ներկա:

գ) Գործողություններ, որոնք կատարվել են անցյալում, բայց պատմվում են իբրև ներկա: Սրանք հատուկ են հեքիաթներին առակներին և կոչվում են պատմական ներկա (" Լինում է, չի լինում . . . "):

1. Ա. Ղարիբյան, Հայերսնի նորահայտ բարբառների մի նոր խումբ Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1958, էջ 147:
2. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, մաս Գ. Իտ. տն. 1961, էջ 95:

դ) Եվ վերջապես գործողութիւններ, որոնք սկսվել են և այժմ՝ տվյալ պահին, ընթացքի, պրոցեսի մեջ են: Սրինակ՝ գրում եմ (այժմ), խոսում եմ (հիմա), գնում եմ (այժմ) և այլն: Այս վերջինը ընդունված է թնվանել շարունակական ներկա, ի տարբերութիւն բուն կամ սովորական ներկային, որն ընդգրկում է ներկա ժամանակով արտահայտող բոլոր երևույթները:

Մալաթիայի բարբառի այժմյան վկաները՝ բարբառախոս մալաթիացիները, չեն տարբերում սովորական ներկան և շարունակականը, մինչդեռ նրանց տարբերութիւնը պարզորոշ երևում է կը ճյուղի մի շարք բարբառներում՝ Պոլսում, Համշենում, Տրապիզոնում և այլն ¹ :

Մալաթիայի բարբառում սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմելու համար խոնարհվող բային հարադրվում է ա հետադաս գործածութիւն մասնիկը, իսկ ծայնավորով սկսվող բայերի սկզբում, բացի այդ մասնիկից, ավելացվում է կ>զ-ն (փէրիմ ա, գէրթամ ա, գըսիմ ա և այլն) :

Բերսնք մի քանի օրինակներ.

Սարգիս Զուրիկյանը ծնվել է Մալաթիայում 1904 թվականին և գաղթել այնտեղից 1929թ.: Մեր այն հարցին, թե որտեղ է աշխատում իր որդին, նա պատասխանում է. " իմ դըղաս վարժադուն՝ գէրթա յա " (այսինքն դպրոց է գնում՝ սովորում է): Սա սովորական ներկա է, քանի որ խոսքը վերաբերում է ո՛չ թե նրա որդու կատարած աշխատանքին տվյալ պահին, այլ ընդհանրապես:

Հարց. - Զեր հին լեզվով (իմա՝ բարբառով) ո՞վ է լավ խոսում.

Պատասխան. - Միր հին լէզուն՝ չիքնա գուրցիր ա, ամմա իմ ախարըս միր հին լէզվօք ազգէզ գուրցէ յա: (Պատասխանում է Արուսյակ Խաչատրյանը, որը Մալաթիայից գաղթել է 25 տարեկան հասակում և այժմ ընակվում է Եսհումյանի շրջանի նոր Մալաթիա ավանում):

Հարցնում ենք մալաթիացի Հակոբ Անթեպյանին. - Դուք ծրխում եք.

1. Հ. Աճառյան " Լիակատար քերականութիւն հայոց լեզվի ", հատոր 4, մաս Բ, Երևան, 1961, էջ 97-98:

Պատասխան. - Իս ջըղարա ¹ խըմիմ ա, ամմա հիմա քօվըս չիգա :

Բերսնք մի քանի օրինակներ էլ Ա. Ալպոյաճյանի "Պատմութիւն Մալաթիոյ Հայոց" գրքից .

" Մընագ թուն մէր թասային ա չիս հայիր, չիրփի քէս հավերուդ հէդ քէֆ գէնիս ա "2 :

" . . . Չունքի զընիզը շող սիրէ յա "3:

Մի հատված էլ բերսնք ֆրանսիաքնակ մալաթիացի Գ. Տոնապետյանի ձեռագրից.

" Բըզդիգուց դըրա միք չըջօղ էդած աղիննիս քէդ գէրթայաք ա : Հօնգի բըզդիգ ախչինները հօփ-հօփ խաղային ա, գըզըզուք նըստէյին, ցառքէրնին ձունգէրնուն գէնէյին, խաղ գանչէյին ա :

Դըրա էրէգվան քէս միակըս գուքա յա

էն թաղին ախչինները

նըստիր խալի քօրձէն ա " . . .

Այս բուրդից կարսլի է հանգել այսպիսի եզրակացությունների :

1. Մալաթիայի բարբառը եղսլ է կը ճյուղի բարբառ, այսինքն՝ նսրկա ժամանակը կազմել է կը մասնիկով: Մարունակական ժամանակների կազմության համար այդ բարբառը չա ճյուղի բարբառներից վերցրել է ահա>հա մասնիկը, ապա կրճատել հ-ն, քանի որ բարբառում այդ հնչյունը ընկնում է կամ թույլ

հնչում ունի: Սակայն քանի որ կը մասնիկը միաժամանակ գործածվում է նաև պայմանական եղանակի ժամանակներ կազմելու համար, ուստի այս երկու եղանակների նույնացման վտանգը հավանաբար ազդել է, և ա մասնիկը իր գործածության շրջանակները ծավալել, ընդհանրացրել է՝ ընդգրկելով սահմանական եղանակի ներկա ժամանակը ընդհանրապես: Այլ խոսքով ասած՝ բուն ներկան և շարունակականը նույնացել են: կը մասնիկով նսրկա ժամանակներ կազմելու երևույթը, միշտ է, դադարեց

գործելուց, քայք իր հատըր թողեց ժայնավորով սկսվող բայն-

1. Ջըղարա խըմել = սիգարետ ծխել:
2. Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց , էջ 1190:
3. նույն տեղում:

րի խոնարհման մեջ , որտեղ կ>զ-ն պարտադիր է :

2. Կարելի է ենթադրել նաև հակառակը, այսինքն՝ Մալաթիայի բարբառը եղել է հ ծյուղի բարբառ, սակայն ընկնելով կը ծյուղի բարբառների զորեղ ազդեցութեան ուղորտը, ներկա ժամանակը կազմել է այդ ծյուղի բարբառների նման, իսկ հ - ի ա-ն պահպանել է շարունակական ժամանակների կազմութեան համար, ապա ընդարձակվել է շարունակականի զործածութեան ծավալը և այն փոխարինել է բուն նսրկային :

Քանի որ հայ պարբերական մամուլում Մալաթիայի բարբառով համարյա հրատարակված տեքստեր չկան , ուստի ոչինչ ասել չենք կարող նրա նախկին վիճակի մասին :

Արդ , մեր ուսումնասիրութիւնները մեզ հանգեցրին հետևյալ եզրակացութեան .

Մալաթիայի բարբառը դասվում է հ ծյուղի բարբառների շարքը , քանի որ այդ բարբառի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմութեան ժամանակ զործածվում է ա հ ա բառամասնիկը : Ապա՝ բարբառի ներքին օրինաչափութեամբ (տես § 145), բառակապակցութիւնների մեջ ընկնում է այդ մասնիկի հ-ն : Այսպիսով ա հ ա բառից մնում է միայն բառավերջի ա-ն :

Այդ բարբառը ընկնելով կը ծյուղի բարբառների ազդեցութեան ուղորտը, նրանցից յուրացրել է կը>զ-ն և օգտագործել միայն ձայնավորով սկսվող բայերից առաջ : նախ՝ ստեղծվել է մի համաչափութիւն, ըստ որի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում բոլոր բայերն սկսվում են բաղաձայնով (փէրիմ աի գէրթամ ա, զըսիմ ա, փէրէյի յա, գաղայի յա, զըսէյի յա և այլն), ապա պայմանական եղանակի ապառնին սահմանազատվել է սահմանական եղանակի ներկայից . այսպես՝

- իս զըփէրիմ - "ես կբերեմ" - պայմանական եղանակ
- իս փէրիմ ա - "ես բերում եմ" - սահմանական ներկա
- ին գէրթամ - "ես կզնամ" - պայմանական եղանակ
- իս գէրթամ ա - "ես զնում եմ" - սահմանական ներկա

Այստեղից հետևութիւն . ա մասնիկով սահմանական եղանակի նսրկայի և անցյալ անկատարի շարունակական ժամանակներ

կազմելու վերաբերյալ Հ. Աճառյանի և Ա. Ղարիբջանի ընդունած տեսակետը պետք է վերանայել՝ քանի որ նրանց կողմից դիտված շարունակական ներկան իրականում սովորական կամ բուն ներկա է:

Հետևաբար պետք է վերանայել նաև Մալաթիայի բարբառի տեղը հայ բարբառների ձևաբանական դասակարգման համակարգում: Այն պետք է դիտել ոչ թե կը ծյուղի բարբառ, ինչպես մինչև այժմ է դիտվել հայ բարբառագիտության մեջ, այլ որպես հա ծյուղի բարբառ :

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Լ Ո Ւ Ն
Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Ք Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Ռ Ա Յ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

1. Մալաթիայի բարբառն ունի 39 հնչյուն:

Չայնավորներ՝ 9 - ա, օ, է, ու, ի, ը, փ, փլ, օ

Բաղաձայններ՝ 30՝ բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, ժ, ջ, ծ, ճ, ճ, ց,

չ, վ, զ, ժ, ղ, ֆ, ս, շ, խ, հ, լ, մ, ն, ռ, ու, յ

2. Ա-ն ունի կոշտ արտասանություն, լեզվի ստորին բարձրացմամբ: Ա-ն առաջին շարքի ստորին բարձրացման քմային ձայնավոր է և արտասանվում է աղրբեջաներեն հնչյունի նման: Այն փոքր-ինչ մոտենում է առաջնային շարքի միջին բարձրացման է ձայնավորին: Ա հնչյունը, քացի փոխառյալ բառերից, հանդիպում է նաև այ ներկայացրածի պարզեցման դեպքում և ը ձայնորդից առաջ: Բարբառում առկա են նաև փլ, օ հնչյունները, որոնք հիմնականում գործածվում են ցուցական դերանունների հոլովման և իբրև ստացական դիտված դերանունների մեջ: Նրանք արտասանվում են ինչպես գերմաներենի փլ և օ ձայնավորները: Բարբառը չունի ներկայացրածներ և եռարարբառներ, ոչ էլ շնչեղ ձայններ:

3. Գրաբարի և Մալաթիայի բարբառի պայթականների և պայթափականների համեմատությունը հետևյալ պատկերն է տալիս.

Գրաբար	Բարբառ
Չայնեղներ՝ բ, գ, դ, ժ, ջ	Չնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, ջ
Խուլներ՝ պ, կ, տ, ժ, ճ	ա) անկախ դիրքում ձայնեղներ՝ բ, գ, դ, ժ, ջ
	բ) ս, շ, խ-ից հետո կամ ք-ից առաջ խուլներ՝ պ, կ, տ, ժ, ճ
Շնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, ջ	Չնչեղ խուլներ՝ փ, ք, թ, ց, ջ

Այս համեմատությունից երևում է, որ անկախ դիրքում, այսինքն բառասկզբում, բառամիջում՝ ձայնավորների միջև,

բառաւորը չուի խուլ հնչյուններ չկան: Գրաբարյան խուլներն այդ դիրքում ձայնեղանում են: Սակայն ս, շ, խ հնչյուններից հետո, հավանաբար նրանց ազդեցութեամբ, հին հայերանի խուլների արտասանութիւնը մնում է անփոփոխ: Նույնն ենք նկատում նաև շրնչնդ խուլ ք-ից առաջ գտնված խուլների արտասանութեան ժամանակ, որտեղ խուլները, անփոփոխ մնալով, իրանց հարթին ազդում են ք-ի վրա և դարձնում այն կ:

Գրաբարյան ձայնեղաններին բարբառում համապատասխանում են շնչեղ խուլները: Այսպիսով բարբառն ունի երկու բնույթի շնչեղ խուլներ՝ բուն և ձայնեղազրկումից առաջացած: Սակայն նկատուի է, որ ե < բ, բ < գ, թ < դ, չ < ջ և ց < չ հնչյուններն ունեն ձայնեղութեան որոշ երանգ, այնինչ փ < փ, ք < ք, թ < թ, չ < չ, և ց < ց հնչյունները զուրկ են այդ նրանգից: Հետևելով ավանդական հայ բարբառագիտութեանը, մենք ձայնեղազրկումից առաջացած հնչյունները տառադարձում ենք շնչեղ խուլներն արտահայտող տառերով: Սակայն թվում է, որ փ < բ, ք < գ և այդ կարգի այլ հնչյուններն իրենց որակով տարբերվում են բուն շնչեղ խուլներից: Փորձառական հնչյունաբանութեան տվյալների բացակայութեան պատճառով մեզ համար դժվար է այդ տեսակետի հաստատման համար անհրաժեշտ փաստարկներ բերել: Ուստի մնում է մեզ հիմնվել միայն մեր լսողական տպավորութիւնների վրա, որոնք կարող են նաև անհատական ընկալման հատանք լինել: Թյուրիմացութեան հետևանքով համար մենք բազմիցս այդ հարցով դիմել ենք մալաթիացիներին: Մալաթիացի Հարություն Մարգարյանը, որը մանկութեան տարիներին խոսում էր միայն մալաթիայի բարբառով, մեզ հայտնեց, որ ինքը հանգել է նաև հստակալ եզրակացութեան. հին հայերանից պահանջված շնչեղ խուլներից հետո ձայնավորներն ավելի բաց են արտասանվում, քան այն ձայնավորները, որոնք հաջորդում են հին հայերանի ձայնեղաններից ստացված շնչեղ խուլներին: Այսպիսով թաս > "թաս" բառի մաջ ս-ն ավելի բաց է հնչվում, քան թաս > "դաս" բառի մաջ:

1. Մեզանից անկախ նույն կարծիքին է հանգել նաև պրոֆ. Է. Աղայանը, միայն տարբեր են մեր մեկնաբանութիւնները. տես է. Աղայան, Գրաբարի բերականութիւն, 1-ին մաս, Երևան, 1964, էջ 152-153: Տեսականորեն նույն կարծիքին է հանգել նաև պրոֆ. Գ. Զահուկյանը. տես "Հայ բարբառների բաղադրական համակարգի ծագման հարցի շուրջը, Вопросы Языкознания" №6, 1960, էջ 48:

Այնուհանդերձ այս հարցը դեռևս մնում է շփուլած, և մեր փորձառական հնչյունաբանության մասնագետների ուշադրութիւնը ենթ հրավիրում:

Մյուս հնչյունների արտասանութիւնն առանձնապէս չի տարբերվում նրանց զրական արտասանութիւնից:

4. Մալաթիայի բարբառում շեշտը սովորաբար լինում է վերջին վանկում. օրինակ՝ գետին>քէղին, գինի>քինի, գարի>քարի, փողորակ>փորղանք, ոսկր>օսկօր, ակոթ>արգօ, լիտր>լիղիր և այլն: Եթե վերջին վանկի ծայնավորն է ը, ապա շեշտը լինում է վերջընթաց վանկում. օրինակ՝ ծանր>ծանդր, բարձր>փանձր և այլն:

Նույն ձևով էլ շեշտը այն բառերի վերջին վանկումն է լինում, որոնց վերջընթաց վանկի ը-ն նախորդ կամ հաջորդ վանկի ծայնավորնարի առնմանութեամբ հնչյունափոխվել է այլ հնչյունների. օրինակ՝ կծու>զուձու, դղում>թութում, սնդուկ>սունդուկ, փնթի>փինթի և այլն:

Եթե բարդ բառերի սրկրորդ բաղադրիչը միավանկ բառ է, ապա շեշտը լինում է վերջին վանկում: Այդպես էլ եթե այն երկվանկ է և վերջընթաց վանկի ծայնավորն է ը, նույնպես շեշտվում է վերջին վանկի ծայնավորը. օրինակ՝ լօսձագ, փարլօս, մուրչումփօն, թըթիւմէր, փառնզոն, խօնջընթասկ և այլն:

Եթե բարդ բառերի սրկրորդ բաղադրիչը երկվանկ բառ է, շեշտը լինում է վերջընթաց վանկում. օրինակ՝ էրզուշփթի:

Անորոշ դերբայների շեշտը վերջընթաց վանկումն է, սակայն խոնարհման ժամանակ այն անցնում է վերջին վանկը-օրինակ՝ փէրէլ, գարթալ, աղնէլ, աղալ, էշնալ, սիրէլ, փէրիմ ա, գարթամ ա, աղամ ա, սիրիս ա, փէրէ՛յա, գարթա՛յա, խօսած, իչա, աղնիմ, աղնած, գէրթամ, զուղիմ, մաոցա, թարցա և այլն:

Իսկ եթե անորոշ դերբայի վերջընթաց վանկի ծայնավորն է ը, ապա շեշտը լինում է վերջին վանկում: Օրինակ՝ գրել>բըրէլ, ասել>ըսէլ, նստիլ>նըստիլ, լիգել>լըգէլ, հիւանդանալ>հըվըդնալ և այլն:

- Անալ բայածանցով կազմված դերբայների բարբառային ձև-վերում շեշտը նույնպես լինում է վերջընթաց վանկում. օրինակ հնանալ>հիննալ, լուսանալ>լօսնալ, խլանալ>խոլլնալ, գողանալ>բօղնալ և այլն: Բազմավանկ բառերում, որտեղ վերջընթաց վան-

կի ծայնավորն է ը, շնշտը լինում է վերջին վանկում .օրինակ՝
բարձրանալ > փանձորնալ, կրճաւ > զըջըրդալ, սրկայնանալ > էր-
զըննալ, կոտորատել > զօղըրդէլ և այլն :

Գրական կամ կրոնական բառերում պահպանվում է գրական
լեզվի շնշտը . օրինակ՝ Աստուածածին > ասվածածին, Զրիստոս >
Զրրիստոս, առաքյալ, փամբասանք, ավագան (մկրտուիյան), մարքա-
րէ, ավանագ, բաղարաք և այլն :

Հ Ն Չ Յ Ո Ռ Ն Ա Փ Ո Խ Ո Ռ Թ Յ Ո Ռ Ն

Ա. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ա

5. Գրաբարի ա ծայնավորին մալաթիայի բարբառում սովո-
րաբար համապատասխանում է ա . ինչպես՝

Բառասկզբում՝ ալիւր > ալիր, աղաղ, ամպամբ, անուն >
անուն, աչք > աչկ և այլն :

Բառամիջում՝ բան > փան, զարի > քարի, դանակ > թանակ, կա-
տու > գաղու, հաց > հաց և այլն :

Բառավերջում գրաբարի ա-ն պահպանվել է բայերի եզակի
Թվի հրամայականում և ցուցական դերանուններում՝ աղա > աղա՛ ,
գնա > քընա՛, խաղա > խաղա՛, սա > սա , նա > նա :

Միավանկ և երկվանկ բառերի բառամիջի ա-ն, իբրև կանոն,
մնում է անփոփոխ . օրինակ՝ աղալ > աղալ, բարի > փարի, բարձր >
փանձոր, բերան > փէրան, գազան > քազան, գերան > քէրան, խարշել >
խաշէլ, ծանր > ծանդըր, ծափ > ծափ, նակատ > շազաղ, ներմակ > շէրմագ,
նշալի > շընչալ, մարդ > մարթ, մարդակ > մարթագ, շարդ > շարթ, բար >
բար, բարշել > քաշէլ և այլն

6. Եռավանկ բառերի երկրորդ վանկի ա ծայնավորը սղվում
է, եթե առաջին և երկրորդ վանկը բաց են և հնչյունափոխվում
է ը-ի, եթե նրանցից որևէ մեկը փակ է (վերջին դեպքում ը-ն
հանդես է գալիս բաղաձայնների կուտակման հետևանքով) . օրինակ՝

1) Ազանիլ > հաքնիլ, առաջեալ > առչէվ, առաջի > առչի, արտա-
սուր > ալցունք, բաժանել > փաժնէլ, բաղանիք > փաղնիք, բանալի >
փալլի, բուսանիլ > փուսնիլ, նլանել > էլլալ, երանեակ > էրնէգ,
Թաթախել > Թախտէլ, խածանել > Խազնէլ, կանաչիլ > զանչիլ, կոմակել >

զօժօզէլ, հաւանել չհաւանել, հաւասար չհավասար, հաւատալ չհավդալ, շալակել չշալագէլ, ուսանիլ չուսնիլ, պագանել չբարնել, պատակիլ չբողակիլ, պարապել չբարբէլ, սատակել չսաղակել, սպանանել չբաննել, տակակել չդարգէլ, տեսանել չդէսնալ, ցամաքիլ չցամքիլ, փաթակել չփաթտել, քառասուն չքառսուն և այլն :

2) Առաջնեակ շառչընէգ, արծակել շարցըգէլ, դատարկել շարղըգէլ, ծակծակել շագձըգէլ, կաթկաթիլ շաթգըթիլ, կողանդել շաղընդէլ, կարկատան շարգըղան, հարսնացու շարսոնցու, մակարդել շագըրթէլ, մարգարիտ շարբըրիդ, պարտակել շարղըգէլ, վագվգել շագվըգէլ, վաստակել շաստըգէլ և այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Անկանիլ չիյնալ բառի մասին տժժ §16 և 155, իսկ անցանել շասնիլ բառի մասին՝ § 155:

Հարսանիք շարսնիք բառում, չնայած առաջին վանկը իսկ է, ա-ն սղվում է :

7. Երկվանկ գոյականների սրկրորդ վանկի ա-ն իւրման ժամանակ սղվում է (կամ փոխվում ը-ի), եթե առաջին վանկի ձայնավորը ա կամ է հնչյուններից որևէ մեկն է. աշխարհ(ք) շաշարբ - աշխըրբի, արագակն շարբագ - արբըգի, դանակ շանակ - իանգի, ճակատ շլագաղ - շագղի, շաբաթ շախաթ - շափթըվա, շալակ շալագ - շալագօղ, բերան շիէրան - փէրնի, գերան շբէրան - բէրնի և այլն :

Իսկ եթե երկվանկ բառերի առաջին վանկի ձայնավորը ու կամ ը (գաղտնավանկ) հնչյուններից մեկն է, սրկրորդ վանկի ա-ն իւրման ժամանակ մնում է անփոփոխ. օրինակ՝ կրակ շգըրագ - լըրագի, նրագ շըրոթ - չըրթի, մկրատ շմըրոթ - մըրթի - մըրթա - դէլ, ուրբաթ շուրփաթ - ուրփաթվա, ուրթագ շուրթ - ուրթի և այլն :

8. Ան նախածանցով կազմված բառերի միջին վանկի ա-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ անտօթ շանտօթ, անտակ շանտակ, անաստուած շանասված, անարատ շանարող, անդադար շանդար, անհամբեր շանհամբէր, անմահական շանմահական և այլն : Անալի շաննի, անագակ շամրագ բառերում ան նախածանցի իմաստը միտքով չէ, և այն դադարն է իրրև մտապահ անասնց գիտակցություն : Երբեմն ժամանակ, քանի որ քարքառում առանձին գործ մե անվում աղ, ուղի բառերը, ուստի ուղի մեք այլուս չի գաղաղցվում ուղի ձևի հետ, և անալի շաննի բառը գիտակցվում է իրրև պարզ բառ : նույն

ձևով էլ իբրև պարզ է ընկալվում ամբողջ բառը, որովհետև նրա արմատը՝ ապակ (ապականել), ինքնուրույն գործածություն չունի :

9. Բարբառում սովորաբար բարդ բառեր սն կազմվում առանց ա հոդակապի, ինչպես՝ աղաջուր>ախշոտ, ականջախուլ>անգաշխուլ, ժամակոչ>ժանգոչ, լայնասիրտ>լանսիրդ, կրակասեր>զըրագսէր (խմորի տեսակ է), մոխրաջուր>մախիրշոտ, նսդասիրտ>նեխսիրդ, փագմադ, շօրթան, բարգից (պասկից "հարևան") և այլն:

10. Գրական կամ կրոնական բառերի ա հոդակապը մնում է անփոփոխ. ինչպես՝ աստուածածին>ասվածածին, երազահան>էլածահան, իւղաբեր>օղափէր, կնքպապ>կընքաբաբ, համբերատար>համփէրադար, հոգաբարձու>հօքափարցու, մայրապետ>մայրաբէդ, վարժատուն>վարժողուն, վարժապետ>վարժաբէդ, վերնատուն>վէրնադուն և այլն:

Վարդավառ>վարթրվառ բառում ա-ն չի գիտակցվել որպես հոդակապ: Համախակի գործածության հետևանքով այդ բառը մնալով վաղ է բարբառի նարբին այն օրինաչափությանը, ըստ որի ա-ն հնչյունափոխվում է ը-ի, առաջին վանկը փակ լինելու պատճառով (տես § 6) :

11. Ակտն և ացի վերջածանցներով կազմված բառերի ածանցի ա-ն նույնպես մնում է անփոփոխ. այնպես՝ ամսական>ամսագան, վաճառական>վաչառագան, քերական>քէրագան, նրնքական>իրէքագան, երկուական>էրգուքագան, գիւղացի>քէղացի, դրացի>ըրրացին, լեւացի>լէլացի և այլն, բայց՝ լալական>լալգան, քաղաքացի>քախկըցի:

12. - Անոց վերջածանցով կազմված բառերի ածանցի ա-ն սղվում է . այս ածանցին բարբառում համապատասխանում է նոց-ը: Վրանով կազմված բառերը բաժանվում են երկու խմբի:

ա) Զառական թվականներ՝ մէգնօց, էրգուքնօց, դասնօց, քրսաննօց, հարիրնօց և այլն: -նօց ածանցով սն կազմվում նաև 70, 80, 90-ի շահականները՝ յեթմիշնօց, սաքսաննօց, ութսուննօց, շնայած այդ թվականների արմատները փոխառյալ սն թուրքերենից:

բ) -նօց ածանցով կազմված գոյականներ կամ ածականներ ինչպես՝ հավնօց, սուղնօց "թանկություն", վառնօց "ստոր",

աղղօղնօց, հէքթոյց "ղարմանանոց", շուկնօց և այլն :

13.-Անալ-ոմ վերջավորվող բայերը ըստ բնույթի լինում են բուն բայեր և անվանական բայեր:

Բուն բայերի ածանցի ա-ն կարող է սղվել, հնչյունա-
փոխվել ը-ի կամ մնալ անփոփոխ. օրինակ՝ դիմանալ > թիմանալ,
զարմանալ > զարմանալ, իմանալ > իմանալ, հասկանալ > հասկընալ,
մոռանալ > մոռնալ, ուրանալ > ուրանալ և այլն :

Անվանական բայերում, որոնք մեծ մասամբ կազմված են
ածականների արմատներից, սղվում է անալ-ի առաջին վանկի
ա-ն. հնչվես՝ աղքատանալ > ախկաղնալ, անուշանալ > անուշնալ,
արթնանալ > արթըննալ, աւելանալ > էվէլնալ, բարձրանալ > փանձոր-
նալ, գողանալ > քողնալ, երկայնանալ > էրկըննալ, զգուշանալ > ուս-
կուշնալ, թօթեվանալ > թէթէվնալ, թուլանալ > թօլնալ, լայնանալ >
լաննալ, լուսանալ > լօսնալ, խլանալ > խուլնալ, խորանալ > խօրուն-
նալ, կարծանալ > զարմնալ, կշտանալ > զուշտնալ, հաստանալ > հաս-
տընալ, հնոռանալ > ֆարռլեննալ, հիւանդանալ > հըվըղնալ, հնանալ >
հիննալ, մեծանալ > մագնալ, մթանալ > մութնալ, շատանալ > շաղ-
նալ, ուժովանալ > ուժօքնալ, սւանալ > սիվնալ, սղանալ > սուղնալ,
տաքանալ > դաքնալ, ցածանալ > ցազնալ, ցրտանալ > ցուրդնալ, բշտ-
նալ > բիշնալ և այլն: Բացառություն է ծնրանալ > ձէրանալ բառը:

14.-Աւոր վերջածանցով կազմված բարբառային բառերում
ածանցի ա-ն սղվում է, իսկ գրական բառերում այն մնում է ան-
փոփոխ. այսպես՝

Բարբառային բառեր - եկաւոր > էգվօր, թագաւոր > թաքվէր
"հատուկ անուն", ծոցաւոր > ձօսվոր "հղի", մանալաւոր > ջաշ-
վօր, շատավոր > շաղվօր, պակասաւոր > քօզասվօր "օրապակաս":

Գրական բառեր - գլխաւոր > քըլիւվէր, թագաւոր > թաքվէր,
կնդձաւոր > գեղձավօր, հարկաւոր > հարգավօր ("արտաքնոց"), մեղա-
ւոր > մեղավօր, ուխտաւոր > ուխտավօր, փառաւոր > փառավօր:

15. Երկվանկ բառերի միջին վանկի ա-ն մի խումբ բառերում
մնում է անփոփոխ: Իլանք մեծ մասամբ գրական-կրոնական բառեր
են, մի քանիսն էլ՝ ընդհանուր հայերեն բառեր. օրինակ՝ ազա-
տել > ազաղէլ, ապաշխարանք > արաշխարանք, ապառաժ > արառաժ, առա-
քեալ > առաքյալ, Առօրէլ, աւագան > ավագան, բամբասանք > փամբասանք,
ընտանիք > ընդանիք, խայտառակ > խայդառակ, խոստովանիլ > խօստօ -

վանիլ, կիւրակէ՛գիրագի, հակառակ՛հագառագ, համբարծում՛
համփարցում, հրամայել՛հըրամմէլ, մարգարէ՛մարքարէ, միիթա-
րանք՛մըխթարանք, մուրացկան՛մուրասկան, յաւանակ՛ապանագ, յի-
շատակ՛իշադագ, նահատակ՛նահդագ, նաադագ, նաւակատիք՛նավա-
զադիք, պահպանիչ՛բահրանիչ, պատարագ՛բադարաք, սատանայ՛սա-
դանա, սրբազան՛սուրփազան, վարագոյր՛վարաքուր, տապանակ՛
դարանագ և այլն :

16. -Ա ձայնավորը կրօլ է նաև հետևյալ մասնակի հնչյու-
նափոխութիւնները.

Ա>օ. ր-ից առաջ մի քանի բառերում ա-ն քմայնանում է
և հնչվում ինչպես առաջին շարքի ստորին բարձրացման ձայնա-
վոր օ . դրանք են՝ արիւն՛արին (արինդէր, արինթաթի, արի-
նօդ), հարիւր՛հարիր, թարթիչ՛թարթիչ, թարթօլ՛թարթէլ, շարել՛
շարէլ, սարբինայ՛սարփէնի, ինչպես նաև թափել՛թփէլ և շա-
պիկ՛շարիք բառերում:

Ա>է . առնել՛էնէլ, աւել՛էվէլ, աւերել՛էվրէլ, յարդ՛
հէրթ, յարդանոց՛հէրթնօց, պահել՛բէյիլ, արծաթ՛էրծաթ: Վեր-
ջին բառը կազմվել է երկաթ՛էրզաթ բառի նմանակութեամբ: Գերեզ-
ման՛քէրէզմէր բառում գործում է ձայնավորների լիակատար ներ-
դաշնակութեան օրսնքը:

Ա>ը . ասել՛ըսէլ, կարել՛կարծնալ՛գըրնալ, կողանդ՛գա-
ղընդ, տարգալ՛թըբալ, տանեցիք՛ղընէցիք, լակել՛լըգէլ:

Ա>օ . անարգել՛անօրբէլ, թառամիլ՛թօումիլ: Այս բառերը
հավանաբար անցել են նարբնողի բարբառից, որտեղ ա>օ հնչյու-
նափոխութիւնն Օրինաչափ է ¹ : Զրորդան՛չըրթօն բառում վեր-
ջին վանկի ա-ն բառամիջի ո>օ -ի առնմանութեամբ դարձել
է օ , ապա ըստ § 39-ի սղվել է բառամիջի ո>օ-ն ՝ ջրորդան՛
չըրթօթօն՛չըրթօն : նույն ձևով էլ կամար և տոտիկ բաղադրիչ-
ներից կազմված զօմըուօղիզ "ծալապատիկ նստած" բառում առա-
ջին վանկի ա-ն դարձել է օ , իսկ երկրորդ վանկի ա-ն՝ սըղ-
վել : Զարմաղ՛ցօրմաղ բառում ա>օ -ն առաջացել է առաջին բա-
ղադրիչի մոզովրուական ստուգաբանութեան ընկալմամբ՝ իբրև ցո-
1. Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատոր 1, Երևան, 1926, էջ
637:

րենի մաղ:

Ա>ի անկանիլ >իյնալ բառում սղվել է բառամիջի ա-ն, բառասկզբի ա-ն վերջին վանկի ի-ի նմանությամբ դարձել է ի, նկ հնչյունափոխումը ըստ § 92-ի դարձել է յ, ապա փոխվել է լ ծորդությունը՝ անկանիլ >ինկնիլ >իյնիլ >իյնալ :

Ե

17. Բառասկզբի ե-ն միավանկ և բազմավանկ բառերում հիմնականում հնչվում է ինչպես է օ այսպես՝ ելանել >ելլալ, եպիսկոպոս >էքիսկոբոս, երազ >էլաձ, երանեակ >երնէգ, երդնուլ >երթըմնալ, երդումն >երթում, երես >երէս, երևիլ >երվալ, երէկ >երէգ, երթալ >երթալ, երկաթ >երգաթ, երկայն >երգան, երկայնք >երգանք, երկինք >երգինք, երկու >երգու, Երուսաղէմ >էրսաղըմ, եփել >էփէլ և այլն:

Գրական բառերում ե-ն հնչվում է ինչպես յ է օ երգ >յերք, երջանիկ >յերջանիգ:

18. Բառասկզբի ե-ն կրել է նաև հետևյալ մասնակի հնչյունափոխությունները. երեք >իրէք և երեքշաբթի >իրէքշաթի բառերում առաջին վանկի ե-ն երկրորդ վանկի ե-ի տարնմանությամբ հնչյունափոխվել է ի-ի:

Երիցակին >իրիսգին և Եղունգն >ուղունգ բառերում երկրորդ վանկի ձայնավորների առնմանությամբ բառասկզբի ե-ն համապատասխանաբար հնչյունափոխվել է ի-ի և ու-ի:

Երեսուն >աոսուն բառի ե >ա հնչյունափոխությունը բացատրվում է քառասուն >քաոսուն բառի նմանակությամբ:

Եղբայր >ախփար բառում ե-ի դիմաց բարբառն ունի ա :

Ե >ա հնչյունափոխությունը հատուկ է կը ծյուղի շատ բարբառների: Դեռևս զրաբարում բառասկզբի ղ-ից առաջ բառերը կարող էին ստանալ ե կամ ա հնարանը. ինչպես՝ եղազ // աղազ, Եղինճի աղինճ: Եղբայր >ախփար ձևն ըստ Հ. Աճառյանի կազմվել է հին հայերենի աղբայր երկրորդական ձևից:

Երեկոյ >ուռունգուն բառում ն-ի հավելմամբ ոյ-ը երկ- 1. Հ. Աճառյան, Քննություն Գուսաֆայ բարբառի, Երևան, պետ. համալսարանի հրատարակչություն, 1941, էջ 35: .

բարբառային դիրք զրավելով՝ հնչյունափոխվել է ու-ի այս վերջինի առնմանությամբ էլ բառասկզբի և բառամիջի ե ձայնավորները դարձել են ու: Երբ>յափ բառում ե-ի դիմաց բարբառը ունի յա (ը-ն ընկնում է): Բառասկզբի ե-ն հնչյունափոխվել է ի-ի հետևյալ օժանդակ բայերում՝ եմ>իմ, նս>իս, եմք>ինք:

19. Միավանկ և երկվանկ բառերում բառամիջի ե-ն սովորաբար հնչվում է որպես է (բացառությամբ ու-ից առաջ գտնված դիրքի)․ այսպես՝ արեթ>ափէթ, ածել>հածէլ, աներ>անէր, բերան>փէրան, բերել>փէրէլ, գետին>քէղին, գերան>քէրան, գիշեր>քըշեր, դեղ>թէղ, "քթախոտ", երես>էրէս, երեք>իրէք, խեղճ>խէղճ, խենթ>խէնթ, ծեծ>ծէծ, ծեղ>ծէղ, ծեր>ծէր, կարել>գարէլ, հետ>հէղ, ձեզ>ցէզ, ձեր>ցէր, ծեղք>ջէիկ, մեղք>մէիկ, նեղ>նէղ, չեչ>չէչ, վեր>վէր, վեց>վէց, տեղի>դէղ, փետուր>թէփուր, բերել>բէրէլ "քորել" և այլն:

Սակայն մի քանի միավանկ բառերի բառամիջի ե-ն հնչյունափոխվել է ի-ի․ այդ բառերն են՝ խելք>իիլք, մեր>միր, մեք>միրք, սհաւ>սեվ>սիվ, սեր>սիր "սերուցք", թեփ>թիփ, խեր>իիր, "մի տեսակ մածոն": Այս բառերի ածանցման կամ բառաբարդման ժամանակ ե-ի հնչյունափոխությունը պահպանվում է՝ անխիլք, սիվցիթ, սիվքիր, թիփօղ, թիփօղիլ և այլն:

20. Ռ-ից առաջ ե-ն հնչյունափոխվում է ա-ի․ ինչպես՝ բռն>փառ, եռ>առ (առ է " եռալուն մոտ է", այստեղից էլ առչօր՝ " եռացրած ջուր "), կշեռք>շառք, հեռի >հարու, լի-սեռն>լըսառ, ձեռք>ցառք, ձմեռն>ցըմար, մեռեալ>մառէլ, մեռոն>մառօն, մեռանիլ>մառնիլ, սիսեռն>սըսառ, բեռի>բառի :

21. Բազմավանկ բառերի երկրորդ վանկի ե-ն սովորում կամ հնչյունափոխվում է ը-ի, իսկ՝ առաջին և վերջին վանկերում հնչվում է ինչպես է․ օրինակ՝ ածելել>ազլէլ, ածըլէլ, ածելի, ածըլի, ազլի, արեգակն>արքազ, աւերել>էվրէլ, աւելել>ավլէլ, բարեկենդան>փարգէնթան, երեսուն>առսուն, կարել>կարէնալ>զըրնալ, հայելիք>հայլիք, վայելել>վայլէլ, վայելումն>վայլում, վախենալ>վաինալ, ի վերայ>վըրա և այլն:

Սակայն բազմավանկ բարդ, ածանցավոր զրական բառերի երկրորդ վանկի ե-ն հնչվում է է․ այսպես՝ արեղայ>ափէղա, ազա-

նելիք>հարնելիք, աներես>անէրէս, աներծագ>անէրցաք, աւելա-
նալ >էվէլնալ, աւետիք>ավէդիս, բարեկամ>փարէգամ, բարեկենդան>
փարգէնթան, բարերար>փարէրար, երեքշաբաթի>իրէքշափթի, խաբե-
քայ>խափէփա, համբերել>համփէրէլ, համտեսել>համդէսէլ, հոգե-
դարձ>հօքէթարց, հոկտեմբեր>հօգդէմփէր, նոյեմբեր>նօյէմփէր,
ջրհեղեղ>չըրէդէդ, սեպտեմբեր>սէգդէմփէր և այլն:

22. Բառամիջի ե-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփո-
խութիւնները.

ե>ա. մեծ>մանձ, մեծանալ>մազնալ.

- -

ե>ի. աւել>ավիլ (առ ավել բառից տարբերվելու համար)
աւետարան>ավիդարան, հրեշտակ>հրիշտագ :

ե>ը. սեղմել>սըխմէլ.

ե>օ. աղեղն>աղօղ, ցերեկ>ցօրէգ, չորեքշաբաթի>չօրօք -
շափթի: Վերջին բառի ե>օ-ն բացատրվում է ո>օ-ի առաջընթաց
առնամանութիւնով: Յօրէգ բառը կազմվել է օր բառի նմանակու-
թիւնով :

է

23. Գրաբարյան է-ն բարբառում բոլոր դեպքերում հիմնա-
կանում հնչվում է ինչպես է.

Բառակազմի միակ օրինակը է2>է2 բառն է: Գրաբարում և
աղբի հայերենում իջանել բառի արմատը՝ էջ, պահանջվում է
բարդութիւնների մեջ և հրամայական եղանակի եզակիում. օ-
րինակ՝ վայրէջք, ելևէջ, էջ: Ենշտակորույս լինելով, արմա-
տի է-ն հնչյունափոխվում է ի-ի՝ իջանել, իջուցանել, իջեց-
նել, իջնել և այլն: Մալաթիայի բարբառում արմատի է-ն անփո-
փոխ է մտնում նաև անորոշ դերբայում՝ իջանել>էշնալ, իջու-
ցանել>էշցունէլ: Միայն այդ բառի անցյալի հիմքից կազմված
ծևերում, շենշտակորույս լինելով, է-ն հնչյունափոխվում է
ի-ի՝ իչա, իչար, իչավ, իչիր և այլն: Նույնն ենք նկատում
նաև տիրացու>դէրացու բարդ բառի առաջին բաղադրիչում՝ տէր-
դէր :

Բառամիջում՝ ալէլուիա>ալէլույա, ամէն>ամմէն, ան-
գէտ>անքէդ, անէծք>անէսկ, առէջ>առէչ, բգէգ>փրգէգ, գէշ>
բէշ, դէմ>թէմ (թէմ թիմաց) հանդէպ (թ)>հանդէպկ " դիպված,

տաֆար " , մէջ>մէչ, մէջք>մէշկ, շէն>շէն, պէս>քէս, սա-
պէս>սաքէս (սաքէս -նաքէս" արտահայտութեան մեջ, որ նշանա-
կում է „այսպես- այնպէս") , պէտք>քէտկ, սէր>սէր, տէր>դէր,
քէն>քէն, օրէնք>օրէնք:

Բարբառում բառավերջում է-ով հետևյալ բառերը կան՝

Թէ, մարգարէ և կիւրակէ : Առաջին բառում է-ն մնացել է ան-
փոփոխ: Այս բառը սովորաբար գործածվում է ժխտական շ ածան-
ցով կազմված բարդութիւնների մեջ՝ չէթէ, չէնէ Թէ: կիւրակէ>
գիրագի բառում էջի հնչյունափոխութիւնը կատարվել է իւ-ի
փոփոխութիւնից հետո՝ առաջընթաց առնմանութեամբ:

Բառավերջում անփոփոխ է մնում նաև գրաբարի բացառա-
կան հոլովի է-ն՝ շուգայէն, փէրնէն, ջագղէն և այլն:

24. Մի բանի բառերում բառամիջի է-ն հնչյունափոխ -
վում է ը-ի . ինչպես՝ Երուսաղէմ>էրսաղըմ, դէպ ի վայր>թըբի-
վար, դէպ ի վեր>թըբի վեր: Կոպղէք>գըղբաք բառում առկա է
է>ա հնչյունափոխութիւնը:

Ը

25 Գրաբարից ը-ով սկսվող հետևյալ բառերն են անցել
բարբառ, որտեղ ը-ն մնացել է անփոփոխ՝ ընկեր>ընգէր, ընկոյզ՝
ընգօզ, ընտրել>ըլլրէլ, ընտանիք>ընդանիք:

26. Որպես հայերենի ընդհանուր օրինաչափութիւն, եր-
կու և ավելի բաղաձայնների միջև լսվում է գաղտնավանկ ը-ն .
Մալաթիայի բարբառում գաղտնավանկի ը-ն անփոփոխ է մը-
նում այն բառերում, որոնց բարբառային ձևի մյուս վանկում
կամ վանկերում առկա են ա, է ձայնավորները. օրինակ՝ բըր-
նել>իըռնէլ, խմել>խըմէլ, կտրել>գըլլրէլ, կրակ>գըրազ, գրել>
բըրէլ, ճրագ>ջըրագ, մանր>մանդըր և այլն:

27. Հին հայերենի գաղտնավանկի առաջին վանկի ը-ն ձայ-
նավորների նարդաշնակութեամբ փոխվում է ու-ի , եթե բարբա-
ռային ձևերի հաջորդ վանկերի ձայնավորը ու-ն է. ինչպես՝
ղղում>թուլում, գրոյց>գուրուց, թթու>թուլու, թնջուկ>թուն-
ջուկ, թոյուն>թուռչուն, ծնունդ>ծունունդ, կծու>զուծու ,
կկուկ>զուզուկ, կնունք>զունունք, կրունկ>զուրունք, ծկոյթ>

ջուքութ, մսուր>մուսուր, մըջին>մուրչում, պտուղ>քուղուղ, սմբուլ>սումբուլ, սնդուկ>սունդուկ, տխուր>դուխուր, փշուրք>փուրշունք, փրփուր>փուրփուր, մնծղուկ>ջունջուղուկ: Ու-ն

օ-ի հնչյունափոխված բառերում հիշյալ օրենքը չի գործում .

ինչպես՝ կտուց>զըթնօց, գլուխ>քըլօխ:

28. Նախորդ կամ հաջորդ վանկերի ի, ո>օ ձայնավորների ներդաշնակությամբ գաղտնավանկի ը-ն հնչյունափոխվում է ի-ի կամ օ-ի. օրինակ՝ լիտը>լիդիր, փնթի>փինթի, ոսկը>օսկօր, բղող>փօղօղ, բրինձ>փիրինձ: Հետընթաց լրիվ առնմանությամբ ը-ն հնչյունափոխվում է ա-ի նշխար>նախար բառում:

29. Արդի հայերենի և մյուս քարթառնարի նման Մալաթիայի քարթառի բառերը բառավերջում ը- են ստանում որոշյալ առման ժամանակ. այսպես՝ դունը, թասը, մարթը, բիրթը, ցառը և այլն: Որոշիչ հոդի գիտակցման երևույթի հետևանքով եալթն, ութ, ինն, տասն թվականները և ինքն դերանունը բառավերջում ստանում են ը, որը ընկալվում է իբրև այդ բառերի արմատական հնչյուն՝ յօթը, ութը, իննը, դասը, հինքը:

ի

30. Բառասկզբի ի-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ իլիկ>իլիկ, ինն>իննը, ինչ>ինչ, իշխան>իշխան և այլն:

31. Երկրորդ վանկում այլ ձայնավոր, իսկ առաջին վանկում ի ուննցող երկվանկ բառերի բառամիջին ի-ն հնչյունափոխվում է ը-ի . այսպես՝ գիշեր>քըշէր, գիտեմ>քըդէմ, իրար>հըրար, լիզել>լըզէլ, լինիլ>ըլլիլ, լիսեոն>լըսաո, կիսել>զըսսէլ, հիւանդ>հըվանդ, ձիւթուկ>ցիթուկ>ցըթուկ "կուպր", մե-նակ>մինակ>մընագ, միջնակ>մըշնէգ, շինել>շընէլ, շինծու >շընծու, շիւանք>շըվան, սիսեոն>սըսաո, վիճակ>վըջագ, բայց՝ շիտակ>շիդագ :

32. Բառաբարդությունների մեջ ի-ն սղվում կամ հնչյունափոխվում է ը-ի. բարի երեկոյ>փառընգուն, բարի լոյս>փարլօս, տանտիկին>դանդըգին:

33. ի-ն հնչյունափոխվում է ը-ի հետևյալ բազմավանկ բա-

ուսրի միջին վանկում. այսպես՝ անիծել > անըծել, խիպիլիկ > խըբըլիգ, կաթողիկոս > գաթողգոս, հանդիպիլ > հանդըբիլ, մինաւոր > մընափոր, միխարել > մըխթարել:

34. Բացի վերը նշված (§ § 31-33) դեպքերից, մյուս բունոր դիրքերում (և բառամիջում, և բառավերջում) ի-ն մընում է անփոփոխ. այսպես՝

Բառամիջում՝ աղջիկ > աիչին, գիրք > բիրք, դրացի > թըրացին, գատիկ > գադիգ և այլն:

Բառավերջում՝ ագի > աքի, աղի > աղի, անալի > աննի, գարի > քարի, գինի > քինի, լեղի > լէղի, կաշի > գաշի, հոգի > հօքի, ձի > ցի, մատանի > մաղնի, քնոի > քնոի և այլն:

Գրաբարյան հեռի և շողիք բառերի ի-ի փոխարեն բարբառն ունի ու՝ հարու և շօղուք:

35. Ինչպես արդի հայերենում, այնպես էլ բարբառում տնդի > դէդ բառի վերջին ի-ն ընկնել է: Մակայն բարբառն արդի հայերենի նման արդեն պատրաստի վիճակում գրաբարից վերցրել է մի շարք բառաձևեր, որտեղ տնդի բառը մնացել է անփոփոխ. օրինակ՝ անտեղի > անդէղի, ուխտատեղի > ուխտադէղի:

Ո

36. Բառասկզբում ո-ի դիմաց բարբառը հիմնականում ունի օ.

օրինակ՝ ուորնել > օւրել, ուորտանալ > օւըրդիլ, ողբալ > օխիալ, ողջանալ > օխչընալ, ոջիլ > օչիլ, ոռ(ք) > օրք, "հատակ", ոսկի > օսպի, ոսպն > օսպ, ոսկր > օսկօր, որք > օրփ և այլն: Նույն դիրքում որ > ուր, ու, ոչ > ունչ բառերում բառասկզբի ո-ի դիմաց բարբառն ունի ու, իսկ ով > վավ բառում՝ վա:

Ողկույզ > գօգ բառում սղվել է բառասկզբի ող վանկը:

37. Միավանկ և երկվանկ բառերի բառամիջի ո-ի դիմաց հընչում է օ. այսպես՝ բորիկ > փօփիգ, բովհրսլ > փօրհել, գող > քօղ, գովսլ > քօվել, գործ > քօրծ, դժոխք > թըժօխկ, դող > թօղ, ժողով > ժօղօվ, խոզ > խօզ, խոնարհ > քօնար, խոս > խօղ, խոց > խօց, ծոմ > ծօմ, ծով > ծօվ, կոթ > գօթ, կոխել > գօխել, կոչնակ > գօչնակ, կոպ > գօք, կով > գօվ, հոգի > հօքի, հող > հօղ, հոտ > հօղ, չոր > չօր, չորք > չօրս, պորա > քօրդ, սոխ > սօխ, փոխնդ > փօխնիղ և այլն:

Նույն ձևով ոա, որղ վերջածանցների ո-ի փոխարեն հընչ-

վում է օ. օրինակ՝ աղտոտ>աղղող, թնփոտ>թիփող, մրոտ>մուրող,
ոջիլոտ>ջլող, որդնոտ>օրթնօղ և այլն: ճանապարհորդ>ջամփօ-
րըղ, ուղղորդ>օղօրթ, փոխանորդ>փօխնօրթ և այլն:

38. Որ հնչյունախմբով վերջացող բառերի ուն հետևյալ
բառերում ր-ից առաջ հնչյունափոխվում է է-ի. խմոր>խրմէր,
(խրմէրէլ, խրմէրօղ), խնծոր>խընծէր, խուլոր>խօլէո " խօլեո-
խօլէո հայէցավ " ջրհոր>ջըխվէր : Ը-ի ազդեցութեամբ պետք
է բացատրել նաև տորոն>դօրէն բառի ո>է-ն : Մնացած բառերի
նույն դիրքի ուն հնչում է օ. այսպես՝ բուլոր>փօլօր, խստոր>
սըխտօր, կլոր>զըլօր, սալոր>սավլօր և այլն:

Աւոր վերջածանցով կազմված բարբառային ձևերում, երբ
մթագնվել է արմատի իմաստը, ուն հնչյունափոխվում է է-ի. օրի-
նակ՝ թագաւոր>թաքվէր " հատուկ անուն", գլխաւոր>քըլխավէր,
"ամուսին", մեծաւոր>մէզվէր: Իսկ երբ պարզ գիտակցվում է
այդ բառերի ածանցյալ լինելը, ո>օ-ն մնում է անփոփոխ. այս-
պես՝ ծոցաւոր>ծօսվօր, եկաւոր>էզվօր, շատաւոր>շաղվօր, պա-
կասաւոր>բազասվօր: Գրական փոխառութիւնների մեջ այս ածան-
ցի ո>օ-ն նույնպես մնում է անփոփոխ. ինչպես՝ կեղծաւոր>
գէղծավօր, հարկաւոր>հարգավօր " արտաքնոց", մեղաւոր>մէղա-
վօր, ուխտաւոր>ուխտավօր, փառաւոր>փառավօր և այլն:

39. Շոսվանկ կամ բառավանկ բառերի միջին վանկի ուն
հնչյունափոխվում է ը-ի կամ սղվում, իսկ մյուս վանկերում
մնում է անփոփոխ: ինչպես՝ գլորել>քըլըրէլ, ժողովարան>ժօղ-
վարան, ժողովել>ժօղվէլ, ժողովողը>ժօղվօխկ "հանգանակութիւն"
խորովել>խօրվէլ, կոտորել>գօյրէլ, մուլորիլ>մօլրիլ, կոտորա-
տել>գօղըրդէլ, ոլորել>օլըրէլ, ջրորդան>ջըրթօն, սովորել>
սօրվիլ, սոթոթել>սօթտէլ, փողորակ>փօրդանք, պատառտակ>բա-
ղըրդէլ և այլն :

Այս օրսնքին չեն ենթարկվում՝

ա) Այն բազմավանկ բառերը, որոնց արմատի վերջին
վանկի ուն ածանցի ձայնավորն է. ինչպես՝ աղտոտիլ>աղղօղիլ,
թնփոտիլ>թիփօղիլ, հողոտիլ>հօղօղիլ, մրոտել>մուրօղէլ, հա-
մովանալ>համօվնալ և այլն:

բ) Կրոնական կամ գրական բառերը՝ ողորմած>օղօրմած,
ողորմիլ>օղօրմիլ, քրիստոնեայ-քըրիստօնյայ, եպիսկոպոս>էքիս-
կօքօս, մեռոնել>մառօնէլ և այլն :

40. Այս բուրբից բացի ղ-ն հնչյունափոխվում է ա-ի :
 շնորհավորել > շրնափորել, շրնափորել բառում՝ հաջորդ վան-
 կի առնմանությամբ, ինչպես նաև մոխիր > մախիր և մոռանալ > մառ-
 նալ բառերում : Վերջին բառում ղ > ա հնչյունափոխությունը
 թնրևս կարելի է բացատրել վերջնավանկի ա-ի հետընթաց լրիվ
 առնմանությամբ : Կոպղել > գրղբել բառում ղ-ն հնչյունափոխվում
 է ը-ի : իսկ բողկ > փէղգ և շեռհող > շըռփէղ բառերում՝ է-ի :

Ու

41. Հին հայերենի ու ձայնավորը մալաթիայի շարքառում
 բառակզրում հիմնականում մնում է անփոփոխ. այսպես՝ ուզել >
 ուզէլ, ութ > ութը, ուլունք > հուլում, ուխտ > ուխտ, ունդ > ունդ,
 ունիմ > ունիմ, ուսանիլ > ուսնիլ, ուտել > ուղէլ, ուրախ > ուրախ,
 ուրբաթ > ուրփաթ և այլն :

Նույն դիրքի ու-ն հնչյունափոխվում է օ-ի՝ ուր > օր ,
 ում > օմ, ուղղորդ > ողորթ, ուշ > օշ (նաև ուշ) բառերում :

42. Բառամիջի ու-ն միավանկ և երկվանկ բառերում շեշտի
 տակ մնում է անփոփոխ . ինչպես՝ աշուն > աշունք, ապուր > ա-
 բուր, ապրուստ > արրուստ, բուսանիլ > փուսնիլ, բուրդ > փուրթ ,
 բուք > փուք, գարուն > քարուն, երդումն > էրթում, երեսուն > առսուն,
 թաղումն > թաղում, թնջուկ > թունջուկ, թռչուն > թուռչուն, թուփ >
 թուփ, խունկ > խունգ, ծնունդ > ծունունդ, ծունկն > ծունգ, կակուղ >
 գագուղ, կնունք > գունունք, կուշա > գուշա, կուռք > գուռք, կուտ >
 գուղ, կուրծք > գուրսկ, հում > հում, ծուկն > ցուկ, մուխ > մուխ ,
 մուկն > մուկ, շուն > շուն, պտուղ > բուղուղ, սուգ > սուք, սուղ >
 սուղ, սուր > սուր, փետուր > թէփուր, քաասուն > քասուն, քուն >
 քուն և այլն :

43. Մի բանի միավանկ բառերում՝ ղ և ջ ձայնեղներից հե-
 տո ու-ն հնչյունափոխվում է օ-ի . ինչպես՝ դու > թօն, դուք >
 թօք, դուռն > թօռ, դուրս > թօրս, ջուր > չօռ :

44. Բազմավանկ բառերի երկրորդ վանկի ու-ն սղվում է
 կամ հնչյունափոխվում է ը-ի, օրինակ՝ երուսաղեմ > էրսաղամ, պը-
 տուտիլ > բրղրղիլ, տանուտէր > դանդէր, գրուցել > գուրցել : Վերջի-
 նում թվում է թե դրափոխությամբ ու-ն անցել է ը-ից առաջ : Սա-
 չայն գրոյց > գուրուց արմատից կազմված բայական ձևը՝ գուրուցել >

զուրցել , մեզ մտածել է տալիս, որ այստեղ գործ ունենք ոչ թե դրափոխության , այլ սղման փաստի հետ :

Այս օրենքին չեն ենթարկվում .

ա) Այն բարդ բառերը, որոնց առաջին բաղադրիչը վերջանում է ու-ով՝ երկուշաբաթի>էրգուշափթի .

բ) Բառարմատի վերջին վանկում ու ունենցող ածանցյալ բառերը . ինչպես՝ անուշանալ>անուշնալ, զգուշանալ>ուսկուշնալ, երկուական>էրգուբազան :

գ) Վերացական գոյականներ կազմող ութիւն ածանցի ու-ն. օրինակ՝ գէշութիւն>բէշութուն, ըարութիւն>փարութուն, զողութիւն>բօղութուն և այլն :

դ) Պատճառական բայերի ուցանել>ցունել վերջավորության ու-ն. այսպես՝ ազուցանել>հաբցունել, իջուցանել>էջցունել, դողացուցանել>թօխցունել և այլն :

45. Գրաբարի անորոշ դերբայի ուլ վերջավորության փոխարեն բարբառն ունի ալ կամ էլ . այսպես՝ առնուլ>առնել, գենուլ>գէնել, ուռնուլ>ուռնել (կազմված են>էն բաղադրական ածանցով), լնուլ>լէցնել, յաւելուլ>էվէլցունել, Վերջին բառը կազմվել է աւել>էվէլ արմատից՝ ցունել ածանցով և դերբայական վերջավորությամբ, որով սովորաբար կազմվում են պատճառական բայեր : Անփոփոխ է մնացել թողուլ>թօղուլ բառը :

46. Բառավերջի ու-ն մնում է անփոփոխ . ինչպես՝ երկու>էրգու, թթու>թութու, լեզու>լէզու, կատու>գաղու, կծու>զուծու, հերու>հէրու և այլն : նույն դիրքում լու>լօ բառում ու-ի դիմաց բարբառն ունի օ :

47. Չայնավորնսրից առաջ ու-ն փոխվում է վ-ի . ինչպես՝ աստուած>ասված, զգուհի>զըզվիլ, բուրուսառ>փուրվառ, թթուհիլ>թըթվիլ, կծուհիլ>զըզվիլ, կոուհիլ>զըզվիլ, լուալ>վըլալ (դրափոխությունը կատարվել է հնչյունափոխությունից հետո), լուացք>վըլասկ, չուան>չըվան, նստուածք>նըստվասկ, յունուար>հունվար, կովարար>զըզվարար, փետրուար>փէդըրվար և այլն : Պատուհան բառում հ-ի անկումից հետո ու-ն ա-ից առաջ դարձել է վ-իսկ առամնային դ-ի ազդեցությամբ շրթնատամնային վ-ն դարձել է ֆ՝ բաղձան : Դժուար>թըժար բառում ու-ն սղվել է :

Ու-ով վերջացող բառերի հոլովման կամ ածանցման ժա -

մանակ բառավերջի արմատական ու-ն ընկնելով հոլովիչի կամ
ածանցի ձայնավորից առաջ, վերոհիշյալ օրինաչափությամբ նույն-
պես դառնում է վ. այսպես՝ կառու-ի>գաղվի, լեզու-ի>լեզ-
վի, լեզուանի>լէզվանի, հերուան>հէրվան և այլն:

48. Այս բոլորից բացի ու-ն հնչյունափոխվել է օ-ի
հետևյալ բառերում՝ գլուխ>քըլօխ, թրթուռ>թօրթօր, կաուց>
գըթնօց. վերջին բառում ուց-ը դիտվելով իբրև ածանց՝ վերա-
իմաստավորվել է -նօց ածանցի:

49. Գրաբարում տարբերվել են ուև և ու վերջածանցնե-
րով կազմված գոյականներն ու ածականները: Առաջինով կազ-
մվածները արտահայտում են " Այդ բանից շատ ունենալ " ի-
մաստը. օրինակ՝ հողոււ, ծաղկոււ, թփոււ, փշոււ, քարոււ,
ջլոււ և այլն: -ու ածանցով կազմված գոյականներն ու ա-
ծականները սովորաբար արտահայտում են " Այդ նյութին քսված
կամ ապականված լինելը " . օրինակ՝ աղտու, մրտու, որդնու,
իւղտու և այլն: Այդ երկու ածանցների փոխարեն Մալաթիայի
բարբառում հանդես է գալիս միայն օղ ածանցը, որն արտահայ-
տում է նշված երկու ածանցների իմաստները:

Բ. ԵՐԱԲԱՐԲԱՐԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

50. Գրաբարյան ալ, ալ(օ), եա, իլ(ել), ոյ երկբարբառ-
ներն են դրսևորվել Մալաթիայի բարբառում՝ ենթարկվելով այլ
և այլ փոփոխությունների: Գրաբարյան եալ, եալ, իալ, ւոյ ե-
ռաբարբառները բարբառում չեն դրսևորվել: Սրանցից ալ-ը զրա-
բարում հանդես էր գալիս բառերի թեքման ժամանակ, իալ եռա-
բարբառով կար միայն բառը, որը չի անցել բարբառ: Եալ,
եալ եռաբարբառները՝ զրաբարից բարբառն անցած մի բանի բառե-
րում գտնվում են բառավերջին բաց վանկում, ուստի դադարում
են եռաբարբառ լինելուց և դիտվում են իբրև եա երկբարբառից
և ւ>վ կամ յ ձայնորդներից կազմված հնչյունախմբեր: Ալ
(օ), ալ, ոյ, իլ(ել) երկբարբառները քննության ենթ ենթարկել
միայն փակ վանկում գտնված դիրքում, այսինքն՝ երբ նրանց
հաջորդում են բաղաձայն հնչյուններ: Զայնավորների միջև կամ
բառավերջում այդ երկբարբառների ձայնորդ տարրը վերածվում է

բաղաձայն հնչյունի: Ատանձին դեղքսրում, երբ անհրաժեշտութիւն է զգացվել մտկնաբանելու հնչյունափոխական որոշ ցրե-վույթներ, երկբարբառները քննութեան ենք սնարկել նաև ձայնավորնստի միջև զտնված դիրքում: Մալաթիայի բարբառը չունի ոչ երկբարբառներ և ոչ էլ սոսքարբառներ:

Այ

51. Հին հայերենի այ երկբարբառի դիմաց բարբառը բառասկզբում հիմնականում ունի յ. ինչպես՝ այդ>յդ, անի, այդ>չափ, այդքան>անդչափ անդքան, այդորիկ>անդօնք, այն>ան, անի, այնչափ>անչափ, այսքան>անսքան, այսօրիկ>անսօնք, այսօր>անսօր, այրել>արել, այր (իկ)>արիգ, այրուք>արուք "այրվածի մնացորդ", արիգմարթ, արիգընիգ, բայց՝ որքևայրի>վօրիէվարի, որը գրական լեզուի ազդեցութեան արդյունքն է: Այդ հաստատվում է բառասկզբի ուղիւ հնչյունափոխութեամբ, ի տարբերութիւն բարբառի նույն դիրքի ուօ հնչյունափոխութեանը (տես § 36):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Այգի>էքի բառում այ-ի դիմաց բարբառն ունի է, հավանաբար այս հնչյունափոխութիւնը առաջացել է ագի>քի բառի հետ նույնանալու վտանգից խուսափելու անհրաժեշտութեամբ:

Այլ բառն ունի բարբառային երկու տարբերակ՝ ալ (ա) և էլ :

52. Բառամիջում միավանկ և երկվանկ բառերի այ երկբարբառը ը ձայնորդից առաջ հնչյունափոխվում է յ-ի, իսկ մնացած դիրքերում՝ ա-ի: Այսպես՝

Այ>ա. երկայն>էրզան, երկայնք>էրզանք, լայն>լան, լայնանալ >լաննալ, լայնք>լանք, խայթել>խաթել, ծայթրին>զաթրին, կայծկըլտալ>զազգըլդալ, ձայն>ցան, ձայնիկ>ցանիգ, մայթիլ>ջաթիլ, տայգըլդաքըր, դաքիր, ցայթել>ցաթել, ցայթքել>ցաթկել, քայլել>քալլել : Բառամիջում այ-ը անփոփոխ է մնացել պայծառ>բայծառ գրական բառում :

Այ>յ. ծայր>ծար, հայր>հար, մայր>մար, վայր>վար, այստեղից էլ վարմարթ "ստոր արարած", սկեսրայր>զէսրար:

Մի բանի բառերում այ-ը հնչյունափոխվում է ա-ի, չը -

նայած ը-ից առաջ գտնված դիրքին. եղբայր>ախիար, դէպ ի վայր> թըքի վար:

Փայտ>փնդ բառում այ-ը հնչյունափոխվում է յ-ի, իսկ այդ բառից կազմված փայտահատ>փէղաղ բարդության մեջ այ երկ-բարբառը հնչյունափոխվում է է-ի՝ անցնելով այ>յ>է-ստիճան-ներով:

53. Բազմավանկ բառերի երկրորդ վանկի այ երկբարբառը հնչյունափոխվում է ը-ի, ինչպես՝ երկայնանալ>էրզըննալ, եղբայրանոյն>ախիըրանուն "խաչեղբայր", իսկ մի քանի բազմ-վանկ բառերում այ-ը ընկնում է՝ սատանայութիւն>սաղանութուն, փեսայութիւն>փէսութուն, տղայութիւն>ղըղութուն : նույն ձևով էլ հրամայեա և հրամայեցէք ձևերում հաճախակի գործածության հետևանքով այ-ը "մաշվել", ընջվել է՝ հըրամմե, հրամմէցէք:

54. Բառավերջում այ-ը, իբրև ոչ երկբարբառ, միավանկ բառերում արտասանվում է այ, իսկ բազմավանկ բառերում՝ ա-հայ>հայ, ազուգայ>հաքուքա (տես § 169), որոշ բառերում հո-լովման ժամանակ բառավերջի այ-ը ընկնում է. ինչպես՝ փեսայ>փէսա-փէսին, փէսէն, տղայ>ղըղա-ղըղուն,ղըղէսմէն, սատանայ>սաղանա-սաղանին և այլն:

55. Բառավերջի այ-ը երկբարբառային դիրք է գրավում ը հոգնակերտից առաջ: Այս դեպքում այ երկբարբառը հնչյունա-փոխվում է է-ի. այսպես՝ ճամփայք>ջամփէք, սատանայք>սաղա-նէք, տղայք>ղըղէք (նաև ղըղաք), փեսայք>փէսէք, քահանայք>քահանէք և այլն :

ԱԼ

56. ԱԼ երկբարբառը հայերենում պատմական հնչյունափո-խությամբ վերածվել է օ-ի: նույն օրինաչափությունը առկա է նաև Մալաթիայի բարբառում, այսպես՝

Բառասկզբում՝ ալզնել>օքնէլ, ալզուտ>օքուդ,
ալծաննել>օծէլ, ալծ>օց, ալղ>օղ, ալտար>
օղար, ալր>օր, ալրհնել>օրշնէլ և այլն:

Բառամիջում՝ աղալթք>աղօտկ, աղալթսլ>աղօթէլ, ամալթ>
ամօթ, այսալր>յսօր, գալտի>քօղի, գալրու-
թիւն>գօրութուն, խալսիլ>խօսիլ, խալք>

խօսկ, ծանաւթ>ծանօթ, կարաւտ>գարօղ, մաւտ>մօղ, մաւրուք> մօրուք, նաւսր>նօսրը և այլն :

Միայն յաւնք բառում աւ-ի փոխարեն բարբառն ունի ու՝ ունք: Հավանաբար աւ>օ հնչյունափոխությունից հետո այս բառում օ-ն այլ ջարբառների ազդեցութեամբ դարձել է ու :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ .- Ինչպես գրաբարում, այնպես էլ Մալաթիայի բարբառում, աղաւնի>աղըվնի բառի աւ-ը, շնայած բաղաձայնից առաջ գտնված դիրքին, չի պարզեցվել: Հավանաբար ւ ձայնորդից առաջ արտասանվել է ը ձայնավորը, որը խոչընդոտել է հիշյալ երկբարբառի պարզեցմանը ¹:

ԵԱ

57. եա երկբարբառը միշտ գտնվում է վերջին վանկում : Բարբառում այն հիմնականում հնչյունափոխվում է է-ի. ինչպես՝ առաջնեակ>առչընէգ, լեառն>լէո, ապա ըստ § 20-ի՝ լաո, դայեակ>Պայէգ, Ռահէգ, երանեակ>էրնէգ, լեարդ>լէրթ, իւրեան>հրրէն, կորեակ>գօրէգ, վառեակ>վառէգ :

58. Նորեան>ցօրին և առեան>աղին բառերում եա-ի դիմաց բարբառն ունի ի :

59. Ութիւն ածանցով կազմված վերացական գոյականների սեռական հոլովի եա-ի փոխարեն բարբառն ունի ա. ինչպես՝ բարութիւն-բարութեան>փարութուն-փարութան, մեծութիւն-մեծութեան>մանձութուն-մանձութան և այլն :

60. ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի և բուն հրամայականի եզակի 2-րդ դեմքի եա-ի փոխարեն բարբառն ունի է. այսպես՝ գրեա՝քրրէ՛, գրեաց՝քրրէց, սիրեա՝սիրէ՛, սիրեաց՝սիրէց և այլն :

61. եայ-ը և եաւ-ը հանդես են գալիս որպես էա երկբարբառից և որևէ ձայնորդից կազմված հնչյունախմբեր, որտեղ ւ ձայնորդը դառնում է վ, յ-ն՝ ընկնում, իսկ եա-ն օրինաչափորեն հնչյունափոխվում է է է-ի: Առաջինով կազմվում են հարաբերական ածականներ՝ արծաթեայ>էրծրթէ, մազեայ>մազէ, ոսկեայ>օսկէ և այլն :

1. Տե՛ս Ա.Ս. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1959, էջ 7 և 4. Առաքելյան, Հայոց լեզվի հնչյունաբանություն, Երևան, 1953, էջ 158 :

Այս տեսակետից հետաքրքիր է առաքեալ բառը: Որպես հատուկ անուն գործածելիս եա-ն դառնում է է՝ Առաքել, իսկ կրոնական բարոզիչի իմաստով գործածելիս եա-ն հնչյունափոխվում է յա-ի՝ առաքյալ :

իւ(եւ)

63. Դեռևս գրաբարի շրջանում եւ՝ երկբարբառի արտասանությունը նույնացել էր իւ-ի արտասանության հետ: Ետևոք ունեին այդ երկբարբառների զուգահեռ գրություններ՝ ալելը//ալիլը, աղբելը//աղբիլը և այլն: Ինչ վերաբերում է իւ-ի և եւ-ի՝ ձայնավորից առաջ կամ բառավերջում գտնված դիրքին, ապա նրանք կորցնում են իրենց երկբարբառային բնությունը և արտասանվում որպես ի, ե՝ ձայնավորից և ւ՝ ձայնորդից կազմված հնչյունախմբեր: Ինչպես՝ անձրեւ, հարգել, ձեւ, ցեղ, թեւ, ետեւ, էղէվ, երեւիլ, էրվալ, ազնիւ, ազնիվ, պատիւ, բարիվ, արծիւ, արծիվ, կոիւ, կորիվ և այլն:

64. լ- բաղաձայնից առաջ իւ-ը (եւ-ը) դառնում է է. Ինչպես՝ գիւղ, գեւուցեղ, գիւղացի, ճիւղ, ջէղ: Իւղ > եւղ > բառը բարբառում ունի յէղ ձևը: Այս բառն ըստ երևույթին կազմվել է եւղ ձևից, ուր ւ ձայնորդն ընկել է ի լիարարտ > օղափէր հատուկ անվան մեջ իւ-ի դիմաց բարբառն ունի օ:

65. Բառասկզբում իւ-ի դիմաց հնչվում է ի միայն իւր, իր բառում:

66. Բառամիջում իւ-ը կրել է հետևյալ հնչյունափոխությունները:

ա) իւ > ի՝ ալիլը > ալիլ, աղբիլը > ալբիլ, արիւն > արին, կիւրակէ > կիրակի, հարիւր > հարիր, հերիւն > հերին, ձիւթ > ձիթ: Բացի վերջինից, մնացած բառերում իւ-ը գտնվում է թ ձայնորդի մոտ:

բ) իւ > օ՝ սիւն > սօն, ձիւն > ջօն, աղիւս > աղօս.

գ) իւ > ու՝ հիւսել > հուսել, մրջիւն > մուրջում.

Ատիւծ > աույուծ բառը գրականից անցած ձև է:

67. Ութիւն ածանցի իւ-ի դիմաց բարբառն ունի ու. Ինչպես՝ մեծութիւն > մանծութուն, բարութիւն > փարութուն և այլն:

ոՅ

68. Բառասկզբում և բառավերջում ոյ երկբարբառը դառնում

է ու: Երկու դիրքում էլ բարբառում մի-մի օրինակ կա՝ ոյժ> ուժ, երակոյ>ուռուենգուն :

69. Բառամիջում ոյ-ը ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառում գտնվում է շնշտի տակ: Այդ երկբարբառի դիմաց սիավանկ բառերում բարբառն ունի օ. ինչպես՝ բոյթ>փոթ, բոյլթ>փորթ " համաստեղությունը" , բոյն>փոն, գոյն>քոն, լոյս>լոս, թոյլլ>թօլ, բոյր>բօր: Բացառություն է կազմում գոյգ>գուք բառը:

Կոյս>գույս բառը բարբառն է անցել գրական լեզվից:

70. Բազմավանկ բառերում ոյ-ը բարբառում դարձել է ու. ինչպես՝ աշխոյժ>աշխուժ, անոյշ>անուշ, անդամալոյժ>անթամալուժ, զգոյշ>ուսկուշ, զրոյց>գուրուց, կապոյտ>գաբուդ, ճրկոյթ>ջուրութ, ողջոյն>օխչուն, պատրոյգ>բայրուք, պատրոյս>բայրուս:

Ողկոյգ>գօգ բառը ող նախավանկի անկումից հետո դարձել է միավանկ և օրինաչափորեն՝ ըստ § 69-ի, հնչյունափոխվել օ-ի: Այս բառի նմանակությամբ էլ ընկոյգ>ընգօգ երկվանկ բառում ունենք ոյ>օ հնչյունափոխությունը: Պտոյտ>բրդօղ բառում ոյ-ի դիմաց բարբառն ունի օ:

4. ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՅՈՒՆՆԵՐԸ

ՉԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Բ

71. Հին հայերենի ձայնող պայթական ք-ն բառասկզբում, թառամիջում (բացի մ,ն ու լայիններից հետո գտնված դիրքից) և բառավերջում հնչյունափոխվում է փ-ի. այսպես՝

Բառասկզբում՝ բաղանիք>փաղնիք, բան>փան, բանալ>փանալ, բանալի>փալլի, բարակ>փարագ, բարձ>փարց, բեռն>փառ, բոյթ>փոթ, բոյն>փոն, բուրդ>փուրթ և այլն :

Բառամիջում՝ աղբիւր>ախփիր, եղբայր>ախիար, խաբեբայ>խափէիա, խաբել>խափէլ, շաբաթ>շափաթ, ողբալ>օխփալ, ուրբաթ>ուրփաթ, սրբել>զըրփէլ և այլն : Նույն փոփոխությունն է նկատվում նաև հատուկ անունների մեջ՝ Աբել>Ափէլ, Իւղաբեր>Օղափէր, Սրբուհի>Սուրփիգ, Քերովբէ>Քերօփ.

Բառավերջում հանդիպում է միայն ր ձայնորդից հետո. այսպես՝ երբ>յափ(ը-ի անկմամբ), որբ>օրփ, սուլբ>սուրփ:

72. Մ, ն ունգայիններից հետո բ-ն մնում է անփոփոխ .
այսպես՝ անբախտ>ամբախտ, բամբակ>փամբակ, բամբասանք>փամբա-
սանք, Համբարձում>Համբո, թումբ>թումբ:

Սակայն նույն դիրքում համբարձում>համփարզում (կրոն .
իմաստով), համբերել>համփէրէլ, համբերուլթիւն>համփէրուլթոււն,
համբուրել>համփուրէլ (խաչը կամ ավետարանը) բառերում բ-ն
հնչյունափոխվում է փ-ի, թերևս, որպես գրական փոխառուլթյուն-
ներ:

73. Ջը հնչյունախմբում բ-ն խլանում է և դառնում պ՝ նա-
խորդ զ ս բաղաձայնի ազդեցութեամբ ազբն>ասպ բառում :

Գ

74. Հին հայերենի գ-ն, բացի բառավերջում ն ունգայինից
հետո գտնված դիրքից, մնացած դիրքերում սովորաբար հնչյուն-
ափոխվում է նտնալնգվային շնչեղ խուլ պայթական բ-ի . այսպես՝

Բառասկզբում՝ գարի>բարի, գարուն>բարուն, գետին>բէդին,
գիրք>բիրք, գիրկ>բիրկ, գլուխ>բըլօխ, գող>բօղ, գործ>բօրծ,
բօղի>բողի և այլն:

Բառամիջում՝ ագահ>անբահ, ագանիլ>հաբնիլ, ագի>աքի ,
այգի>էքի, արնգակն>արբակ, տարգալ>թըբալ, գանգակ>գանբակ ,
գրագաննիլ>բաբնէլ և այլն:

Չնայած բարբառում ն ունգային ձայնորդից հետո բ, դ, ծ, ջ
ձայնեղները բառամիջում մնում են անփոփոխ (§ § 72, 79, 108,
111), սակայն այդ դիրքի գ-ն հնչյունափոխվում է բ-ի, ինչ-
պես՝ անգամ>անբամ, գանգակ>գանբակ, հանգիստ>հանբիստ, հանգ-
չիլ>հանբիլ, Օգննիլ>օբնէլ, այնպես էլ ածանցյալ՝ անգործ>ան-
բօրծ, անգէտ>անբէդ բառերում:

Բառավերջում՝ աւագ>ավաք, երգ>էրք, թագ>թաք, հոգ>հօք,
ծագ>ցաք, ձիգ>ցիք, մրագ>ըրաք, պատարագ>քաղարաք, պատրոյգ>
բայրուք, սուգ>սուք և այլն:

75. ն ունգայինից հետո գ -ն բառավերջում մնում է անփո-
փոխ. այսպես՝ ժանգ>ժանգ, հինգ>հինգ, եղունգն>ուղունգ: Այս
բառերի ածանցման ժամանակ գ թն , երբ ընկնում է բառամիջի
դիրքը , արմատի ինքնուրույն գիտակցմամբ մնում է անփոփոխ .
այսպես՝ ժանգոտ>ժանգօղ (ժանգօղիլ), հնգանոց>հինգնօց, հինգ-

էրրօքն և այլն:

76. զգ և ձգ հնչյունախմբերի գ-ն նախորդ ծայնեղներին լրացման հետևանքով փոխվում է կ-ի: Այս դիրքի բառերն են . ազգշակ, ազգական>ասկական, այլազգ>այլասկ, զգոյշ>ուսկուշ, զգուշանալ>ուսկուշնալ, դժգոհիլ>թըշկոյիլ, պժգալ>բըշկալ:

77. Երկու ն-երի միջև գտնվող զ-ն փոխվում է յ-ի, իսկ զ>յ-ից առաջ գտնվող ն-ն ընկնում է: Այս դիրքում ունենք միայն կանգնիլ>զայնիլ բառը: Օրինաչափությունը հավաստի է դառնում նույն դիրքում գտնվող կ>յ հնչյունափոխությամբ (տես § 92):

Դ

78. Գրաբարի առաջնալեզվային դ ծայնեղ պայթականի դիմաց բոլոր դիրքերում բարբառում հնչվում է թ, բացի ն ոնգայինից հետո գտնված դիրքից. այսպես՝

Բառասկզբում՝ դագաղք>բաթախկ, դադար>թաթար, դաժան>թաժան, դանակ>թանագ, դաս>թաս, դատարկ>թարդագ և այլն:

Բառամիջում՝ բրդեկ>իբրթէլ, երդումն>էրթում, ծաղգար-դար>զարզարթար, կարդալ>զարթալ, որդի>օրթի և այլն:

Բառավերջում՝ բուրդ>իուրթ, կախարդ>զախարթ, ծանալար-հորդ>ջամիօրթ, մարդ>մարթ, յարդ>էրթ, որդն>օրթ, ջարդ>ջարթ, վարդ>վարթ, փոխանորդ>իօխնօրթ և այլն:

Դ-ն հնչյունափոխվում է թ-ի նաև բոլոր անծնանուններում: Այսպես՝ Դանիէլ>Թանիյէլ, Դաւիթ>Թավիթ, Ադամ>Աթամ, Յուդա>Թեթա, Սեղրակ>Սեթրագ, Վարդան>Վարթան, Տրդատ>Դրրթադ, Երու-անդ>Երվանթ, Բուզանդ>Փուզանթ, նուարդ>նրվարթ և այլն:

79. ն ոնգայինից հետո բառամիջում և բառավերջում դ-ն մը-նում է անփոփոխ. այսպես՝ բառամիջում՝ Թնդալ>թընդալ, խըն-դալ>խընդալ, կադանդեկ>զադընդէլ, կնդեկ>զընդէլ, հիւանդա-նալ>հըվըդնալ, սնդուկ>սունդուկ, ցնդիլ>ցընդիլ, հանդէպ(ք)>հանդէպկ:

Բառավերջում՝ գունդ>բունդ, Դունդ>Թունդ, ծնունդ>ծու-նունդ, կադանդ>զադընդ, հիւանդ>հըվանդ, ունդ>ունդ, պինդ>բինդ, սանդ>սանդ:

Իրական-կրօնական բնույթի բառերում այդ դիրքի դ-ն հըն-չյունափոխվում է թ-ի. այսպես՝ անդամալոյծ>անթամալուծ,

անդաստան անթաստան, ըարնկենդան փարգէնթան, այլանդակ
այլանթագ :

80. Խեղդել լի էլիս էլ բառում ղ-ն փոխել է տ-ի՝ ղ-ից
առաջացած խ-ի ազդեցութեամբ (ղ լի-ի սասին տես ջ 135 ա) :

81. Այդչաղ, այդոքիք, աղօնք, այդբան, աղբան, այդլէս,
աղբէս ցուցական դերանունների ղ-ն սնուս է անփոփոխ :

ԽՈՒՆ ԳԱՅԻԱԷԱՆՆՆՈՐ

9

82. Պ-ի դիսաց բառակազմում և լատամիջում՝ ծայնապոր-
ներից ու ծայնորդներից առաջ, բարձրան ունի ծայնեղ ը. այս-
պես օրինակ՝

Բառակազմում՝ պագանսլ ըբքնէլ, պակաս ըբագաս, պահել ը
բէյիլ, պահք ըբք, պող ըբող, պատ ըբաղ, պատարագ ըբաղարագ,
պատիժ ըբաղիժ, պատկեր ըբաղգէր, պարսպ ըբարաք, պարսլսլ ըբար-
բէլ, պճեղն ըբըջէղ և այլն :

Բառամիջում՝ ամպոտ ըամբող, անապակ ըամբագ, ապաշխարել ը
արաշխարէլ, ապառաժ ըարառաժ, ապուր ըարուր, ապրոյ ըարբա,
ալրիլ ըարրիլ, ազրուստ ըբրուստ, դարպաս ըբարբաս, դիպիլ ը
թըրնիլ, Եպիսկոպոս ըբիսկոբոս, իպիլիկ ըխըբըլիգ, կապել ը
գարէլ, կապիչ ըգարիչ, կապոյտ ըգարուղ, հպատակ ըբբաղագ, հը-
պարտ ըբբարղ, մպոտ ըբբթող, շապիկ ըշաբիք, սեպուհ ըսէթուհ,
վարդագետ ըվարթթեղ, տապալել ըթարլէլ, տապակ ըդարբագ, տապա-
կել ըդարբէլ, տապանակ ըդարբանագ և այլն :

83. Սպանանել ըբաննէլ բառում ս-ի անկումից հետո պ-ն
անցնում է բառակիզբը և օրինաչափորեն հնչյունափոխվում
բ-ի :

84. Պս հնչյունախմբի պ-ն ս-ի ազդեցութեամբ դառնում է
փ. Այս օրանքի համար ունանք պսակ ըբրսագ և պսակսլ ըբրսագէլ
ըստները, երկուսն էլ՝ բառակազմում : Ուրիշ դիրքերում տվյալ
կանոնի համար օրինակներ չկան :

Պտոնել ըբընդըռէլ բառում բառակազմի պ-ն դառնում է փ :
Այս որևույթը ընդհանուր է հայերենի համար, ուստի կարելի
է կարծել, որ բարբառը ո՛չ թե պտոնել բառն է հնչյունափոխու-
թյան ենթարկում, այլ ըբընդըռել ձևը փոխ է առել մի այլ ընթ-
բառից :

86. Չնայած պինչ>քինչ բառի օրինաչափ հնչյունափոխու-
թյանը, "քինթր-փինչը " արտահայտության մեջ ք-ի ազդեցու-
թյամբ պ-ն հնչյունափոխվում է փ-ի:

87. Սեպսամբեր>սեզդէմբէր բառում պ-ն դարձել է կ>զ[՝]
հոկտամբեր, դեկտամբեր ամսանունների նմանակությամբ:

88. Բառավերջում պ-ն ձայնավորից և ձայնորդից հետո
դառնում է ք, իսկ խուլ բաղաձայններից հետո մնում է անփո-
փոխ. այսպես՝ ամպշամբ, խծիպ>խրծիր, կապ>զար, պապ>բար և՝
ոսպնչօսպ: Կրոնական բառերում խուլներից հետո պ-ն ձայնադա-
նում է՝ սպասաւոր>ըսբասավոր, սպասուհի>ըսբասուհի :

Բառավերջում շնչեղ խուլ ք-ից առաջ պ-ն նույնպես մը-
նում է անփոփոխ: Այս դիրքում կա միայն հանդէպ(ք)>հանդէպկ
բառը:

89. Ճանապարհ>նամփա բառում պ և հ բաղաձայնները առաջաց-
րել են շնչեղ խուլ փ։ Այստեղ սղվել է բառամիջի՝ սրկրորդ
վանկի ա-ն, մ-ն դարձել է ը, ն-ն շրջնային պ-ից առաջ դար-
ձել է մ, հ-ն դրափոխությամբ անցել է բառամիջի դիրքը, իսկ
բ-ն էլ ընկել է :

կ

90. Գրաբարյան խուլ գայթական կ-ն ս, շ, խ խուլ բաղաձայ-
ներից հետո մնում է անփոփոխ, իսկ մնացած դիրքերում հնչյուն-
ափոխվում է ձայնեղ գայթական զ-ի. այսպես՝

Թառակզրում՝ կտնչզաթ, կատուչզաղու, կալոյտչզարուղ,
կարդալչզարուղ և այլն:

Բառամիջում՝ սկոայչարգա, անմահականչամմահագան, աշա-
կիրտչաշագէրդ, ռարեկամչ փարէգամ, սրկաթչէրգաթ, սրկայնչէ-
գան, սրկուչէրգու, ընկերչընգէր, ընկոյզչընգօզ, ժամակոչչ
ժանգօչ, լակնչլըզէլ, լալականչլալգան, կակուղչզազուղ, կար-
կատանչզարզրդան, կիւրակէչգիրագի, կարկուտչզարզուղ, շալա-
կնչշալզէլ, սափականաչղափագնալ, տկարչղրզար, քակնչքազէլ
և այլն :

Բառավերջում՝ անապակչամբազ, արեզակնչարբազ, բամբակչ
փամբազ, բարակչփարազ, գիրկչքիրզ, դասարկչթարդազ, յրէկչէ-
րէզ, զաւակչզավազ, թակչթազ, թնջուկչթունջուզ, խունկչունն,
ծունկնչծունզ, կրակչզրրազ, ծուկնչցուզ, մանկչջանզ, մերմակչ

Ղէրմագ, մեկյմէգ, մռւկն>մռւգ, նամակ>նամագ, պուտուկ>բու-
դուգ, վիճակ>վըջագ, տակ>դագ, տափակ>դափագ և այլն: կ-ն հըն-
չյունափոխվում է գ-ի նաև իկ վերջածանցով կազմված բառերում՝
այրիկ>արիգ, թաթիկ>թաթիգ, կոկիկ>գոգիգ և այլն:

Ս, շ, խ խուլ բաղաձայններից հետո, ինչպես նշեցինք, կ-ն
մնում է անփոփոխ. այսպես՝

լ-ից հետո՝ վախկոտ>վախկոդ:

Ս-ից հետո՝ կսկիծ>գըսկիծ, հասկանալ>հասկընալ, ոսկի>
ըսկի, ոսկր>օսկօր, նպիսկոպոս>էքիսկօքօս:

Շ-ից հետո՝ ամաչկոտ>ամըշկօդ:

91. Եթե բարդութեան առաջին բաղադրիչը վերջանում է
խուլ բաղաձայնով, իսկ երկրորդը սկսվում է կ-ով, ապա վեր-
ջինս ձայննդանում է՝ բաղադրիչի անկախ գիտակցման պատճառով՝
այսպես օրինակ՝

աղօթակողմնաշղօթգում, երիցակին>իրիսգին, օրօրոցակապ>
օրըսգաք, խօսք կապ>խօսգաք "նշանդրութեանը նախորդող ամուս-
նական համաձայնութիւնն", աչք կապուկ>աշգաքուգ "մանկական
խաղ":

Սկեսուր>գէսուր և սկեսրայր>գէսրար բառերում բառար-
կըզբի ս-ի անկումից հետո կ-ն օրինաչափորեն հնչյունափոխ-
վում է գ-ի:

92. Բառամիջում մ, ն, ը ձայնորդներից առաջ կ-ն հնչյու-
նափոխվում է յ-ի, իսկ կ-ին նախորդող ն-ն ընկնում, այս-
պես՝ անկանիլ>իյնալ, մեկնել>մէյնէլ "փոել", ցնկնիլ>ցիյ-
նիլ, մեկմեկ>մէյմէգ, մեկ մի>մէյ մի, մկրատ>մըրրադ: Իսկ
եթե նշված ձայնորդները և կ-ն անջատված են որևէ ձայնավորով,
ապա կ-ն մնում է անփոփոխ: Օրինակ՝ հասկանալ>հասկընալ, եր-
կայնանալ>էրգըննալ: Նույն պատճառով էլ անկանիլ>իյնալ բա-
ռի, անցյալ կատարյալում կ>գ-ն վերականգնվում է, քանի որ
չի գտնվում ն-ից առաջ՝ ընգա, ընգար, ընգավ:

93. Ճկոյիլ>ջուրուլթ բառում բառավերջի թ-ի ազդեցութեամբ
կ-ն դառնում է շնչեղ խուլ ք: Բակլայ>փաղլա բառում կ-ի դի-
մաց հնչվում է ղ. սա հավանաբար այլ բարբառից կրած ազդեցու-
թեան արդյունք է: Կանկառ>քանգառ (բուլյս է) բառում կ-ն
հնչյունափոխվում է ք-ի:

94. Մի քանի քառերի վերջում կ-ի դիմաց բարձրան ունի ք. այդ քառերն են՝ մարդիկ>մարթիք, բաժակ>իածանք, շապիկ> շաքիք, փողորակ>փորդանք, կրունկ>զուրունք: Այստեղ կ-ի վրա ազդել է այլ քառերի կազմութեան համաբանութիւնը: Այսպես օրինակ՝ շաքիք բառում կ>ք հնչյունափոխութեան վրա ազդել է վարտիք>վարդիք բառը: Այս քառերը իմաստային մոտիկութիւն ունեն և զործածվում են զուգահեռաբար: Մնացած քառերում բառավերջի մասնիկները գիտակցվել են իբրև հոգնակերտ, ինչպես՝ անք - փորդանք, փածանք (համեմատիր՝ ցիյանք, ախիւրանք և այլն): ունք - զուրունք (համեմատիր՝ քնոօնք, դադօնք և այլն):

Տ

95. Գրաբարյան տ հնչյունը ք-ից առաջ և ս, շ, խ խուլ բաղաձայններից հետո մնում է անփոփոխ. այսպես՝

ք-ից առաջ՝ ոտք>օտկ, վարտք>քարտկ, միտք>միտկ, պէտք>քէտկ և այլն.:

ս-ից հետո՝ ապրուստ>աբրուստ, աստառ>աստառ, աստուծոյ>աստուծու (աստուած>ասված բառում տ-ն ընկնում է), հաստ>հաստ, հաստառ>հաստադ, նստիլ>նըստիլ, վաստակել>վաստրգէլ, խոցոտնիլ>խօստէլ, քրիստոս>քըրիստօս, խոստանալ>խօստոնալ և այլն.

շ-ից հետո՝ կուշտ>զուշտ, կոսպաշտ>զըոաբաշտ, սաշտնիլ>քաշտէլ, վարկեշտ>քարգէշտ և այլն.

խ-ից հետո՝ ըախտ>իախտ, դրախտ>ըըրախտ, տախտակ>դախտագ, խստոր>սրխտօր և այլն:

96. Մնացած դիրքերում տ-ն հնչյունափոխվում է ձայնեղ վայրական դ-ի. այսպես՝

Բառակզբում՝ տալ>դալ, տանձ>դանձ, տաշտիլ>դաշէլ, տասն>դասը, տարի>դարի, տախակ>դախագ, տաք>դաք, տէր>դէր, տխուր>դուխուր, տուն>դուն և այլն:

Բառամիջում՝ գետին>քէլին, գիտեմ>քըդէմ, գտաննիլ>քըդնալ, գօտիլ>քօդի, դատարկ>մարդագ, դատիլ>մադիլ, կատու>գահու, հաւատալ>հավդալ, մատանի>մադնի, մօտիկ>մօդիգ, ուտսլ ուղէլ, վարտակել>քարդըգէլ, քրտինք>քըրդինք և այլն:

Բառավերջում՝ աղտ>աղդ, աշակերտ>աշագէրդ, խոտ>խժդ,

խրատ>խըրաղ, կապոյտ>զարուղ, պատ>բաղ, սլորտ>քօրղ, սիրտ>սիրղ, սոււտ>սուղ, ցուրտ>ցուրղ և այլն :

97. Տ-ը հնչյունախմբի տ-ն դառնում է յ . այսպես՝ ընտրել>հըյրել, ընտրուք>հըյրուք "ընտրվածք, զտվածք" , կտրիմ>զըյրիջ, կտրել>զըյրել, կտարել>զօյրել, մանրսել>մանտրել>մայրել, պատրոյգ>բայրուք, Պետրոս>Բէյրօզ :

98. Տ-ի հնչյունափոխության մասնավոր դեպքեր. փետուր>թէփուր, կտուց>զըթնօց և տարգալ>թըքալ բառերում տ-ն հնչյունափոխվում է թ-ի՝ փ, ց և թ հնչյունների մասնակի առնմանությամբ :

Տապալել>թաբել բառում տ-ի դիմաց բարբառն ունի թ՝ հավանաբար թաւալել>թաբել բառի ազդեցությամբ : Այսպիսով թաբել բառը պարունակում է տապալել և թաւալել բառերի արտահայտած իմաստները : Պատինման>բալջան բառը կազմվել է թուրքերեն պատլիման ձևից, որտեղ տ-ն ընկել է : Խորտուրորտ>խորթուրթ բառում առաջին բաղադրիչը գիտակցվել է իբրև խորթ, որի ազդեցությամբ էլ բառավերջում առկա է տ>թ հնչյունափոխությունը :

ՇՆՉԵՂ ԽՈՒՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ



99. Փ-ն բոլոր դիրքերում հիմնականում մնում է անփոփոխ . այսպես՝

Բառասկզբում՝ փաթաթել>փաթտել, փայտ>փայղ, փարատել>փարդել, փեսայ>փէսա, փնթի>փինթի, փոր>փօր, փոս>փօս և այլն :

Բառամիջում՝ եփել>էփել, թափել>թափել, շափել>շափել, քնհոտ>քիհօղ, տափակ>դափազ, փրփուր>փուրփուր և այլն :

Բառավերջում՝ եփէփ, թափ>թափ, թեփ>թիփ, ծափ>ծափ, ծեփ>ծէփ, շերեփ>շէրէփ, շափ>շափ և այլն :

100. Թոթափել>թօփտիլ "թափ տալ" բառում ըստ § 106-ի միջին թ-ն դառնում է տ : Ապա լեզվատամնային տ-ի ազդեցությամբ երկշրթնային խ-ն հնչյունափոխվում է շրթնատամնային փ-ի :

Ք

101. Բառասկզբում, ինչպես նաև ձայնավորներից ու ձայնորդներից հետո ք-ն մնում է անփոփոխ . ինչպես՝

Բառակազմում՝ քակել>քազել, քաղաք>քաղաք, քամի>քամի
քառասուն>քառասուն, քար>քար, բիթ>բինի, բոյր>բոր, քսան
քրսան և այլն :

Բառամիջում՝ գոքան>գոնքաչ, թքանել>թուլքալ, կաքալ>կա-
քալ, կնքել>զընքել և այլն :

Բառավերջում՝ ապրանք>արբանք, աշխարհ>աշխարհ, բուք
փուք, գիրք>քիրք, երեք>իրէք, երկայնք>երգանք, երկինք>էր
գինք, ժանիք>ժանիք, խելք>խիլք, խլինք>խրննիք, ծալք>ծալք,
կնուկնք>գունուկնք, ձնաք>ցառք, շնորհք>շընօրք, շողիք>շօղու
պահք>քաք, տեսիլք>դէսիլք, պատանք>քաղանք, ցամաք>ցամաք,
փորձանք>փօրցանք, քաղաք>քաղաք և այլն :

102. Բառամիջում և բառավերջում խուլ բաղաձայններից հի-
տո ք-ն հնչյունափոխվում է կ-ի: ք-ից առաջ ձայնեղները խը
լանում են, բարդ հնչյուններն էլ արտաբերվում են և թող-
նում խուլ բաղադրիչը. այսպես. քլ, ք-ի արտաբերումից հետո
մնում է շ, ք-ի փոխարեն՝ ա, իսկ ձ, ծ, ց-ի դիմաց՝ ս. հետե-
վաբար քչկ-ից առաջ կարող են լինել միայն ս, շ, խ, ա խուլ հըն-
չյունները: Բառամիջում այս դիրքում ունենք աղբառ>ախկաղ
բառն իր ածանցյալ ձևերով՝ ախկաղնալ, ախկաղութուն, ախկաղ-
ցունել, որտեղ քչկ-ն գտնվում է ղ-ից առաջացած խ-ից առաջ
և ցայթբել>ցատկել, քաղաքացի>քախկըցի բառերը: Մնացած օրի-
նակները գտնվում են բառավերջում :

Ա-ից հետո՝ ուռէցք>ուռէսկ, ջրաղացք>չաղարսկ, խօսք>
խօսկ, կուրծք>գուրսկ, նեղուածք>նէղվասկ, անէծք>անէսկ, վարձք
վարսկ, լուռք>վրլասկ, խոնջան ընթացք>խօնջընթասկ "վարտիթի
այն անցքը, որի միջով անց է կացվում խոնջանը":

Ե-ից հետո՝ մէջք>մէշկ, աչք>աշկ, առաջք>առաշկ, հրաշք>
հըրաշկ.

Խ-ից հետո՝ դազաղք>քաթախկ, դժոխք>թըժօխկ, խաղք>խախկ,
ճեղք>ջէխկ, մեղք>մէխկ, շողք>շօխկ, բողք>բօխկ:

Ք>ա-ից հետո՝ աղօթք>աղօտկ:

103. Իրար հաջորդող երեք բաղաձայնների առկայությունը
դեպքում միջին դիրքի ք-ն ընկնում է կամ հնչվում շատ թույլ-
ի ներքս>նէրս, աչք կապուկ>աշգաբուկ, խօսք կապ>խօսգաբ " նը-
շանաղրությանը նախորդող պայմանավորվածություն " :

104. Բառավերջի ք-ն անփոփոխ է մնում շարժք>ժածք "երկրաշարժ" բառում և սղվում է անվարտիք>անվարդի բառում:

թ

105. Համեմատաբար կայուն ըրդծայն է: Սովորաբար մնում է անփոփոխ: Այսպես օրինակ՝

Բառասկզբում՝ թաթախել>թախտէլ, թաթ>թաթ, թաղել>թաղէլ, թառ>թառ "հավի թառ", թաս>թաս, թաց>թաց, թուլթ>թուլթ, թուղթ>թուլիտ և այլն:

Բառամիջում՝ անօթի>անօթի, արթուն>արթուն, երթալ>երթալ, թաթիկ>թաթիկ, թարթիչ>թարթիչ, թեթև>թէթէվ, թթու>թուլթու, խայթել>խաթէլ, կաթիլ>գաթիլ (բայր), կթել>գըրթել, ծայթիլ>ջաթիլ, մորթալ>մօրթէլ, փրթանիլ>փըրթիլ, բերթել>բէրթէլ, բթան>բըրթան:

Բառավերջում՝ ամօթ>ամօթ, արծաթ>էրծաթ, թաթ>թաթ, թուլթ>թուլթ, խանութ>խանութ, կաթ>գաթ, կոթ>գօթ, մուլթ>մուլթ, շաբաթ>շափաթ, ուրբաթ>ուրփաթ, քիթ>քինթ և այլն:

Անփոփոխ է մնում նաև վերացական գոյականներ կազմող ութիւն>ութուն ածանցի թ-ն՝ բարութիւն>փարութուն, գէշութիւն>քէշութուն, ուրախութիւն>ուրախութուն և այլն:

106. Նույն բառում իրար հաջորդող թ-երից երկրորդը տարնամանությամբ դառնում է տ. ինչպես՝ փաթաթել>փաթտէլ, սոթոթել>սօթտէլ, թոթափել>թօփափիլ: Վերջին բառի մասին տես § 100:

107. թ-ից կամ ղից հետո թ-ն խլանում է և հնչվում տ. օրինակ՝ գղթոր>բըրխտօր, թաթախել>թախտէլ (թ // խ դրափոխությամբ), թղթատել>թըրխտողէլ, թուղթ>թուլիտ, մաղթել>մախտէլ, յաղթել>հախտիլ: թ-ն խլանում է նաև շնչեղ խուլներից առաջ՝ աղօթք>աղօտկ:

Պ Ա Յ Թ Ա Շ Փ Ա Կ Ա Ն Ն Ծ Ր

Ջ

108. Չայնեղ պայթաշփական ջ-ն ն ոնգային հնչյունից հետո մնում է անփոփոխ. ինչպես՝ բանջար>փանջար, թնջուկ>թունջուկ, նահանջ>նահանջ, նանջ, տանջանք>դանջանք, տանջել>դանջէլ, խոնջան>խօնջան, խոնջան ընթացք>խօնջընթակ:

109. Բաղածայնից առաջ բարբառային ձևերում ջ-ն հնչյունանափոխվում է չ-ի, ապա վերջինս տարբալուծվում է բաղադրիչների և պահպանվում շ տարրը. այսպես՝ իջանել>չէշնալ,

անաջքատաշկ, մէջքամէշկ: միջնակամիշնէգ, ոջիլոտօշլօշ:
Հոլովման կամ ածանցման ժամանակ ջ-ն նույն օրոնքով դառնում
է շ. առաջատաշ, բայց՝ առաշվա, ականջլանգաշ, բայց անգըշ-
վընի և այլն :

110. Մնացած դիրքերում ջ-ն հնչյունափոխվում է շնչեզ
խուլ չ-ի.

Բառասկզբում՝ ջահշահ, ջարդշարթ, ջորիշօրի, ջուրշ
չօռ, ջրաղացքշաղարսկ, ջրհեղեղշլըրէղէղ, ջրհորշլըրվէր և
այլն :

Բառամիջում՝ աղջիկշախշին, աղաջուրշախչօռ, առաջեաշ
առչէվ, առաջիշառչի, առաջնեակշառչընէգ, թըջնշլթըրչէլ, ի-
ջուցանեւշէշցունէլ, հաջեւշհաչէլ, միջեւշմինչէլ, մըջիւնշ
մուրչում, յաջողեւշաչօղէլ, ողջոյնշօխչուն, ոջիւշօչիլ և
այլն :

Բառավերջում՝ ականջլանգաշ, առաջատաշ, առէջառէչ, ա-
ռողջառօխչ, բաղարջլփաղարչ, մէջլամէչ, բաշքաշ, բուրջլբուրչ
և այլն : Ոջ հոլովման պատկանող բառերի հոլովիչի ջ-ն նույն-
պես հնչյունափոխվում է չ-ի՝ դալօշ, թուրօշ, դաբըրօշ:

2

111. ն ոնգայինից հետո ծ-ն մնում է անփոփոխ. այսպես՝
աղանծեւշաղընծէլ, բարծրփանծըր, բրինծփիրինծ, գանծքանծ,
գինծքինծ, խանծեւշխանծէլ, խնծորշխընծէր, տանծղանծ: Գան-
ձանակշքանգանակ բառում ծ-ի փոխարեն հնչվում է զ, որի մա-
սին տես Ջ 112 :

112. Բաղաձայններից առաջ ծ-ն տարրալուծվում է բաղադ-
րիչների և պահանում շփական բաղադրիչը: Եթե ծ-ին հաջորդում
է ձայնեղ բաղաձայն, ապա նրա տարրալուծումից հետո մնում է
զ, իսկ խուլ բաղաձայն հաջորդելու դեպքում այն խլանում է
և դառնում ս. այսպես՝ անծրեւշհարգէվ, թնծկաւշթըզգալ, վարծք-
վարսկ: Անձնական դերանվան առաջին դեմքի եզակի բացառական
և գործիական հոլովներում, որոնք կազմված են տրականին(ինծ)
ավելացնելով մէ, մօք վերջավորությունները, ծ-ն նույն ձե-
վով դառնում է զ՝ ինծմէնշիզմէն, ինծմօքշըզմօք:

Գանձանակշքանգանազ բառում ծ-ի դիմաց բարբառն ունի զ, չը-
նայած այն չի գտնվում բաղաձայնից առաջ: Հավանաբար այստեղ

բարբառի օրինաչափությամբ սղվել է բառամիջի ա-ն, որի հետևանքով ձ-ն ընկել է ն-ից առաջ և փոխվել զ-ի: Ապա բառը գիտակցվել է իբրև գրական բառ, որտեղ վերականգնվել է բառամիջի ա-ն, իսկ ձ > զ-ն մնացել է անփոփոխ:

113. Ընացած դիրքերում ձ-ն հնչյունափոխվում է ց-ի. այսպես՝ բառասկզբում ձագ > ցաք, ձայն > ցան, ձգել > ցըքէլ, ձեռք > ցառք, ձև > ցէվ, ձի > ցի, ձիգ > ցիք, ձիւն > ցոն, ձիւթ > ցիթ, ձմեռն > ցըմար, ձուկն > ցուկ և այլն: Այս դիրքում ձաղկն > զաղգէլ և ձագար > զաքար բառերում ձ-ի փոխարեն հնչվում է զ:

Բառամիջում և բառավերջում ձ-ն սովորաբար հաջորդում է ընդհանուր դիտարկին. օրինակ՝ արծաթել > արցըգէլ, բարձ > փարց, դարձ > փարց, դարձուցանել > փարցունէլ, որձ > օրց, փորձ > փօրց, փորձանք > փօրցանք և այլն: Անկախ դիրքում, այսինքն ձայնորդից հետո, ձ-ն գտնվում է միայն օձ > օց բառում:

3

114. ձ-ի դիմաց բառասկզբում, բառամիջում (ձայնավորից առաջ) և բառավերջում բարբառն ունի ջ. այսպես՝

Բառասկզբում՝ մակառ > ջազաղ, ճայիիլ > ջաթիլ, ճանաչել > ջաշնալ, ճանապարհ > ջամփա, ճանկ > ջանգ, ճանմ > ջանջ, սչալ > ջըչալ, սերմակ > ջէրմագ, սիւ > ջիվ, սիւղ > ջէղ, սկոյի > ջուլքուի, մուծ > ջուլջ, մպոտ > ջըոքօղ, մրագ > ջըրաք և այլն:

Բառամիջում՝ ամիլ > աջիլ, տամիկ > դաջիգ, կոմակ > զօջագ, վիմակ > վըջագ, պմնդն > ըրջէղ, մնմդուկ > ջունջուդուկ և այլն:

Բառավերջում՝ կարծ > զարջ, կաւիմ > զավիջ, կոմդ > զօջ, կընմիոն > զըրիւնջ, խնդ > խէղջ, խիդ > խիղջ, մանմ > ջանջ, մուծ > ջուլջ, կարիմ > զըրիւլ և այլն:

115. ջ-ի հնչյունափոխված մ-ն բառամիջում ձայններին առաջ տարրալուծվում է բաղադրիչների, ըստ որում կորցնում է դիտարկնայինը և գահում ժ-ն: Օրինակ՝ կոմակել > զօջգէլ > զօժգէլ, խղմտանք > խըժմըղանք (դ-ն ընկնում է):

116. -Անալ վերջածանցով կազմված բայերում բաղաձայններից առաջ արմատի անկախ գիտակցմամբ մ > ջ-ն մնում է անփոփոխ. այսպես՝ խնդմանալ > խէղջնալ, կարմանալ > զարջնալ, կարիմանալ > զըրիւլնալ:

ծ

117. ծ-ն բառասկզբում, բառամիջում (ծայնավորից առաջ) և բառավերջում հնչյունափոխվում է ծայնեղ պայթաշփական ձ-ի: Այսպես՝

Բառասկզբում՝ ծալել > ձալլել, ծախել > ձախել, ծաղիկ > ձաղիկ, ծամել > ձամմել, ծամոց > ձամմոց, ծանր > ձանդր, ծառ > ձառ, ծառայ > ձառա, ծարաւ > ձարավ, ծեփ > ձէփ, ծիլ > ձիլ, ծիծ > ձիծ, ծըլիլ > ձըլիլ, ծծել > ձըծել, ծնանիլ > ձընիլ, ծոմ > ձոմ, ծով > ձով, ծոց > ձոց, ծունկն > ձունգ և այլն :

Բառամիջում՝ ծայնավորից առաջ՝ ածել > հածել, անիծել > անըծել, արծաթ > էրծաթ, գործել > բործել, խծիպ > խըծիբ, կծու > գուծու, շինծու > շընծու, պայծառ > բայծառ, պարծանալ > բարծըննալ, բերծել > բէրծել և այլն :

Բառավերջում՝ անդամալոյծ > անթամալուծ, անիծ > անիծ, աստուած > ասված, գործ > բործ, ծեծ > ձէծ, ծիծ > ձիծ, կոծ > գօծ, կրծկիծ > զըսկիծ, մեծ > մանծ, ցած > ցած և այլն: ծ > ձ հնչյունափոխությանն է ենթարկվում նաև հարակատար դերբայի ած վերջավորության ծ-ն՝ կերած > զերած, բնած > բընած, բրանած > բըրընած, մոռացած > մառցած և այլն :

118. Բարբառի ծայնեղ բաղաձայններից կամ ծայնորդներից առաջ ծ-ն հնչյունափոխվելով ձ-ի, տարրալուծվում է և պահում զ բաղադրիչը. այսպես՝ ածել > աձլել, գործաւար > բօզվար, խածանել > խազնել, խպծ > խըզբել, ծածկուիլ > ձեզզվիլ, կծկել > զըզգել, կծուիլ > զըզվիլ, ցածանալ > ցազնալ, մեծանալ > մազնալ, կայծկալ > զազըլղալ :

119. Խուլ բաղաձայններից առաջ նույն դիրքում ծ-ի դիմաց բարբառն ունի ս : Այդ հաստատվում է շնչեղ խուլ ք-ից առաջ ծ > ս-ի հնչյունափոխության օրինակներով: Այդ ծ > ս-ի ազդեցությամբ ք-ն կորցնում է շնչեղութիւնը և դառնում խուլ՝ կ. այսպես՝ անէծք > անէսկ, կուրծք > գուրսկ, մանուածք > մանվասկ, նեղուածք > նէղվասկ և այլն :

120. Բառակապակցութիւնների մեջ, երբ բառավերջի ծ > ձ-ին հաջորդող բառը սկսվում է ծայնեղ բաղաձայնով, ծ > ձ-ն ըստ § 118-ի դառնում է զ, իսկ խուլ բաղաձայնով սկսվող բառերից առաջ ըստ § 119-ի դառնում ս. օրինակ՝

Քիրքօրը ձէգ գէրավ - " Գրիգորը ծեծ կերավ":

Չաղան ձիգ դուր - " չաղային՝ -երեխային ծիծ տուր":

Քիրքը ցաս թիր - " գիրքը ցած դիր ":

Քիրքը ցագ դար - " գիրքը տար ցած" :

121. ծ-ի հնչյունափոխության մասնավոր դեպքեր.

ծառգարդարչգարգարթար բառում բառամիջի զ-ի առնմանությամբ բառասկզբի ծ-ն դարձել է զ: ծածկելչտասկէլ և ծածկոցչտասկոց բառերում բառասկզբի և բառամիջի ծ-երը տարրալուծվել են ա և ս բաղադրիչների, ըստ որում բառասկզբին մնացել է ա, իսկ բառամիջում՝ ս:

2

122. Հին հայերենի չ-ն բառասկզբում, բառամիջում (ծայնավորից առաջ) և բառավերջում մնում է անփոփոխ. այսպես՝ բառասկզբում՝ շամիչչամիչ, շարչար, շափչափ, շեչչէչ, շորչչօր, շորթչչօրս, շուանչչըվան, շուխայչչուխա և այլն :

Բառամիջում՝ աղաչելչաղաչէլ, աչուկչաչուկ, թռչունչթուռչուն, կանչելչգանչէլ, կանչիլչգանչիլ, փչելչփռչէլ և այլն :

Բառավերջում՝ գրիչչբրբիչ, գոքանչչգօնքաչ, ժամակոչչժանգօչ, ինչչդինչ, կանաչչգանանչ, կապիչչգաբիչ, մատնիչչ մաղնիչ, շամիչչչամիչ, շեչչչէչ, սրբիչչզրբիչ, աստուածաշունչչասվածաշունչ: Բայց՝ թարթիչչթարթիչ, որի մասին տես ճ 123-ի ծանոթությունը :

123. Բաղաձայններից առաջ չ-ն տարրալուծվում և վահում է չ բաղադրիչը: Օրինակ՝ ամաչելչամբշնալ, ամաչկոտչամբշկօղ, աչքչաշկ, ինչ կաչիչ գա, ինչքանչիչքան, կոչնակչգօշնագ, ժանաչելչջաշնալ, քչանալչքիշնալ և այլն :

Բազմավանկ բառերի հոգնակիում բառավերջի չ-ն, երբ ընկնում է ն ձայնորդից առաջ, նույն օրենքով դառնում է չ՝ գօնքաշնէր, զրբբիշնէր, թարթիշնէր, մաղնիշնէր և այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Հաճախակի գործածության հետևանքով թարթիչներչթարթիշնէր հոգնակի ձևում չ-ն գիտակցվել է իբրև արմատական հնչյուն և նրա համաբանությամբ գործածվել է եզակիում՝ թարթիչ:

124. Գրաբարում չ սոսկածանց ունեցող բայերը Մալաթիայի բարբառում կորցրել են այդ ածանցը, չնայած նրանց համար

խորթ չէ այդ բայերի գործածուածութիւնը նաև չ-ով. օրինակ՝
թռչիւթ թռնիւ (նաև թռչիւ), հանգչիւ չհանքիւ, կպչիւ չզըբնիւ,
հախչիւ չհախնիւ, հակչիւ չհագիւ, փլչիւ չփռլիւ և այլն :

8

125. Ծնչսդ խուլ վայթաշփական ց-ն բաղաձայններից առաջ
կորցնում է վայթական բաղադրիչը և վահում շփական տարրը՝ ս-ն.
այսպես՝ անցանել չանցնել չասնիւ, երիցակին չիրիսգին, խոցոտել չ
խօստէլ, խոցոտուք չխօստուք "ցավ, հիվանդութիւն", լուածք չ
վըլասակ, ծոցաւոր չօսվօր, վեցանոց չվէսնօց, ուռէցք չուռէսկ,
ջրաղացք չշաղարակ, խոնջան ընթացք չխօնջընթասկ, բացախիւ չբաց-
խիւ չբասխիւ, օրօրոցակա չօրըսգաք, հացկերոյթ չհասկէրուք և
այլն : Սույն ձևով ց-ն հնչյունափոխվում է ս-ի՝ ցոյական հիմ-
քով կազմված կրավորական բայերում. վըլասվիւ, փասվիւ և այլն :

126. Մնացած դիրքսրում ց-ն մնում է անփոփոխ. այսպես՝
բառասկզբում ցածցած, ցամաք չցամաք, ցաւցաւ, ցորեան չցօրին,
ցուրտ չցուրդ և այլն :

Բառամիջում՝ գիւղացի չբէղացի, դրացի չթըրացին, թացուծիւն չ
թացուծուն, հարցանել չհարցունէլ, հարսնացու չհարսընցու, բաղցը
բախցըր, բացախ չբացախ և այլն :

Բառավերջում՝ առաջուց չառչուց, բաց չփաց, թաց չթաց, խոց չ
խօց, ծոց չժօց, կից չգից, հաց չհաց, հարց չհարց, վեց չվէց, ցեց չ
ցէց, ցից չցից, խարտոց չխարդօց, մատնոց չմաղնօց և այլն :

127. Ց-ն անփոփոխ է մնում նաև՝ ա) պատճառական կերպի
բայերում՝ ազուցանել չհաբւունէլ, ցաւեցուցանել չցավցունէլ և
այլն :

բ) Անցյալ կատարյալի ցոյական հիմք ունեցող բայերում՝
թուլացայ չթուլցա, իմացայ չիմացա, մոռացայ չմառցա և այլն :

Շ Փ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ՉԱՅՆԵՂ ՇՓԱԿԱՆՆԵՐ

9

128. Գրաբարի ձայննդ շփական զ-ն կայուն բաղաձայն է և
բոլոր դիրքսրում սովորաբար մնում է անփոփոխ. ինչպես՝ բա-
ռասկզբում՝ զանգակ չզանքագ, զատ չզաղ, զատիկ չզաղիգ, զաւակ չ
զավագ, զենուլ չզէնէլ, զգուհի չզըզվիւ, զոքան չզօնքաչ, զը-

րուցել շոգուրցել և այլն :

Բառամիջում՝ ազապ ազար, ազաեւ ազադէլ, ազնիւ ազնիվ, ազոխ ազոխ, բազմիւ փազմիլ, գերեզման քերէզմէր, զգել քը-գէլ, լեզու լէզու, լիզել լըզէլ, խոզան խօզան, ծառաբոլար քարաբոլար, հազալ հազալ, հազար հազար, մազաման մազման, ուզել շուզէլ, վազել վազէլ և այլն :

Բառավերջում՝ բզէզ փրզէզ, ընկոյզ ընզօզ, խազ խազ, խոզ խօզ, հազ հազ, կկուզ շոուզուզ, մազ մազ, ողկոյզ զօզ, պարտէզ քարտէզ, քարոզ քարօզ և այլն :

129. Ջ զ ն շյուղումը դառնում է սկ. այսպէս՝ զզոյշ ըսկուշ, զզուշանալ շուսկուշնալ, ազգասկ, ազգական ասկական, այլազգայլասկ, ազգուտակասկըղազ :

130. Ջ-ն մասնավոր ն շյուղումիւթյան է ննթարկվել՝ երազ էլած բառում: Այդ բառածը հպանաբար անցել է մի այլ բարբառից, որտեղ ր շլ և զ ձ ն շյուղումիւթյուններն օրինաչափ են: Բացի այդ, քանի որ բաղաձայնից առաջ ձ-ն ն շյուղում է զ-ի (§ 112), ապա հնարավոր է, որ զ-ն էլ դառնա ձ: Թարբառախոսների ընկալմամբ զ-ն դիտվում է իբրև ձ-ից առաջացած ն շյուղում, ուստի երբ նրանք աշխատում են վերականգնել արմատական ն շյուղումի այլ ծայրահեղության են հասնում՝ զ-ն ձ են դարձնում այնտեղ, որտեղ արմատական ն շյուղում է: Հավանաբար այդպէս է նդսլ զ ձ ն շյուղումիւթյունը երազ էլած բառնում :



131. ժ-ն բոլոր դիրքերում հիմնականում մնում է անփոփոխ. այսպէս՝ բառասկզբում՝ ժամ շ ժամ, ժամակոչ, ժանգօշ, ժանգ շ ժանգ, ժանիք շ ժանիք, ժողովսլ շ ժողվէլ և այլն :

Բառամիջում՝ արժան շ ժան, արժեք շ ժէլ, բաժանել փաժնէլ, դժուար շ թրժար, դժոխք շ թրժօխկ, վարժատուն շ վարժողուն, յօժար շ օժար և այլն :

Բառավերջում՝ ոյժ ուժ, ապառաժաբառաժ "խիստ ժլատ" և այլն :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Պատիժ քաղիջ բառում բառասկզբի և բառամիջի ձայնեղացած պայթականների (ք, դ) նմանակութեամբ բառավերջի ժ-ն դարձնել է ջ, իսկ պժգալ շ թրջալ "զգվել"

դժգոյթը ընկոյ, թընկոյիլ բառերում ժ-ի փոխարեն հնչվում է չ (տես § 76):

Ղ

132. Բառասկզբում ղ հանդիպում է միայն փոխառյալ բառերում : Բառասկզբի ու-ի սղումից հետո ուղարկել > զառվել բառում ղ-ի դիմաց հնչվում է զ:

133. Մնացած դիրքերում սովորաբար մնում է անփոփոխ. հնչվես՝

Բառամիջում՝ աղալ > աղալ, աղանձել > աղընձել, աղաւնի > աղըվնի, աղի > աղի, աղիւս > աղոս, աղօթք > աղօտկ, գիւղացի > քէղացի, դձղին > թէղին, ժողովողը > ժօղվօխկ, խաղալ > խաղալ, ծաղիկ > ծաղիզ, լեղի > լէղի, մաղսլ > մաղէլ, շողիք > շօղուք, պաղիլ > քաղիլ, սողալ > սօղալ, քաղաք > քաղաք և այլն :

Բառավերջում՝ աղաղ, գիւղ > քէղ, գող > քօղ, դող > թօղ, իւղ > յէղ, թաղ > թաղ, խաղ > խաղ, խաղող > հավէղ, կող > գօղ, հեղ > հէղ, հող > հօղ, մաղ > մաղ, միւղ > ջէղ, պաղ > քաղ, սուղ > սուղ, ջրհեղեղ > ջըրէղէղ և այլն :

134. Չայնորդներից և բարբառի ձայնեղներից առաջ ղ-ն նույնպես մնում է անփոփոխ. հնչվես՝ աղտաղղ (աղղօղ), աղէկ (էկ) > աղգէզ, բաղանիք > փաղնիք, գաղտուկ > քօղղուզ, ժողովել > ժօղվէլ, կաղնի > գաղնի, կաղնի > զըղբել, խնդ > խէղջ, ծաղկիլ > ծաղգիլ, սուղանալ > սուղնալ, սաղմոս > սաղմօց և այլն :

135. Բարբառի խուլ և շնչեղ խուլ հնչյուններից առաջ ղ-ն դառնում է խ: Գրաբարյան շնչեղ խուլ սրը ղ > խ-ից հետո վերածվում են խուլների, իսկ բարբառային շնչեղ խուլ սրը (զըրաբարյալ ձայնեղները) այս դիրքում մնում են անփոփոխ: Այսպես՝

ա) Գրաբարյան շնչեղ խուլներից առաջ՝ ասնդնատնել > ասխընդէլ, աղքատ > ախկատ, դողացուցանել > թօխցունէլ, թղթատնել > թըխտաղէլ, թուղթ > թուխտ, ժողովողը > ժօղվօխկ, խաղք > խախկ, մեղք > ջէխկ, մաղթել > մախտէլ, մեղք > մէխկ, յաղթել > հախտէլ, շողք > շօխկ, քաղցր > քախցըր, քաղաքացի > քախկըցի, բողբ > բօխկ:

բ) Չայնեղազրկված շնչեղ խուլներից առաջ՝ աղք > ախփ, աղբիւր > ախփիւր, աղջիկ > ախջին, եղբայր > ախփար, առողջ > առօխջ, աղաջուր > ախջուր, ողջանալ > օխջըննալ :

136. Մասնավոր փոփոխութիւններ են.

Սեղմել > սըխմել, ուր բառի վրա ազդել է թուրքերեն SKP-
MAG նույն նշանակութեամբ բառի արմատը: Խաղող > ֆալէղ բա-
ռում բառակերպի ղ-ի տարնամնութեամբ բառամիջի ղ-ն դարձել է
վ:

Վ

137. վ-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. այսպես՝

Բառակերպում՝ վազել > վազել, վաթսուն > վաթսուն, վախ > վախ,
վազի > վազի, վայելել > վայելել, վառեակ > վառեակ, վեց > վեց, վի-
ճակ > վըջակ, վկայ > վըզա և այլն :

Բառամիջում հանդիպում է միշտ ղ-ից հետո կամ բարդութեան
երկրորդ բաղադրիչի սկզբում՝ անվախ > անվախ, անվարտիք > անվար-
դի, գովել > բովել, ժողովել > ժովել, վարդավառ > վարթըվար և այլն:

Բառակերպում (նույնպես ղ-ից հետո)՝ ժողով > ժով, ծով >
ծով, կողով > գով, կով > գով, հով > հով, ով > ով և այլն :

ԽՈՒԼ ԾՓԱԿԱՆՆԵՐ

Ս

138. Համարյա բոլոր բառերում մնում է անփոփոխ. ինչպես՝

Բառակերպում՝ սալոր > սավլոր, սամիթ > սամիթ, սանդ > սանդ,
սեր > սիր, սէր > սէր, սիւն > սուն, սուգ > սուր, սուրբ > սուրբ, սուր >
սուր և այլն :

Բառամիջում՝ աստուած > ասված, երեսուն > առսուն, խսիր >
խըսիր, խօսիլ > խօսիլ, հասնել > հասնիլ, հարսանիք > հարսնիք, նըս-
տիլ > նըստիլ, քառասուն > քառսուն և այլն :

Բառակերպում՝ ամիս > ամիս, երես > էրէս, կէս > գէս, պակաս >
բագաս, թաս > թաս, պէս > բէս, դարպաս > թարբաս, դաս > թաս, միս >
միս և այլն :

Բացառութիւն է սաղմոս > սաղմօց բառը, որը կազմվել է
ճաշօց՝ Մաշօց և այլ բառերի նմանակութեամբ:

139. Բառակերպում սպ, սկ հնչյունախմբերում ս-ն ընկնում
է՝ ինչպես՝ սպաննել > բաննել, սկսել > գէսուր, սկսարայր >
գէսար: նույն դիրքի ս-ն մնում է անփոփոխ սպասուհի > ըսբա-
սուլի և սպասուոր > ըսբասավոր բառերում :

140. ս-ն ձայնեղանում է սրբել > զըրփել, սրբոց > զըրփօց,

սողնակ>զօղնագ և Պետրոս>Բէյրօզ բառերում:

141. Թ և տ հնչյունախմբերը առաջացնում են ց պայթա-
շփական բարդ հնչյունը: Այդ դիրքի բառերն են՝ արտասուք>
արցունք, վաթսուն>վացճուն: Վերջին բառում կրկնվել է ց-ն և
տարնմանությամբ նրկրորդ բարդ հնչյունը դարձել է ծ: Այդ
բառի համաբանությամբ յիսուն>իցճուն բառում ս-ի փոխարեն
բարբառն ունի ցձ:

Ե

142. Բոլոր դիրքերում մտում է անփոփոխ:

Բառասկզբում՝ շաբաթ>շափաթ, շալակ>շալագ, շահ>շա(հ),
շապիկ>շափիք, շատ>շաղ, շերեփ>շերէփ, շէն>շէն, շինի>շըլլի,
շնորհք>շընօրք, շուն>շուն և այլն :

Շարժք)>ժօք բառում բառամիջի ժ-ի ազդեցությամբ բառ-
սկզբի հնչյունն էլ դարձել է ժ.

Բառամիջում՝ աշխարհ(ք)>աշխարք, աշուն>աշունք, գիշեր>
քըշեր, խարշել>խաշէլ, կաշի>գաշի, կուշա>գուշա, հրաշք>հը-
րաշկ, մաշել>մաշէլ, յիշել>իշէլ, պաշտել>քաշտէլ, տաշել>դա-
շէլ, փշրել>փըրշէլ, քարշել>քաշէլ, քշել>քըշէլ և այլն :

Բառավերջում՝ անոյշ>անուշ, գէշ>թէշ, էշ>էշ, թերխառ>
թէրխաշ, խաշխաշ>խաշխաշ, ուշ>օշ և այլն :

Խ

143. Մտում է անփոփոխ. ինչպես՝

Բառասկզբում՝ խաբել>խափէլ, խաղ>խաղ, խոզ>խօզ, խոնարհ>
խօնար, խոնջան>խօնջան, խոտ>խօղ, խմոր>խըմէր, խնձոր>խընձէր,
խոց>խօց, խոսք>խօսկ և այլն :

Բառամիջում՝ աշխարհ(ք)>աշխարք, դժոխք>թըժօխկ, դրախտ>
թըրախտ, թափախել>թախտէլ, խիմիլ>խըմիլ, մոխիր>մախիր, ծախել>
ծախէլ և այլն :

Բառավերջում՝ գլուխ>գըլօխ, կանուխ>գանուխ, մուխ>մուխ,
քացախ>քացախ և այլն :

Խաղող>հավէղ բառում բառասկզբի խ-ի փոխարեն բարբառն
ունի հ:

Հ

144. Բառասկզբում, ինչպես նաև ան նախածանցից հետո, չ-ն
մտում է անփոփոխ. այսպես հագ>հագ, հագար>հագար, համ>համ,

հայիլ > հայիլ, հանել > հանել, հաջել > հաջել, հասկ > հասկ, հասկանալ > հասկանալ, հարցանել > հարցունել, հաց > հաց, հտի > հարու, հերու > հերու, հող > հող. և այլն :

Ան - նախածանցից հետո՝ անհամ>անհամ, անհամքսր>անհամքիր, անհաւառ(ք)>անհավառ, անհոգ>անհոք և այլն :

145. Երկու ձայնավորների միջև գտնվող բառամիջի հ-ն արագախոսուձյան ժամանակ արտասանվում է շատ թույլ: Նույնն է տեղի ունենում բառակապակցությունների մեջ, երբ հ-ն ընկնում է երկու ձայնավորների միջին դիրքը. այսպես՝ նահանջ > նահանջ, նահատակ > նատակ, քնահատ > քընատ, շնորհաւոր > շընատավոր և այլն. կամ՝ չի հասնում աչքասնիր ա, կը հավատամ > գավոամ, ինձ համար > ինձի ըմար, բեզ համար > բըզի ըմար և այլն: Սակայն երբ խոսողը ճիգ է թափում իր միտքն ավելի վարդ արտահայտել, ապա այդ դիրքի հ-ն լսվում է որոշակի: Անհարժեշտ է նշել, որ գրաբարին նախորդող շրջանում իսկ հ-ն արտասանվում էր թույլ: Այդ է պատճառը, որ մի քանի բառեր ավանդվել են և՛ հ-ով, և՛ առանց հ-ի. օրինակ՝ ջրհոր - դան // ջրորդան, քնահա // քնառ, փայտահա // փայտատ և այլն:

146. Եթե բառամիջում ձայնավորից հետո հ-ին հաջորդում է ի ձայնավորը, ապա սղվում է հ-ն, և բառն ստանում է յ ձայնակապը: Սույնը տեղի է ունենում նաև ուհի վերջածանցով կազմված՝ իգական սեռի անուններ ցույց տվող բառերում, ինչպես՝ պահել > քէյիլ, դժգոհիլ > թըշկոյիլ, դահիճ > թայիլ, թագուհի > թաքույի, Արմենուհի > Արմէնույի, Սրբուհի > Սըրբույի, Հայկուհի > Հայգույի և այլն: Արտասանական դժվարությունների պատճառով ուհի վերջածանցով կազմված իգական հատուկ անուններում կրճատվում է անանցի հի > յի մասնիկը. այսպես՝ թագուհի > թաքուգ, Հայկուհի > Հայգուգ, Սրբուհի > Սուրբիգ, Ջարուհի > Ջարուգ և այլն:

147. Երբ հ-ն հանդես է գալիս որպես վանկափակ հնչյուն, իսկ հաջորդ վանկն էլ սկսվում է բաղաձայնով, ապա հ-ն վընում է անփոփոխ. այսպես՝ մահուան > մահվան, բովհր > քօրհէլ, ազահանալ > աքահանալ, պահպիլ > քահպըղիլ և այլն:

148. Բառավերջում ք-ից առաջ կամ ք-ից հետո հ-ն ընկնում է, ինչպես՝ աշխարհք > աշխարք, խոնարհ > խօնար, խորուրդ, խորուրի, շնորհք > շընօրք, պահք > քաք և այլն:

149. Բառավերջում հ-ն ծայնավորներից (հատկապես ա-ից) հետո հնչվում է շատ թույլ. ինչպես՝ ազահաքա(հ), բահիա(հ), դժգոհթըշկօ(յ), ջահշա(հ), մահմա(հ), շահշա(հ) և այլն:

150. Բարդ բառերի երկրորդ բաղադրիչի սկզբի հ-ն ընկնում է. ինչպես՝ հրահրել, հրահրել, հովհարել, ջրհեղել, շրթհեղել, իսկ պատահանքադֆան, շեղհողշըռֆեղ բառերում հ-ի դիմաց հնչվում է ֆ, ջրհորշըռֆել բառում՝ վ:

151. Օրհնեալ բառում և նրա ածանցյալ ձևերում հ-ի դիմաց բարբառն ունի շ՝ օրշնել, օրշնյալ, օրշնանք և այլն :

Չ Ա Յ Ն Ո Ր Դ Ն Ն Ր

Լ

152. Ալեն դիրքերում լ ծայնորդը համարյա մնում է անփոփոխ. ինչպես՝ լալլալ, լակնլլըզել, լայնլան, լեռնլառ, լեզուլլեզու, լիզնլլըզել, լոյսլուս, լուսնալլվրալ, ալիւրալիւր, ածնլիւրալիւր, շակլայնիադլա, ելանելլալ, իլիկիլիկ, խնլքիլք, ծլիլծրիլ, շալակշալազ, սալորսավլոր, քայլելքալլել, այլալ, էլ, առալէլէվէլ, աւելալիլ, տարզալթըբալ, խալխալ, խուլլխուլլ, ծիլծիլ, ոջիլօջիլ և այլն :

Միայն ըոյլքիօրք "համաստեղություն" բառում լ ծայնորդի փոխարեն բարբառն ունի ր:

152. Գրաբարի անորոշ դերբայի լ-ն մնում է անփոփոխ, իսկ անցյալ դերբայի լ-ի դիմաց բարբառը վաղակատար դերբայում ունի ր. այսպես՝ գրելքըրել, խօսիլխօսիլ, խաղալխաղալ, մոռանալմառնալ, գրեալքըրիլ, խօսեցեալխօսիլ, խաղացեալխաղցիլ, մոռացեալմոռցիլ և այլն :

Ն

154. ն ծայնորդը բառասկզբում, ծայնավորների միջև, մի բաղաձայնի մոտ և բառավերջում մնում է անփոփոխ. այսպես՝ նամակշամազ, ննդնէղ, նորշօր, նուռնշուռ, նստիլնքստիլ և այլն, անունշանուն, խոնարհիւնար, կանաչգանանչ, մանելմանել և այլն : Բռնելիլրոնել, գոբանչգօնքաչ, հինգհինգ, ճանկշանգ, միլնակմիշնէգ, մթանալմութնալ, մեռանիլմառնիլ և այլն, տունշդուն, շունշուն, երկայնէրզան և այլն:

ն ծայնորդը լ-ի առնմանութեամբ դարձել է լ՝ նմանըլման բա-
ռում և նրանից կազմված ձևերում՝ ըլմանիլ, ըլմանցունել :

155. Չայնավորից հետո և արկու բաղաձայնից առաջ բառ-
միջի ն-ն սղվում է: ն-ն այդ դիրքում կարող է գտնվել նաև
ծայնավորնարի սղման կամ բաղաձայնների հավելման հետևանքով,
օրինակ՝ անկանիլ > անկնիլ > իյնալ, անձրև > հարգէվ, անցանել > աս-
նիլ, ընտրել > հըյրել, ընտրուք > հըյրուք, թնձկալ > թըզզալ, ման-
րնլմանդրէլ > մայրէլ, այստեղից էլ՝ մարյէ մուրյէ "մանր-մու-
նըր", հիւանդանալ > հըվընդնալ > հըվըդնալ, ցնկնիլ > ցըյնիլ և
այլն :

ԵԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.- Եթե նույն դիրքի բաղաձայններից մեկը
նէր հոգնակնրաի ն բաղադրիչն է, ապա այս հնչյունափոխություն-
նը տեղի չի ունենում. ինչպես՝ ձուներունդներ, գանանչներ, հը-
վանդներ և այլն :

156. Շրթնային ը և մ հնչյուններից առաջ ն-ն հնչյունա-
փոխվում է մ-ի. այսպես օրինակ՝ այնպէս > ամբէս, անբախտ > ամ-
բախտ, անմահ > ամմահ, արթնանալ > արթըմնալ բառում երկրորդ ն-ի
տարնմանութեամբ առաջինը դարձել է մ: Մըջիւն > մուրչում բառում
ն > մ հնչյունափոխությունը մ-ի առնմանութեան արդյունք է:

157. նլ հնչյունախումբը դառնում է նն, իսկ լն-ն՝ լլ.
այսպես՝ նլ > նն՝ անալի > աննի, լն > լլ՝ կլանել > զըլնել >
զըլլել, շլնի > շըլլի, Ելանել > էլնել > էլլալ, լինիլ > ըլլիլ:

Խլինք և բանալի բառերում դրափոխութեան հետևանքով լ և ն
հնչյունները փոխել են տեղերը, ուստի առաջին բառում ըս-
տացվել է նլ, իսկ բանալի բառում լն հնչյունախմբերը, որոնք
օրինաչափորեն դարձել են նն և լլ՝ խլինք > խըննիք և բանալի >
բալլի:

Ածանցյալ բառերում, երբ ն և լ հնչյունները հանդիպում
են իրար, այս օրինքը չի գործում արմատի անկախ գիտակցման
անհրաժեշտութեամբ. այսպես՝ թուլանալ > թուլնալ, խլանալ > խուլնալ,
անլուայ > անվըլա, անլեզու > անլէզու և այլն :

ԵԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.- Անալի > աննի բառը կազմութեամբ ածանց-
յալ է, բայց բանի որ այստեղ ալի արմատի իմաստը մթազնվել է,
և բարբառում կա աղի ձևը, ուստի այն չի գիտակցվում որպես ա-
ծանցյալ (տ՛ն ջ 8) :

158. Բառավերջի գրաբարյան ծ վերջնահանգ հնչյունը բարբառում ընկնում է. ալստեղ տալիս ենք բոլոր օրինակները՝ ազբնշասպ, ակնշագ, աղեղնշաղօղ, ամառնշամար, ասեղնշասսէղ, արեգակնշարքագ, բեռնշիառ, դուռնշթօռ, եղունգնշուղունգ, երդումնշէրթում, թագումնշթաղում, թոռնշթօռ, լեառնշլառ, լիսեռնշլըսառ, ծուկնշծուկնգ, կաթնշգաթ, կամնշգամ, կուռնշգուռ, կնճիռնշգրոինջ, հարսնշհարս, հիմնշհիմ, ձուկնշցուկ, ձմեռնշցրմար, մասնշմաս, մատնշմաղ, մուկնշմուկ, նուռնշնուռ, ոսպնշօսպ, պճեղնշբըլէղ, սիսեռնշսըսառ, վայելումնշվայլում: Եօթնյօթը, ինն իննը, տասնշդասը, ինքնշհինքը բառերում ն-ի փոխարեն բարբառն ունի ը :

159. Չայնավորով վերջացող բառերում ն-ն հանդես է գալիս որպես որոշյալ հող՝ մաղնին, քինին, քարին և այլն : Մի քանի բառերում հավելյալ ն-ն (տե՛ս § 172) դադարսլ է իբրև հող գիտակցվելուց և ընկավում է որպես արմատական հնչյուն: Այդ բառերն են՝ դրացիշթըրացին, աղջիկշախչին: Որոշյալ առման դեպքում սրանք սուանում են ը հողը՝ թըրացինը, ախչինը:

Մ

160. Բոլոր դիրքերում մտում է անփոփոխ. ինչպես բառասկզբում՝ մագղմագ, մարդշմարթ, մայրշմար, մեծշմանծ, միսշմիս, մուխշմուխ, մուրշմուր և այլն :

Բառամիջում՝ ամանշաման, ամառնշամար, ամիսշամիս, ամօթշամօթ, չամիչշչամիչ, ցամաքշցամաք և այլն :

Բառավելջում՝ ժամշժամ, ծոմշժօմ, համշհամ, հումշհում և այլն :

Միայն ժամակոչշժանգօչ բառում մ-ի դիմաց բարբառն ունի ն:

Բ

161. Բարբառը ր-ով սկսվող բառ չունի: Բառամիջում ր-ն շատ անկայուն հնչյուն է: Որոշ բառերում ր-ն ընկնում է, որոշ բառերում էլ՝ հնչյունափոխվում է ռ-ի, կամ տատանվում ր-ի և ռ-ի միջև. այսպես՝ ընկնում է շ և ժ բաղաձայններից առաջ՝ արժանշարժան, արժելշարժել, կարժշգարժ, բարշելշբարշել, խարշելշխաշել (թնրխարշթէրխաշ), շարժքշժարժք, իսկ նույն

դիրքում գտնվող վարժապետ>վարժաբէդ, վարժառուն>վարժադուն
և վարժուիլ>վարժվիլ գրական բառերում ը-ն մնում է անփոփոխ:
ը-ն ընկնում է նաև մի շարք այլ բառերում, որոնց մասին
տես § 173:

Սերբոհիշյալ բառերում ը-ն հնչյունափոխվում է ը-ի կամ
տատանվում այդ երկու հնչյունների միջև՝ ծարավիլ>ծավընալ,
կրծնիլ>զրոծէլ, ջուրչոտ (չօր), երեկոյուտունգուն, ուրուն-
գուն, ըրնգուն, երեսուն>աոսուն:

162. Բառամիջում ը-ի հնչյունափոխության մասնավոր դեպ-
քսը սն ը>լ՝ երագդէլած: Օրօրանշօրան և Օրօրելիշօրէլ բառե-
րում ամփոփման հետևանքով սղվել է օր վանկը:

163. Բառավարջում ը-ն մնում է անփոփոխ. այսպես՝ գի-
շարքըշէր, հագար>հագար, մոխիր>մախիր, նորչնօր, փոր>փօր
և այլն:

Բ

164. Բարբառում ը-ով սկսվող բառ չկա: Բ-ով սկսվող օ-
տար փոխառություններն անգամ բառասկզբում ստանում են ը կամ
ու հմնարանը. այսպես՝ ռագիչըռագի, ոուսուտուուս, ոուպու-
ուուր, ռեհանչըռեհան և այլն:

165. Բառամիջում և բառավարջում ը-ն հիմնականում մնում
է անփոփոխ. ինչպես առաջառաջ, առնուլչառնէլ, առու>առվու,
ծառայ>ծառա, բեռն>փառ, դուռն>թօռ, ծառք>ցառք, սիսեռն>սը-
սառ և այլն:

166. Մալաթիայի բարբառում առհասարակ ը և ը հնչյունները
գտնվում են արտասանական խառը վիճակում: Ինչպես որոշ բառե-
րում ը-ի փոխարեն հնչվում է ը այնպես էլ շատ բառերում ը-ի
փոխարեն լսվում է մերթ ը, մերթ ը. այսպես՝ ախոռ>ախօր, ծը-
մեռն>ցըմառ և ցըմար, ամառն>ամառ և ամար, առաջին>առչին և
արչին, բոռի>բանի և բանի, ակոայ>առգա և արգա և այլն:

Վարդավառ>վարթըվար և ծաղարդար>զարզարթար բառերում
ը-ի փոխարեն հնչվում է ը՝ առաջին բառում բառամիջի ը-ի, իսկ
երկրորդում՝ բառավարջի ը-ի առնմանությամբ:

Յ

167. Յ ծայնդողը բառասկզբում ընկնում է կամ սնթարկվե-
լով հայերենի պատմական ընդհանուր օրինաչափությանը՝ արտա-
սանվում է որպես կոկորդային խուլ շփական չ. այսպես՝

ա) Յ-ն ընկնում է՝ յաջող>աչօղ, յատակ>աղազ, Յարու-
 քիւն>Արթին, Յալոք>Ազօք, յաւանակ>ափանագ, յիշատակ>իշաղագ,
 յիշսլ>իշէլ, "նմանփսլ մսկին", յիսուն>իցծուն, յղի>ըղի,
 յոլոպ>իբօրօք, Յովակիմ>Օվագիմ, Յուղա>ուխա, յստակ>ըստագ,
 յօնք>ունք :

բ) Յ-ն հնչյունափոխվում է հ-ի՝ յանպարծ>հանգարծ, յան-
 ցաւոր>հանցափօր, յարգ>հարք, յարդ>հերթ(հէրթնօց), յարու-
 քիւն>հարուքուն (կրոնական իմաստով), յուլիս>հուլիս, յու-
 նիս>հունիս, յունուար>հունվար, յօժար>հօժար :

168. Բառամիջում յ-ն մնում է անփոփոխ, ինչպս՝ հայելի>
 հայլիք, հայիլ>հայիլ, մայիս>մայիս, խնայել>քընայէլ, վա-
 յնելիւլ>վայլէլ, ծառայել>ծառայէլ և այլն : Բառամիջում յ-ն
 ձայնակապի դեր է կատարում՝ էյի, էյիւ, էյաք, էյիք, փէրի-
 յա, չէյի : Դժգոհիլ>Քըշկօյիլ, հսկուհի>հսկուլի, պահել>քէ-
 յիլ և այլն :

169. Բառավերջի յ-ն միավանկ բառերում մնում է անփո-
 փոխ. այդ դիրքում յ-ն հանդես է գալիս հայ>հայ բառում և
 ձայնարկութիւնների մեջ՝ օյ, վայ, հայ, ույ, հէյ և այլն :

Բազմավանկ բառերի բառավերջի յ ձայնորդը, որը հանդես
 էգալիս ա ձայնավորից հետո, ընկնում է. այսպս՝ ազուզայ>
 հաքուքա, ակոայ>արգա, ամիրայ>ամիրա, ապրայ>արքա, բակլայ>
 փաղլա, ծառայ>ծառա, մնղայ>մէղա, չուխայ>չուխա, սատանայ>
 սաղանա, վկայ>վրգա, տղայ>դըղա :

ի (ւ)

170. Այն բառերում, որտեղ գրաբարյան ւ ձայնորդը հան-
 դես է գալիս իբրև ոչ երկբարբառի տարր, այսինքն գտնվում է
 ձայնավորների միջև կամ բառավերջում՝ ձայնավորներից հետո,
 արտասանվում է ինչպես շրթնատամնային ձայնեղ շփական վ. այս-
 պես՝ աւագ>ավաք, աւետարան>ավիղարան, (առ) աւել>էվէլ, աւել>
 ավիլ, աւելանալ>էվէլնալ, գաւազան>քավազան, գաւակ>գավագ,
 խաւար>խավար, կաւիմ>գավիջ, հաւանգ>հավան, հաւանել>հավնէլ,
 հաւատալ>հավղալ, հիւանդ>հրվանդ, հաւասար>հավսար, նրեւիլ>
 էրվալ և այլն . ընաւ>իընավ, իրաւ>իրավ, ծարաւ>ծարավ, կաւ>
 գավ, կաքաւ>գաքավ, հաւ>հավ, ցաւ>ցավ, ազնիւ>ազնիվ, արծիւ>
 արծիվ, կոիւլ>զրոիվ, ճիւլ>ջիվ, պատիւ>բաղիվ, անձրնւ>հարգէվ :

տառաւորացի, ձեռնարկ և այլն :

Պատուաբար և թաւալիլ թարիլ բառերում ւ-ի փոխարեն ունենք ը՝ առաջին բառում բառասկզբի պը-ի ազդեցութեամբ, իսկ երկրորդում՝ թաւալիլ և տապալիլ իմաստով իրար մոտ բառերից փոխադարձ ներգործութեամբ կազմվել է թարլէլ բառը, որն արտահայտում է այդ երկու բառերի իմաստները :

ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՍԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅՑՅԵՐ

171. Բացի վերը նշված հնչյունափոխական օրինաչափու - թյուններից, բարբառի հնչյունները կրում են նաև այլևայլ փոփոխություններ, որոնք արդյունք են կամ հնչյունների փոխազդեցության, կամ այլ բարբառների (նաև լեզուների) հնչյունական օրինաչափությունների ազդեցության: Եվ վերջապես բառն ինքն էլ խոսքի մեջ կարող է զանազան փոփոխություններ կրել, որոնք մասամբ բացատրվում են արտասանության թեթևացման ձրգամամբ: Այդպիսի փոփոխությունների շարքին են դասվում հնչյունների հավելումը, անկումը, դրափոխությունը, հնչյունների կործանումը, ամփոփումը, կրկնությունը և այլն :

1. ՀՆՁՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

172. Բառի մեջ այս կամ այն պատճառներով հնչյունների ավելացումը կոչվում է հավելում: Հավելումն ի հայտ է գալիս, երբ բառի բարբառային ձևը համեմատում ենք զրաբարից ավանդված ձևի հետ:

ա) չ-ի հավելում բառասկզբում՝ ածել>աձէլ, արածել>հարձէլ, ածան>հաձան, ազանիլ>հաքնիլ, ազուզայ>հաքուբա, անձրև>հարգէվ, ուր>հօր, ում>հօմ, իւրեան>հրոէն, ընտրել>հըյրէլ, կնքապապ>հընքաբաբ, ինքն>հինքը:

բ) դ-ի հավելում՝ մեկ ու կես վանկ ունեցող մի բանի բառերի նր հնչյունախմբում. ծանր>ձանդըր, մանր>մանդըր:

Համարել>համբըրէլ բառում մր հնչյունախմբում մ շրթնային հնչյունի ազդեցութեամբ ավելացել է ք շրթնայինը:

գ) ն-ի հավելում՝

1. Աղջի(կ)>ախչին, դրացի>թըրացին և երսկոյ>ուռուկուկ բառերում նախապես որպես որոշյալ հոդ ավելացրած ն-ն գիտակ-

ցըվել է իբրև արմատական հնչյուն:

2. Առհասարակ պայթափականներից և պայթականներից առաջ նկատվում է ն բաղաձայնի հավելման միտում. այսպես՝ ծ > ծ-ից առաջ՝ մեծմանձ, բարձրփանձըր, չ-ից կամ ջ > չ-ից առաջ՝ միջեւմինչէլ, մչեւլընչէլ, կանաչգանանչ :

թ-ից առաջ՝ բիթբիթ.

բ-ից առաջ՝ արտասուրբարցունք, փողորակփօրդանք, փըշուրբփուրշունք, բաժակփաժանք և այլն :

դ) վ-ի հավելում՝ առուլաուվու, ուղարկելգաուվէլ, սաւորչսավւօր, պատրիարբբարվիրարբ:

ե) ւ-ի հավելում՝ օրհնելւօրշնէլ.

զ) լ-ի հավելում՝ շատրվանշաւղըվարան :

2. Հնչյունների Անկոմ

173. " Չայնավորների փոփոխությունները " բաժնում բըննարկվել են ձայնավորների անկման օրինաչափությունները:

ի մի բերնւով բաղաձայնների անկման դեպքերը՝ կունենանք հետևյալ պատկերը .

Բաղաձայնների անկում բառակզբում:

Ա՝ սպանանելբաննէլ, սկսուրգէսուր, սկեսրայրգէսրանր.

Հ՝ համարլմար, կ՝ կնքապաչհընքաբբ.

Յ՝ յատակշաղագ և այլն (տմս § 167):

Բառամիջում՝

տ՝ պաշտպանբաշպան, ասսոււածասված, աստղասըխ.

կ՝ կնկտիք չգընդէք " կանայք "

ղ՝ ուղղորդոդօրթ, ողկոյգագօգ, խղմտանքխըժմըղանք, աղոթակողմշաղօթգում.

հ՝ նահատակնահագ, ջրհեղեղչըրէդէդ (տմս § 145), օրհնելւօրշնէլ.

ը՝ ժ, չ-ից առաջ՝ արժեւլաժէլ, բարշեւլբաշէլ և այլն (§ 161). բացի այդ, ը-ն ընկնում է հետևյալ բառերում՝ արտորայնադօրնալ, բարձրփանձըր, գործաւարբօզվար, երբչափ, իրբչիք, ճանապարհչամփա, տարգաւլթըբաւ, շնորհագորչընավօր .

և՛ առնել յէնէլ
 վ՛ բովհրել յփօրհէլ, Քերովբէ յՔերօֆ
 Կ՛ աշխարհ յ աշխարհ, պահք յ բար և այլն (տես՛ 148);
 Բառավերջում՝ ն վերջնահնչյունը՝ բռնն փառ և այլն
 (տես՛ 158) .

կ՛ աղջիկ յ ախիւն
 ր՛ կղմին զրոզը զմիդ
 տ՛ տապաս տղաբաս "ուռուցք"
 դ՛ կոճղ յ զօջ
 յ՛ բազմապանկ բառերում՝ ծառայ յ ծառա, տղայ յ զղղա և
 այլն (տես՛ 169) .
 Կ՛ շահ յ շահ (Կ), մահ յ մահ (Կ) (տես՛ 149) :

Յ. Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
 և Ր Ճ Ա Տ Ո Ւ Մ

174. Համախակի գործածութեան հետևանքով մի շարք բառերի
 կամ բառակապակցութիւններու որոշ հնչյունախմբեր "մաշվել",
 կրճատվել, են: նշենը այդ տիպի մի բանի օրինակներ՝ բարի ե-
 րեկոյ յ փառընգուն, նղբայր յ փա, կրճանոց յ զըրճան, ողկոյ յ
 զօզ, հասկացում յ հասկում, չեմ իմանայ յ չիմնա, չիմնար, չիմնա՞
 ա .

չես իմանայ յ չիսնա, չիսնար, չիսնար ա
 չի իմանայ յ չիննա, չիննար, չիննար ա
 պատրոյ յ զակալ յ բառալ
 ցորճնի մաղ յ ցորմաղ
 կիրակամուտք յ զիրամուտկ
 վաստակ վաճառ յ վասկ վաճառ .

Այստայ կարուի է նշել նաև ամփոփման դեպքերը, որոնք
 առկա են բարբառում:

օրօրել յ օրէլ
 օրօրան յ օրան
 օրօրոցակա յ օրըսգաբ
 խոնջան ընթացք յ խօնջընթթասկ
 օրհասարակ յ ճօրսագ "կեսօր"
 մանած (ա) ծախանոց յ մանձրինօց .

4. Դ Ր Ա Փ Ո Խ Ո Ռ Ք Յ Ո Ւ Ն

175. Բարբառում կան դրափոխության հետևյալ օրինակները.

- դ//զ՝ դագաղք > քաթախկ
- թ//խ թաթախել > թախտէլ
- լ//վ լուլալ > վըլալ
- խ//մ խխմիլ > խըմիիլ
- ի//ն փոխինդ > փոխնիդ
- խ//ս խստոր > սըխսօր
- կ//ն ականջ > անգաչ
- շ//խ նշխար > նախշար
- պ//ղ կոպղել > գըղբէլ
- ս//խ փսխալ > փըխսէլ
- փ//տ փնտուր > ֆէփուր
- ք//ն գոքանչ > գօնքաչ.

176. Երկրորդ վանկում գտնվող ը-ն դրափոխությամբ անցել է առաջին վանկը՝ իր ամբողջ զիջելով այդ վանկի որևէ բաղաձայնի.

- այսպես՝ ակոայ > արգա
- անծրև > հարգէվ
- ապրայ > արբա
- ապրանք > արբանք
- բովհրել > փօրհէլ
- զգրոց > քըրգօց
- դատարկ > թարդագ
- դատարկսլ > թարդըգէլ
- խոշորուք > խօրշուք
- կամուրջ > գարմուչ
- կնճիոն > գըոինջ
- ճպոտ > ջըոբօղ
- մկրատ > մըրգաղ նաև՝ մըլրաղ
- սովորիլ > սօրվիլ
- փողորակ > փօրղանք
- փշրել > փըրշէլ
- փշուրք > փուրշուներ
- կապերա > գարբէղ

Հակառակ այս օրենքին՝ առաջին վանկից ը-ն անցել է երկ-
րորդ վանկ՝ ջրադացք > չաղարակ , Գրիգոր > Քիրբօր բառերում:

5. Կ Ր Կ Ն Ո Ռ Ք Յ Ո Ւ Ն

177. Մի քանի բառերում որոշ քաղածայններ կրկնվել են:
Դրանք են՝ ամենամամեն, ասեղնասսէղ, ծալել > ծալլել, ծամել >
ծամմել, ծամոց > ծամմօց, կիսել > զըսսել, հրամայեա՛ > հըրամմէ՛,
քայլել > քալլել:

2 Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՀՈԳՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

178. Մալաթիայի բարրատում հոգնակին հիմնականում կազմավորում է -էր, -նէր մասնիկնարով:

179. Միավանկ բառերի հոգնակին կազմավորում է -էր մասնիկով: Օրինակ՝ աչք>աչկ-աչկէր, ազգ>ասկ-ասկէր, բահ>փահ-փահէր, գործ>քօրծ-քօրծէր, խոզ>խօզ-խօզէր, կով>գօվ-գօվէր, հաւ>հավ-հավէր, շուն>շուն-շունէր, տուն>դուն-դունէր, ցից>ցից-ցիցէր և այլն:

Ն վերջնահանչյունը կորցրած միավանկ բառերի հոգնակին սովորաբար կազմավորում է -էր մասնիկով. ինչպես՝ ազբն>ասպ-ասպէր, ակն>ազ-ազէր, ծունկն>ծունգ-ծունգէր, կամն>գամ-գամէր, հարսն>հարս-հարսէր, հիմն>հիմ-հիմէր, ձոնն>ցառք-ցառքէր, ձուկն>ցուկ-ցուկէր, մատն>մաղ-մաղէր, մուկն>մուկ-մուկէր, որդն>օրթ-օրթէր և այլն:

Այդ հնչյուններից առաջ ու ունեցող բառերում հոգնակի կազմելիս վերականգնվում է ն-ն: Այդ բառերն են՝ բեռն>փառ-փառնէր, դուռն>թօռ-թրոնէր, թոռն>թօռ-թօռնէր, լեռն>լեռն>լառ-լառնէր, կուռն>զուռ-զըռնէր: Սրանց նմանակույթյամբ էլ ծառ բառի հոգնակին կազմվում է -նէր մասնիկով՝ ձառնէր: Նուորն>նուռ բառը հոգնակիում կարող է պահպանել ն վերջնահանգը կամ սղել՝ նուռնէր և նուռէր: Մասն>մաս "մասունք" բառի հոգնակին կազմվում է ն վերջնահանգի պահպանմամբ՝ մասնէր:

180. Ան և չ ժխտական նախածանցնարով կազմված միավանկ բառերը հոգնակիում ստանում են -նէր մասնիկը՝ դիավելով իբրև բազմավանկ բառեր. ինչպես՝ անգործ>անքօրծ-անքօրծնէր, անտուն>անդուն-անդուննէր, անսիրտ>անսիրդ-անսիրդնէր, անիործ>ամփօրծ-ամփօրցնէր, չտես>չըղէս-չըղէսնէր: Եթե բարդույթյան երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է և բառի ընդհանուր իմաստն արտահայտվում է առաջին բաղադրիչի միջոցով, հոգնակին

կազմվում է նէր հոգնակերտի միջոցով: Օրինակ՝ աներծագ > անէրցաք-անէրցաքներ, դրկից>թըրգից-թըրգիցներ, ժամակոչ > ժանգոչ-ժանգոջներ, կնքապապ>հընքաքաք-հընքաքաքներ, նեղսիր, նեխսիրդ-նէխսիրդներ, չորաթան>չօրթան-չօրթաններ, վարժապետ > վարժաբէդ-վարժաբէդներ, վարժատուն > վարժադուն-վարժադուններ և այլն:

Բարդ բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է և հիմնական իմաստն արտահայտվում է վերջին բաղադրիչի միջոցով, հոգնակին կազմվում է -էր մասնիկով. օրինակ՝ աղաջուր > ախչօռ-ախչօռէր, մոխրաջուր > մախիրչօռ-մախիրչօռէր, փակմատն > փազմադ-փազմադէր "բթամատ" և այլն:

181. Մեկ և կսս վանկանի բառերը հոգնակիում ստանում են -նէր մասնիկը, դիտվելով որպես երկվանկ բառեր. ինչպես՝ գլուխ > քրլօխ-քրլօխներ, ծանր > ծանդըր-ծանդըրներ, կրակ > գըրազ-գըրազներ, ճրագ > ջըրաք-ջըրաքներ, մանր > մանդըր-մանդըրներ, սանտր > սանդըր-սանդըրներ, տայգր > դաքըր-դաքըրներ և այլն: Աստղասի բառում տ-ի սղմամբ բառը դարձել է միավանկ, որի հոգնակին օրինաչափորեն կազմվում է էր-ով՝ ասիէր:

182. Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է նէր մասնիկով. ինչպես՝ աղբիւր-ախփիրներ, աղիւս > աղօս-աղօսներ, ականջ > անգաչ-անգաչներ, եղբայր > ախփար-ախփարներ, գօտի > քօղի-քօղիներ, երկաթ > էրգաթ-էրգաթներ, խնձոր > խընձէր-խընձէրներ, ծաղիկ > ծաղիզներ և այլն:

Օտար փոխառությունները միավանկ բառերում ստանում են -էր, բազմավանկ բառերում՝ նէր հոգնակերտէրը. ինչպես՝ բաղբաղէր "այգի", բուզ-բուզէր "սառույց", սագ-սագէր և այլն: Ղիրսագ-ղիրսագներ "արմուկն", թօխում-թօխումներ "սերմ", օքիզ-օքիզներ "եզն" և այլն:

189. ն-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում պահում են ն-ն և ստանում նէր հոգնակերտը: Այդ բառերն այսպիսով ունենում են կրկնակի ն.՝ երկայն > էրգան-էրգաններ, գարուն > քարուն-քարուններ, բարութիւն > փարութիւն-փարութիւններ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Այն բազմավանկ բառերը, որոնք բառավերջում հավելյալ ն են ստանում, հոգնակիում նույնպես ունենում են կրկնակի ն: Այդ բառերն են՝ աղջիկ > ախչին-ախչիններ, երե-

Կոյ յ ուղու նգու ն ուղու նգու ն ն էր, դրացի յ թրրացին թրրացի ն ն էր:

184. Իրարարում ք հոգնակարտ մասնիկ ունեցող բառերը մալաթիայի բարբառում սովորաբար համարվում են սգակի: Հոգնակի կազմելիս նրանք համապատասխանաբար ստանում են -էր (միավանկ բառերում) և -ներ (բազմավանկ բառերում) հոգնակարտ մասնիկները. ինչպես՝ կուրծք յ գուրսկ ՝ գուրսկ էր, ձնոք յ ցառք ՝ ցառք էր, մէխկ ՝ մէխկ էր, ոռ (ք) յ օրք " հատակ " ՝ օրք էր, ոտք յ օտկ ՝ օտկ էր և այլն . աղօթք յ աղօտկ ՝ աղօտկ ն էր, աշխարհք յ աշխարք ՝ աշխարք ն էր, աշուն յ աշունք ՝ աշունք ն էր, արտասուք յ արցունք ՝ արցունք ն էր, բաղանիք յ հաղնիք ՝ հաղնիք ն էր, հարսանիք յ հարսնիք ՝ հարսնիք ն էր, շնորհք յ շրնօրք ՝ շրնօրք ն էր, ցիւ յ ցըվիք ՝ ցըվիք ն էր և այլն :

185. Մարմնի զուգ սնդամներ ցույց տվող մի շարք բառեր, բացի սովորական -էր կամ ներ մասնիկներից, ստանում են նաև -վրն էր, հոգնակարտը, որը կազմված է -վի նի թէր մասնիկներից: Այդ մասնիկի միջոցով բառն արտահայտում է հավաքական իմաստ: Այսպես՝ աշկ էր նշանակում է "աչք էր", որը զործ է ածվում մի մարդու նշանամբ կամ ընդհանրապես, առանց կոնկրետացնելու: Սակայն աշկըվն էր (աշվրն էր) նշանակում է որևէ խումբ մարդկանց աչքսր՝ մեր աչքերը, տվյալ խմբի մարդկանց աչքերը և այլն : Վրն էր մասնիկով հոգնակի են կազմում հետևյալ բառերը.

- աչք յ աշկ ՝ աշկըվն էր կամ աշվրն էր
- ականջ յ անգաչ ՝ անգըշվրն էր,
- եղունգն յ ուղունգ ՝ ուղունգվրն էր
- ծունկն յ ծունգ ՝ ծունգվրն էր
- ձնոք յ ցառք ՝ ցառվրն էր
- յօնք յ ունք ՝ ունքվրն էր,
- ոտք յ օտկ ՝ օղվրն էր

Վրն էր հոգնակերտով հավաքականություն են արտահայտում նաև դուն, շուն, դալ և մաղ բառերը. այսպես՝ դունվրն էր , շունվրն էր, դալվրն էր, մաղվրն էր:

186. Բացի սովորական ձևերից, բարբառում կան նաև մի քանի այլ հոգնակարտ մասնիկներ, որոնք ընդհանուր զործածություն չունեն. նրանցով հոգնակի են կազմում սակավաթիվ բառեր:

- Այդ հոգնակարտներն են.
- ա) -մտան. այս մասնիկն են ստանում ի վերջավորություն

ուեննցող մի բանի զոյականնսր՝ հավաքական իմաստ արտահայտելու համար: Սրանք -ստան հոգնակերտն ստանում են ա հոդակապի միջոցով. բառավերջի ի-ն միանում է ա հոդակապի հետ և հայերենի ընդհանուր օրինաչափությունը հնչյունափոխվում է ե>է-ի:

- Տարիչդարի+ա+ստան - դարէստան
- մասանիմաղնի+ա+ստան - մաղնէստան
- գօտիշքօղի+ա+ստան - քօղեստան
- այգիշէքի+ա+ստան - էքէստան

խավլի+ա+ստան -խավլէստան և այլն :

բ) -Անք՝ ձիշցի-ցիյանք, դեշթէվ-թիվանք, եղբայր>ախփար-ախփրանք, հօրաբոյր>հօրբօր-հօրբօրանք (զործածական է խալանք ձևը, որտեղ թուրքերեն խալա բառի հոգնակիությունն արտահայտված է հայերեն -անք մասնիկով), տալ>դալ-դալանք, տայգ/չա-բըր-դաբըրանք, բոյր>բօր-բօրանք:

գ) -Դանք՝ ոսկր>օսկօր-օսկըրդանք, փրսօր>փրսօրդանք

դ) -Դէք՝ կնիկ>զրնիգ՝ զրնիգդէք>զրնդէք, արիգ-արիգդէք, դաբիր-դաբըրդէք, ախփար-ախփըրդէք և այլն :

ե) -Թ՝ ծագումը, բնակավայրը ցույց տվող -ացի, -էցի, -ցի ածանցներով կազմված բառերում՝ խարիէրթցիք, մալաթյացիք, սուլվասցիք, բօլսէցիք, քէղացիք, քախըցիք և այլն :

զ) -Օնք, բնօնք, դադօնք, բարօնք, հընքաբարօնք, շադօնք, թերգօնք և այլն: Այսչափ, այդչափ, այնչափ, դերանունների հոգնակին նույնպես կազմվում է -օնք մասնիկով՝ անօնք, անդօնք, աննօնք:

ը) -էնք, ամուլէնք, Բաբէնք՝ հարսայէնք, մամէնք, փարսէ-դէնք, փիլօյէնք, Քիրքօրէնք և այլն :

187. Ստան, անք, դանք, իք, դէք մասնիկները սովորաբար զործածվում են հավաքական իմաստ արտահայտելու համար: Անհրաժեշտության դեպքում այդ մասնիկներով կազմված զոյականները կրկնակի հոգնակի են կազմում -նէր հոգնակերտի միջոցով. Օրինակ՝ մաղնէստաննէր, ցիյանքնէր, օսկըրդանքնէր, փրսօրդանքնէր, զրնդէքնէր, ախփըրդէքնէր, դաբըրդէքնէր և այլն : -Օնք, էնք և թ մասնիկներով կազմված՝ հավաքականություն ցույց տվող բառերը հոգնակի չեն ունենում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Մարդմարթ բառի հոգնակին կազմվում է իկ մասնիկով, սակայն անք, օնք, դանք և այլ հոգնակերտների

համաքանությամբ կ-ն դարձել է ք՝ մարթիք (զընհիգմարթիք և ալլն):

Հ Ո Լ Ո Վ Ն Ե Ր

188. Բարբառն ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական. բացակայում է ներգոյական հոլովը:

189. Ուղղականը բառի ուղիղ ձևն է, այսինքն բառն ունի զրո վերջավորություն: Այս հոլովը բարբառում նույն կիրառությունն ունի, ինչ արդի հայերենում: Որոշյալ առմամբ գործածվելիս սեռական հոլովը ստանում է որոշյալ հոդ (ը կամ ն), որով և նմանվում է տրականին. Օրինակ՝ "աս մարթուն քիրքը" " այս մարդու վիրքը" :

Հայցականը ձևով նման է ուղղական հոլովին, անկախ այն բանից՝ տվյալ գոյականը անձի առմամբ է օգտագործված, թե իրի: Օրինակ՝ " ոս սիրիմ ա քիրքօրը, թօն փէրիս ա քիրքը" և ալլն :

Հայցականը կիրառվում է նաև ներգոյական հոլովի իմաստըն արտահայտելու համար: Օրինակ՝ իմ ախիարըս վարժադունը թաս սօրվի յա "Եղբայրս վարժաանում (դպրոցում) դաս է սովորում " :

Բացառական հոլովը կազմվում է -է (էն), մէ(մէն) վերջավորություններով: Խնամակցություն և ազակցություն ցույց տվող, ինչպես նաև աստուածոյան, մարդմարթ բառերի բացառականը կազմվում է տրականին ավելացնելով մէն վերջավորությունը, իսկ անձ ցույց տվող մյուս գոյականների և իր ցույց տվող բոլոր բառերի բացառականը կազմվում է էն վերջավորությամբ, որն ավելանում է տրական հոլովի կամ հիմքի վրա:

Գործիական հոլովի վերջավորությունն է օք կամ մօք: Կազմությունը նույնն է բացառական հոլովի հետ, այսինքն ազակցություն և խնամակցություն ցույց տվող բառերում կազմվում է մօք, իսկ անձ ցույց տվող մյուս գոյականների և իրի առմամբ գործածվող բոլոր բառերում՝ օք վերջավորությամբ: Այս Օք(մօք) հոլովածևի հիմքը զրաբարն է: Հայանի է, որ զրաբարում -ալք(օք)

վերջավորութիւնն ունենի ա, ի-ա վերջադրական, ո-ա խառն հոլովման պատկանող բառերը հոգնակի թվում: Սակայն Մալաթիայի բարբառում գործիականի այդ հոլովածուը ընդհանրացել է և տարածվել բոլոր հոլովմանի վրա՝ եզակի և հոգնակի թվում: Նույնիսկ հավաքական իմաստ արտահայտող գոյականները, որոնք հոգնակի են կազմում -էք, իք, դէք, դանք, վրդէք, էնք, օնք, անք մասնիկներով, գործիականը կազմում են -օք (մօք) վերջավորութիւն միջոցով: Ճիշտ է, գործիական հոլովում օք վերջավորութիւնն ունեն նաև մի շարք այլ բարբառներ (օրինակ Պոլսի բարբառը)¹, սակայն այդ վերջավորութիւնը մյուս բարբառներում պահպանվել է որպես գրաբարյան վերապրուկ, որը գործածական է առանձին ոճերի և արտահայտութիւնների մեջ: Այնինչ Մալաթիայի բարբառում գործիականի այսպիսի կազմութիւնը նարկայացնում է մի ամբողջական ու կոռ օրինաչափութիւն²:

Նարգոյական հոլովի իմաստն արտահայտվում է՝ 1) Հայցական հոլովով. օրինակ՝ "Շուգան դավշան գառնէ յա" - "Շուկայում նապաստակ է առնում" : "Թըրբօցը թաս սօրվի յա" - "դպրոցում դաս է սովորում" : 2) Սեռական հոլովով խնդրի և մէջմէջ կապի միջոցով. օրինակ՝ քըլխուն մէջ - "գլխում", քիրքին մէջ - "գրքում" և այլն :

Հ Ո Կ Ո Վ Ո Ւ Մ Ն Ե Ր

190. Գոյականների հոլովումը որոշվում է եզակի թվի սեռական հոլովի վերջավորութիւնով: Մալաթիայի բարբառի գոյականներն ունեն յոթ հոլովիչ՝ ի, ու, ան, օչ, օր, վա և գրաբարատիպ: Հստեաբար բարբառն ունի յոթ հոլովում:

191. Հոգնակի թվում բոլոր գոյականները կամ գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը հոլովվում են ու հոլովմամբ՝ անկախ եզակի թվում այս կամ այն հոլովման նրանց պատկանելուց: Բացառութիւն են կազմում գրաբարատիպ հոլովման պատկանող բառերը, որոնց մի մասը հոլովվում է միայն հոգնակի թվում և ց հոլովիչով, մի մասն էլ հոգնակի չունի: Հոգնակի թվում բացառական և գործիական հոլովները կազմվում են եզակի թվի նույն հոլովների կազմութիւնն սկզբունքով:
 1. Հ. Աճառյան, Բնութիւնն Պոլսահայ բարբառի, էջ 116:
 2. Գործիական հոլովում օք վերջավորութիւնն ունի նաև Արաբկիրի բարբառը (տես Ս. Դավիթ Բեկ, Արաբկիրի գաւառաբարբառը, Վիեննայ, 1919):

Ի Զ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

192. Վերջավորություններն սն՝ եզակի ստոական-տրական՝ ի, հայցական՝ ձևով նման է ուղղականին, անկախ այն բանից, թե ինչառումով է օգտագործված՝ իրի, թե անձի, բացառական՝ -է (ն), գործիական՝ -օք:

Հոգնակի սեռական՝ տրական՝ ու, հայցական՝ նման է ուղղականին, բացառական՝ -էրէ(ն), -նէրէ(ն), գործիական՝ -էրօք (նէրօք):

193. Մալաթիայի բարբառում, արդի հայերենի նման, ի-ն ամենատարածված և ամենագործուն հոլովումն է: Այս հոլովման է պատկանում բարբառի բառերի մեծ մասը: նույնիսկ շուն, տուն, մուկն, ձուկն, աղջիկ, ընկեր բառերը, որոնք զրաբարում, արդի հայերենում և հայ բարբառների մեծ մասում սնվարկվում են այլ հոլովումների, այս բարբառում պատկանում են ի հոլովման:

Հարակատար և ենթակայական դերբայները, զոյականաբար գործածվելիս, ինչպես նաև փոխառյալ բառերի մեծ մասը նույնպես հոլովվում է ի հոլովմամբ:

Հոլովման ընդհանուր պատկերը
 խօսկ բար ախչին բըրօղ բըրած

Ե զ ա կ ի

ուղղ.	հայց.	խօսկ(ը)	բար(ը)	ախչին(ը)	բըրօղ(ը)	բըրած(ը)
սեռ.	տրակ.	խօսկին	բարին	ախչինին	բըրօղին	բըրածին
բաց.		խօսկէն	բարէն	ախչինէն	բըրօղէն	բըրածէն
գործ.		խօսկօք	բարօք	ախչինօք	բըրօղօք	բըրածօք

Հ ո գ ն ա կ ի

ուղղ.	հայց.	խօսկէր(ը)	բարէր(ը)	ախչիններ	բըրօղներ(ը)	բըրածներ(ը)
սեռ.	տրակ	խօսկէրուն	բարէրուն	ախչիններուն	բըրօղներուն	բըրածներուն
բաց.		խօսկէրէն	բարէրէն	ախչիններէն	բըրօղներէն	բըրածներէն
գործ.		խօսկէրօք	բարէրօք	ախչիններօք	բըրօղներօք	բըրածներօք

194. Բացի վերոհիշյալներից, ի հոլովման են ենթարկվում՝
ա) Գրաբարյան ն վերջնահանչյուն ունեցող բառերի մեծ մասը.
Այդ բառերն են՝

միավանկ	բազմավանկ
ակն > ազ	աղեղն > աղօղ
ծուկն > ծուկ	արեգակն > արքազ
կամն > գամ	եղունգն > ուղունգ
հարսն > հարս	լիսեռն > լրսառ
հիմն > հիմ	կնճիռն > զըռինջ
ծեռն > ցառք	պճեղն > բըջէղ
ձուկն > ցուկ	սիսեռն > սըսառ և այլն
մասն > մաս	
մատն > մաղ	
մուկն > մուկ	
նուռն > նուռ	
ոսպն > օսպ	
որդն > օրթ	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - 1) Մասն > մաս "մասունք" բառը հոլովելիս սեռականում վերականգնվում է գրաբարյան ն վերջնահանգը, այսպես՝ սեռ.տր.՝ մասնին, բաց.՝ մասնէն, զործ.՝ մասնօք:

2. Գրաբարյան ն վերջնահանգ ունեցող մյուս բառերը ենթարկվում են ան հոլովման (տես § 203):

բ) Բառավերջում այ > ա ունեցող բառերը: նրանք բաժանվում են երկու խմբի.

Առաջին խմբի բառերը, որոնց հոգնակին կազմվում է միայն նէր մասնիկով, եզակի սեռականում պահում են ա-ն. ահա այդ բառերից մի քանիսը.

եզ. ուղղ.	հոգն. ուղղ.	եզ. սեռ.
ամիրա	ամիրանէր	ամիրային
արգա "ատամ"	արգանէր	արգային
ըրդա "ասնդնագործություն"	ըրդանէր	ըրդային
թարխանա "սպաս կորկոտից"	թարխանանէր	թարխանային
թօրթա "բակ"	թօրթանէր	թօրթային
լափա "սպտղանի"	լափանէր	լափային
համփա "վիճակակից ընկեր"	համփանէր	համփային

հաքուքա"ազուզա"	հաքուքանէր	հաքուքային
ծառա	ծառանէր	ծառային
չաղա"սրսխա"	չաղանէր	չաղային
վըզա	վըզանէր	վըզային
փաղլա"բակլա"	փաղլանէր	փաղլային

Երկրորդ խմբի բառերի հոլովման ժամանակ բառավերջի ա-ն կարող է պահվել կամ սղվել: Այդ խմբի բառերի առանձնահատկությունն այն է, որ նրանք հոգնակի են կազմում և -նէր վերջավորութեամբ, և հավաքականությունն արտահայտող մասնիկով, որից առաջ այ-ը հնչյունափոխվում է է-ի: Այդ խմբին պատկանող բառերից են՝ դըղա, փէսա, թուլա, ջամփա, սաղանա, քահանա և այլն:

եզ. ուղղ.	հոգն. ուղղ.	եզ. սեռ.
դըղա	դըղանէր և դըղէք	դըղային կամ դըղին
փէսա	փէսանէր և փէսէք	փէսային կամ փէսին
թուլա	թուլանէր և թուլէք	թուլային կամ թուլին
ջամփա	ջամփանէր և ջամփէք	ջամփային կամ ջամփին

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Ջամփա, փէսա և դըղա բառերը հոլովվում են նաև ու հոլովմամբ (տես § 198):

ՈՒ Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

195. Վերջավորություններ. եզակի սեռ. տրական՝ -ու, հայցական՝ ինչպես ուղղականը, բացառական՝ -էն (մէն), գործիական՝ -օք (մօք):

Հոգնակի սեռ. տրական՝ -էրու (-նէրու), հայցական՝ ինչպես ուղղականը, բացառական՝ -էրէն (նէրէն), գործ.՝ -էրօք (նէրօք):

Հոլովման ընդհանուր պատկերը

կովչգով	գլուխքըլօխ
ուղղ. հայց. -գով(ը)	բըլօխ(ը)
սեռ. տրակ. - գովուն	բըլխուն, բուլխուն

բացառական - գովէն
գործիական - գովօք

բըլիւէն, բուլիւէն
բըլիւօք, բուլիւօք:

Հ Ո Վ Ն Ա Կ Ի

ուղղ. հայց. - գովէր(ը)	բըլիօինէր(ը)
սնո. տրակ. - գովէրուն	բըլիօինէրուն
բացառական - գովէրէն	բըլիօինէրէն
գործիական. - գովէրօք	բըլիօինէրօք

196. Այս հոլովման նն պտտկանոււմ.

ա) Գրաբարայան ո կամ ու վերջադրական պարզ հոլովոււմներին պտտկանող հետեւյալ բառերը՝ ամիս>ամիս, աստուած>ասված, գլուխ>բըլիօխ, գող>բօղ, էշ>էշ, ժամ>ժամ "եկեղեցի", լոյս>լօս, կոպ>գօպ, հայ>հայ, հով>հօվ, հորթ>հօրթ, մարդ>մարթ, պապ>բաբ(անէրբաբ, հրնբաբաբ), ցաւ>ցապ, փոր>փօր. տէր>դէր բառը քարքառոււմ անցել է ու հոլովման բառերի շարքը:

Աստուած>ասված բառի թեք հոլովոււմներոււմ վերականգնվոււմ է արմատի տ հնչյունը. այս լսս՝ ուղղական, հայց.՝ ասված, սնո. տր.՝ աստուածուն, բաց.՝ աստուածմէն, գործ.՝ աստուածօք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - ժամանակի միավոր արտահայտող ամիս բառը սովորաբար հոլովոււմ է -վա հոլովմամբ: Ու հոլովմամբ այն կիրառոււմ է տոանձին ոճերի և արտահայտոււթյունների մեջ:

բ) ի-ով վերջացող բառերը՝ ագի>աքի, ածելի>աձըլի, այգի>էքի, անօթի>անօթի, բարդի>հարթի, գարի>բարի, գինի>քինի, գօտի>բօղի, թի>թի, հօգի > հօքի, ծի>ցի, մատանի>մաղնի, ոսկի>օսկի, ջորի>չօրի, քնոի>քնրի / այլն :

գ) -Ացի, -էցի, -ցի ածանցներով կազմված գոյականները՝ մալաբյացի, բօլսէցի, սուվասցի, քէղացի, քախկըցի և այլն:

Հոգնակիոււմ այդ բառերը ք ստանալով՝ հոլովվոււմ են գրաբարատիպ (ց) հոլովմամբ:

դ) Զրադմոււներ, արհեստ ցույց տվող ջի>ջի ածանցով կազմված փոխառյալ բառերը՝ սըվաղջի, փինաջի և այլն:

197. ի-ով վերջացող վերոհիշյալ ննթախմբերի բառերը, բացի ու հոլովման ննթարկվելուց, կարող են հոլովվել նաև ի հոլովմամբ:

Քանի որ բարբառի ամենատարածված հոլովոււմը ի-ն է, ուստի վերջինիս համարանուրյունն ազդել է ի-ով վերջացող բառերի

վրա և ենթարկել իրան: Այսպիսով նրանք զուգահեռաբար հոլով-
վում են ի, ու հոլովումներով:

Օրինակներ՝ "էրէգ իս շարթէցի քինուն թասը", "Ախչին
անդ քինիին թասը վրա", "Ախչինը մաղնուն քինը շրսավ", "Ան
մաղնիին քինը ինչու շրսիր", "Քարուն շուվալը քողցան",
"Քրնան քարիին շուվալին նիսա", "Առչի օրը իմ արիարըս քը-
նաց սըվաղջուն դունը" • "Սըվաղջիին դունը հօս է" :

Ահա այդ բառերի հոլովման ընդհանուր պատկերը	
Եզակի	հոգնակի
ուղղ. հայց մաղնի(ն)	մաղնիներ(ը)
սեռ. տրակ մաղնիին, մաղնուն	մաղնիներուն
բաց. մաղնիյէն, մաղնէն	մաղնիներէն
գործ. մաղնիյօք, մաղնօք	մաղնիներօք

198. ի հոլովման պատկանող տղա՞ղըղա, ծանապարհ՞ջամփա,
փեսայ՞փէսա բառերը հոլովվում են նաև ու հոլովմամբ. այսպես՝

ուղղ. հայց. ղըղա	փէսա	ջամփա
սեռ. տր. ղըղուն	փէսուն	ջամփուն
գործ. ղըղօք	փէսօք	ջամփօք

199. Քանի որ ստան մասնիկով կազմված բառերի հոգնակի
իմաստը միազանգվել է, ուստի այդ բառերը հոգնակին կազմելով
ներ մասնիկի միջոցով, հոլովվում են ու հոլովմամբ. այսպես՝
մաղնէստաններ, մաղնէստաններուն, մաղնէստաններէն, մաղնէս-
տաններօք: Այդպես են հոլովվում՝ էքէստաններ, դարէստաններ,
խավէստաններ, շէնէստաններ, քօղէստաններ և այլ բառեր:

200. Մարմնի զույգ անդամներ ցույց տվող աչք՞աշկ, ա-
կանջ՞անգաջ, նդունգն՞ըղունգ, ծունկն՞ծունգ, ձնք՞ցառք, ոտք՞
օտկ, յօնք՞ունք բառերը, ինչպես նաև մատն՞մաղ, տուն՞դուն,
շուն՞շուն, տալ՞դալ բառերը, հոգնակին կազմելով վրնի մաս-
նիկով՝ աշկվրնի(աշվրնի), անգըշվրնի, ըղունգվրնի, օղվրնի,
ծունգվրնի, ունքվրնի, մաղվրնի, դունվրնի, շունվրնի, դալվր-
նի, կրկնակի հոգնակի են կազմում ներ մասնիկի միջոցով: Այս
երկու մասնիկները՝ վի և ներ ամփոփվում են և կազմում վր-
ներ հոգնակերտը: Նշված մասնիկով հոգնակի կազմած զոյական-
ները, իբրև կանոն, հոլովվում են ու հոլովմամբ:

Ահա հոլովման ընդհանուր պատկերը

Ուղղ հայց.	աշվըներ(ը)	մաղվըներ (ը)
սեռ.տր.	աշվըներուն	մաղվըներուն
բաց.	աշվըներէ(ն)	մաղվըներէ(ն)
գործ	աշվըներօք	մաղվըներօք

ԵԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ Վընի հոգնակերտով կազմված գոյականների (աշվընի, ցաղվընի) հոլովումը բարբառում գործածական է:

201. Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս ստանում է հոդ և հոլովվում ու հոլովմամբ :

ստորև տալիս սնք գրելքըրէլ, սովորիլսօրվիլ, մոռանալսմանալ դերբայների հոլովումը.

ուղղ. հայց.	բըրէլը	սօրվիլը	մառնալը
սեռ.տրակ.	բըրէլուն	սօրվիլուն	մառնալուն
բաց.	բըրէլէն	սօրվիլէն	մառնալէն
գործ	բըրէլօք	սօրվիլօք	մառնալօք

ԱՆ Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ

202. Վերջավորություններ. եզակի սեռ. = տրակ.՝ ան, հայց՝ ինչպես ուղղականը, բացատական՝ էն, գործիական՝ օք:

Հոգնակի վերջավորությունները նույնն են ի հոլովման պատկանող գոյականների հոլովման հետ:

203. Այս հոլովման են ենթարկվում.

ա) զընիգ և անիգ բառերը.

Ուղղ. հայց.	զընիգ	անիգ
սեռ.տրակ.	զէնգան	անգան
բաց.	զընգանմէն, զընիգէն	անգանմէն, անիգէն
գործ.	զընգանմօք, զընիգօք	անգանմօք, անիգօք

բ) հրաբարյան ն վերջնահնչյունը կորցրած հետևյալ բառերը ամառնշամառ, ամրան, ամրանէ, ամրանօք,

բառնշիառ, փառան, փառնէն, փառնօք,

դուռնշթօռ, թըռան, թըռնէն, թըռնօք,

տրդումնշէրթում, էրթման, էրթումնէն, էրթումնօք,

թոռնշթօռ, թօռան(նաև՝ թօռանօչ), թօռնէն, թօռնօք,

լեռննշլառ, լառան, լառնէն, լառնօք,

խըրումնշխըրում, խըրման, խըրումնէն, խըրումնօք,

ցըսոննշցըմար, ցըմրան, ապա՝ ցըրման, ցըրմանէն, ցըրմանօք,

վայելումն շվայլում, վայրւման, վայլումէն, վայլումօք:

Չնայած գրաբարյան դուռն և թոռն բառսրը բարբառի ուղղական հոլովում դարձել են նույնանուն բառեր՝ թօռ, այնուամենայնիւ հոլովելիս որոշակի երևում է նրանց տարբերութիւնը՝ թրոան և թօռան: Հոլովման այս տարբերութիւնն հիմքը գրաբարս է: Գրաբարում դուռն բառը ենթարկվում է ա ներդրական հոլովման, ըստ որում հոլովիչից առաջ արմատի ու-ն, շեշտակորույս լինելով սղվում էլ՝ դռան: Գրաբարի եզակիում ի ներդրական հոլովման պատկանող թոռն բառի սեռականում արմատի ու-ն մնում է անփոփոխ՝ թոռին: Թեք հոլովներում արմատի ձայնավորների այդ հնչյունափոխութիւնները նույնութեամբ պահպանվել են բարբառում. այսպես՝ դռան շրոան և թոռին շթօռան:

գ) Ութիւն շուլիուն ածանցով կազմված վերացական գոյականների հոլովումը ներդրական բնույթ ունի, այսինքն ուղղական հոլովի ու-ի փոխարեն սեռականում հանդես է գալիս ա-ն, այսպես՝

ուղղ. հայց.	փարութուն	բէշութուն
սեռ. տրակ.	փարութան	բէշութան
բացառ.	փարութունէն	բէշութունէն
	փարութէնէն	բէշութէնէն
գործ.	փարութունօք	բէշութունօք

204. Գրաբարում ա ներդրական հոլովման պատկանող լեռոն շլառ, շուն շշուն, ծունկն շծունգ, ծուկն շցուգ, մուկն շմուգ, նուռն շնուռ, տուն շդուն բառերը Մալաթիայի բարբառում ի հոլովման ենթարկվելուց բացի, հոլովվում են նաև ա հոլովմամբ: Վերջին դեպքում նրանք սովորաբար գործածվում են առածների, ոմների, ասացվածքների և նման այլ արտահայտութիւնների մեջ: Հնարավոր է նաև, որ բարբառում կազմվեն նոր առակներ, ասածվածքներ, որտեղ վերոհիշյալ բառսրը սեռական-տրական հոլովներում ունենան ա հոլովիչը: Այս դեպքում ներազդող փոխառված ոմների համաբանութիւնն է, նրանց կազմութեան բերականական ձևը: Սակայն առօրյա սովորական խոսակցութիւնների ժամանակ հիշյալ բառերը հոլովվում են ի հոլովմամբ: Բերենք այդպիսի ոմների մի քանի օրինակներ.

Շունը շանն է ընգէր:

Շան արին հանգօշտ չի փրոնիր:
 Շունը շանը միսը գուղի:
 Զօղը ուժօք ըլլի նէ՝ դան դէրը քօղ քը փրոնէ:
 Դան քօղուն հէդ քըլօթ չէլլըվէր:
 Յօթը դան մագարթ:
 Լառ լառան վըրա զըլլի, դուն դան վըրա չըլլիր:
 Մըզան շառը դէնիզին շահ ունի "մկան մեզն էլ ծովին օգուտ է տալիս" :

Վ Ա Հ Ո Լ Ո Վ Ո Ռ Մ

205. Վերջավորուելթուններ. սգակի սեռական-տրական՝ վա(ն) քաց.՝ է կամ վրնէ, գործ. օք կամ վրնօք: Հոգնակին կազմում է ի հոլովման հոգնակիի սկզբունքներով:

Հոլովման պատկերը

ուղղ. հայց.	բըշէր(ը)	բըշէրնէր(ը)
սեռ. տր.	բըշէրվան	բըշէրնէրուն
քաց.	բըշէրվրնէ	բըշէրսւրէն
գործ	բըշէրվրնօք	բըշէրնէրօք

206. Վա հոլովման են պատկանում ժամանակ ցույց տվող հետևյալ բառերը.

Ամիսյամիս, ամսըվան, ամսըվրնէն կամ ամսէն, ամսըվանօք կամ ամսօք.

- այսօրյանսօր, անսօրվան, անսօրվրնէ, անսօրվրնօք
- անգամյանքամ, անքամվան, անքամվրնէ, անքամօք,
- ատեանյանի, անիվան, անիվրնէ, անիօք,
- առաջյառաջ, առըշվան, առըշվրնէ, առըշվրնօք կամ առչօք
- երբչյափ, յափվան, յափվրնէ, յափվրնօք,
- երեկոյշուռունդուն, ըրընգվա, ըրընգվրնէ, ըրընգվրնօք,
- զատիկյազաղիզ, զաղզըվան, զաղզըվրնէ, զաղզըվրնօք
- կանուխյանուխ, կանուխվան, կանուխվրնէ, կանուխվրնօք
- կեսօրյազէսօր, զէսօրվան, զէսօրվրնէ, զէսօրվրնօք,
- կիւրակէյգիրագի, գիրագվան, գիրագվրնէ, գիրագվրնօք,
- հեղյահէղ, հէղվան, հէղվրնէ, հէղվրնօք,
- հերուշհէրու, հէրվան, հէրվրնէ, հէրվրնօք,
- մօտիկյամօղիզ, մօղիզվան, մօղիզվրնէ, մօղիզվրնօք,

շաքաթշափաթ, շափթըվան, շափթըվընէ, շափթըվընօք,
 շատունցշաղօնց, շաղօնցվան, շաղօնցվընէ, շաղօնցվընօք,
 ուղբաթիշուրփաթ, ուրփաթվան, ուրփաթվընէ, ուրփաթվընօք,
 վաղիւշվաղը, վաղվան, վաղվընէ, վաղվընօք,
 տարիշղարի, դարվան, դարվընէ, դարվընօք, դարՕք,
 ցերեկշցօրէգ, ցօրէգվան, ցօրէգվընէ, ցօրէգվընօք, ցօրէ-
 գօք,

օրաօր, օրվան, օրվընէ, օրվընօք, օրօք,
 օր. հասարակ "կեսօր" > հծրսագ, հծրսագվան, հծրսագվընէ,
 հծրսագվընօք,

վանքաց - "առավոտ" , վանքըսվան, վանքըսվընէ, վանքըսվը-
 նօք,

սահաթ "ժամ" - սահաթվան, սահաթվընէ, սահաթվընօք:

ԾԱՆՈՒՈՒԹՅՈՒՆ - 1) Առաջառաչ, մօտիկ, մօտիգ և զատիկ >
 զաղիգ բառերը, նթն գործ են ածվում ոչ ժամանակը ցույց
 տալու համար, այլ ննթարկվում են ի հոլովման: Օրինակ՝
 "զաղգի փիլավ" և զաղգըվան փիլավ": Առաջինը նշանակում
 է "զատիկին հատուկ փլավ", իսկ երկրորդը՝ "զատիկի ժա-
 մանակ պատրաստած փլավ": Կամ՝ "առչին դըղան" և "առչը-
 վան օրվան դըղան" արտահայտութիւններին ցույց
 է տալիս տեղի, իսկ երկրորդը՝ ժամանակ:

2) Կիւրակէշգիրագի և տարիշղարի բառերում սղվում է բա-
 ռավերջի ի-ն, հէրու բառում՝ ու-ն, իսկ վաղը բառում՝ ը-ն.
 այսպես՝ գիրագվան, դարվան, հէրվան, վաղվան:

3) Ուտունգուն բառի թեք հոլովներում սղվում է բարավեր-
 ջի հավելյալ ն նշյունը:

4) Կէսագէս բառը, նրբ ժամանակ արտահայտող բառերից
 կազմված բարդութիւններում հանդես է գալիս որպես երկրորդ
 բաղադրիչ, ենթարկվում է վա հոլովման. Օրինակ՝ դարիուգէս,
 դարիուգէսվան, ամիսուգէս, ամիսուգէսվան, սահաթուգէս-սահա-
 թուգէսվան և այլն :

5) Ամիսնսրի և տարվա եղանակի անունները (հունվար, փետր-
 վար . . . դեկտեմբեր, գարուն . . . ձմեռ) ենթարկվում են
 այլ հոլովումների՝ առաջինները և աշունք բառը ի հոլովման ,
 իսկ եղանակի մյուս անունները՝ ան հոլովման:

ՕՁ Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

207. Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ օչ,
հայց.՝ ինչպես ուղղականը, բացառական՝ օչմէն, գործիական՝
օչմօք:

Հոգնակին կազմում է ի հոլովման հոգնակիի սկզբունքով:
Այս հոլովման ընդհանուր պատկերը.

Աներ > անէր	տալ > դալ
ուղղ-հայց անէր(ը)	դալ(ը)
սեռ-տրակ. - անէրօչ	դալօչ
բաց. -անէրօչմէն	դալօչմէն
գործ.-անէրօչմօք	դալօչմօք

208. Այս հոլովման են ենթարկվում ազգակցություն և
խնամակցություն ցույց տվող տայզըդաքըր, նէր>նէր, սկեսուր>
գէսուր, սկեսրայր>գէսրաւր, քոյր>քօր, թոռն>թօռ և փայլրանուն
բառերը:

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ - 1. Ան հոլովման պատկանող թոռն>թօռ բա-
ռը սեռական հոլովում ստանում է նաև օչ հոլովիչը, որն ավե-
լացնում է սեռական հոլովածևի վրա՝ թօռանօչ : Այդ բառի բացա-
ռական և գործիական հոլովները կազմվում են տրականի վրա հա-
մապատասխանաբար ավելացնելով մէ, մօք վերջավորություններ՝
թօռանօչմէ և թօռանօչմօք :

2. Գրաբարում և արդի հայերենում օչ հոլովման պատկանող
ընկերընգէր բառը մալաթիայի բարբառում ենթարկվում է ի հո-
լովման (ընգէրին քիրքը):

Ե. Տայզըդաքըր բառը օչ հոլովման գուզահեռ հոլովվում
է նաև գրաբարի ե ներքին թեքման հոլովմամբ (դաքէր անունը,
դաքէր բօվը և այլն):

ՕՐ Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

209. Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ օր,
բացառական՝ օրմէ, գործիական՝ օրմօք: Հոգնակին կազմվում է
ընդհանուր սկզբունքով:

210. Այս հոլովման են ենթարկվում դարձյալ ազգակցություն
ցույց տվող հայր>հայր, մայր>մայր և եղբայր>ախփար բառերը,ինչ-
պես նաև այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը նըշ-
ված բառերից որևէ մեկն է. օրինակ՝ զընթահայր, հընթամայր ,

մանձախփար և այլն :

Ահա այդ բառերի հոլովման պատկերը.

Ծ զ ա կ ի

ուղղ.	հայց.	ախփար(ը)	հփր(ը)	մփր(ը)	մանձախփար(ը)
սեռ.տր.		ախփոր(ը)	հփր(ը)	մփր(ը)	մանձախփոր(ը)
բաց.		ախփորմէ(ն)	հփրմէ(ն)	մփրմէ(ն)	մանձախփորմէ(ն)
զործ.		ախփորմօք	հփրմօք	մփրմօք	մանձախփորմօք

Հ ո գ ն ա կ ի

ուղղ.	հայց.	ախփարնէր(ը)	հփրէր(ը)	մփրէր(ը)	մանձախփար- նէր(ը)
սեռ.տրակ.		ախփարնէրու(ն)	հփրէրու(ն)	մփրէրու(ն)	մանձ- ախփարնէրու(ն)
բաց.		ախփարնէրէ(ն)	հարէրմէն)	մփրէրմէ(ն)	մանձախփարնէ- րէ(ն)
զործ.		ախփարնէրօք	հփրէրմօք	մփրէրմօք	մանձախփարնէ- րօք

Կ Ր Պ Բ Պ Ր Պ Պ Ի Վ Ի Ն Կ Ի Ն Կ Ի Ն Կ Ի Ն

211. Այս հոլովումների շարքին են դասվում հավաքականու-
թյուն արտահայտող այն գոյականները, որոնք ունեն ք վերջավո-
րություն, ինչպես նաև տեղանուն ցույց ավոդ մի քանի բառեր:
Քննենք այս խմբերը.

1. Առաջին խմբին պատկանող գոյականները սեռական-տրա-
կան հոլովներում ունեն ց հոլովիչը: Այս խմբի առանձնահատ-
կություններն են՝ ա) ուղղական հոլովում նրանք բառավերջում
ուսեն ք, բ) հոլովումը հանդես է գալիս միայն հոգնակի թը-
վում: Հետևաբար սրանք անեզական գոյականներ կամ գոյականա-
բար գործածվող բառեր են, որոնք ցույց են տալիս խնամակցու-
թյուն, ազգակցություն, այսինքն՝ տոհմանուն, ցեղանուն, իսկ
որոշ բառեր էլ արտահայտում են միայն հավաքական իմաստ:

Նշված խումբը իր հերթին բաժանվում է երկու ենթախմբե-
րի.

Առաջին ենթախմբի բառերը ուղղական հոլովում ունեն ք
(ղղղէք, քէղացիք, բօլսէցիք), - դէք(ղաքըրդէք), -վրդէք

(ղավորդէք), և -իք (մարթիք) վերջավորութիւնները: Այս բաների ստական-տրական հոլովներում ուղղականի ք-ն փոխարինվում է ց-ով, իսկ ք-ից առաջ գտնվող ծայնավորներն էլ օ-ով: Նշված ենթախմբի բառերը գործածվում են միմիայն հավաքական իմաստ արտահայտելու համար: Ահա մի քանի օրինակներ ըստ վերջավորութիւնների:

Ք- քահանայք, քահանէք, քահանօց, քահանօսմէն, քահանօսմօք, աղայք, ղըղէք, ղըղօց, ղըղօսմէն, ղըղօսմօք, շանապարհ, շասիայք, շամփէք, շամփօց, շամփօսմէն, շամփօք (տես՝ 194), քէղացիք, քէղացօց, քէղացօսմէն, քէղացօք, բուլլէցիք, բուլլսկցօց, բուլլսկցօսմէն, բուլլսկցօք, իզմիրցիք, իզմիրցօց, իզմիրցօսմէն, իզմիրցօք:

Այդպես են հոլովվում բնակութեան կամ ծննդյան վայրը ցույց տվող հավաքական անունները՝ ղունէցիք, սուվասցիք, քախկըցիք, էրէվանցիք, արաբզիրցիք և այլն:

Դէք - կնիք, զընիգ, զընիգէք, զընդէք, զընդօց, զընդօսմէն, զընդօսմօք, այրիկ, արիգ, արիգէք, արիգօց, արիգօսմէն, արիգօսմօք կամ արիգօք, տայգր, ղաքըրդէք, ղաքըրդօց, ղաքըրդօսմէն, ղաքըրդօք, ամու "հորեղբայր" - ամուդէք, ամուդօց, ամուդօսմէն, ամուդօք, քենի, քենի-քենիդէք, քենիդօց, քենիդօսմէն, քենիդօք, ղրացի, թըրացին, թըրացինդէք, թըրացինդօց, թըրացինդօսմէն, թըրացինդօք, վրդէք - տալդալ - ղալվորդէք, ղալվորդօց, ղալվորդօսմէն, ղալվորդօք, էշ, էշ-էշվորդէք, էշվորդօց, էշվորդօցէն, էշվորդօք, բօյր, բօյր-բուրվորդէք, բուրվորդօց, բուրվորդօսմէն, բուրվորդօք:

Օրկրորդ ենթախմբին են պատկանում հավաքական իմաստ արտահայտող, ինչպես նաև ազգի, տոհմի անուններ ցույց տվող այն բառերը, որոնք ունեն -անք, -դանք, -օնք վերջավորութիւնները: Հոլովման ժամանակ ուղղական հոլովի ք-ն ստական հոլովում նույնպես փոխարինվում է ց-ով, սակայն, ի տարբերութիւն առաջին ենթախմբի, այստեղ ց-ից առաջ գտնվող ծայնավորները մնում են անփոփոխ: Այսպես՝

Անք - ձի, ցի-ցիյանք, ցիյանց, ցիյանցէն, ցիյանցօք, ղա, թէվ-թիվանք, թիվանց, թիվանցէն, թիվանցօք, եղբայր, ախար-ախիւրանք, ախիւրանցէն, ախիւրանցմօք, ափա "եղբայր բռնի փողաքշական ձւր" - ափանք, ափանց,

ափանցմէն, ափանցմօք,

աալ>դալ-դալանք, դալանց, դալանցմէն, դալանցմօք,

բթյր>բօր-բուրանք, բուրանց, բուրանցմէն, բուրանցմօք:

Դանք-ոսկր>օսկօր-օսկրրդանք, օսկրրդանց, օսկրրդանցէն, օսկրրդանօք

կտոր>զրդօր զրդօրդանք, զրդօրդանց, զրդօրդանցէն, զրդօրդանօք,

փըսօր-փըսօրդանք, փըսօրդանց, փըսօրդանցէն, փըսօրդանցօք,

էնք- փիլօյէնք, փիլօյէնց, փիլօյէնցմէն, փիլօյէնցմօք,

փարսէղէնք, փարսէղէնց, փարսէղէնցմէն, փարսէղէնցմօք,

ամուլէնք, ամուլէնց, ամուլէնցմէն, ամուլէնցմօք,

հարսայէնք, հարսայէնց, հարսայէնցմէն, հարսայէնցմօք,

մամէնք, մամէնց, մամէնցմէն, մամէնցմօք,

բարէնք, բարէնց, բարէնցմէն, բարէնցմօք,

դադայէնք, դադայէնց, դադայէնցմէն, դադայէնցմօք,

Սնք- քնօսք, քնօսնց, քնօսնցմէն, քնօսնցմօք, իընգաբարօնք,

իընգաբարօնց, իընգաբարօնցմէն, իընգաբարօնցմօք,

թէրգօնք, թէրգօնց, թէրգօնցմէն, թէրգօնցմօք,

շաղօնք, շաղօնց, շաղօնցմէն, շաղօնցմօք:

212. Իացի ացիք, էցիք, ցիք, էնք, օնք ածանցներով

կազմված հավաքական գոյականներից, ց հոլովման պատկանող մյուս

բառերը, դիտվելով իբրև եզակի, հոգնակի են կազմում նէր

հոգնակերտի միջոցով և հոլովվում օրինաչափորեն՝ ու հոլով-

մամբ: Օրինակ՝ ղըղէքներ, ղըղէքներու(ն), ղըղէքներէն, ղը-

ղէքնէրօք, ցիյանքներ, ցիյանքներու(ն), ցիյանքներէն, ցի-

յանքնէրօք և այլն :

213. Ք-ով վերջացող մի շարք անեզական բառեր առանձին

ոճերի և արտահայտութիւնների մեջ պահել են գրաբարյան հո-

լովածները: Նշենք մի քանի օրինակներ՝

աչք>աչից, հարսնիք-հարսնից, մէկկ-մէկաց, մօրուք-մօրվաց,

շըլլիք-շըլլից, վարձք-վարձուց, վըլասկ-վըլացուց, տարիք-

տարէց, ցառք-ցառաց, փաղնիք-փաղնից, օակ-օդաց և այլն:

Բաղանիք և հարսանիք բառերը գրաբարում սնթարկվում են

ո-ա խառը հոլովման, ոտք բառը՝ ի պարզ հոլովման, սակայն բար-

բառում նրանք փոխել են իրանց հոլովումը՝ պահպանելով հոլով-

ման գրաբարյան երանգը: Այսպես՝ ձտք-ձեռաց, ցառք-ցառաց

բառի համաբանությամբ ոտք-ոտից բառն էլ դարձել է օտկ-օղաց (" օղաց ջամփա" արտահայտության մեջ):

Բաղանիք-բաղանեաց և հարսանիք-հարսանեաց բառերը աչք աչից, շլիիք-շլիից և նման այլ բառերի համաբանությամբ դարձել են փաղնիք-փաղնից և հարսնիք-հարսնից:

Մօրուք-մօրվաց հոլովածւը անփոփոխ գալիս է գրաբարից, բանի որ ա-ից առաջ ու-ն փոխվում է վ-ի (տես՝ 47) ուստի՝ մօրուաց-մօրվագ:

ԵԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ- Գրաբարատիպ հոլովման շարքն է դասվում նաև օր բառի սեռական հոլովի աւուր հոլովածւը, որը գործածվում է առանձին ոճերի մեջ՝ " իրէք ավուր ջամփան", " հինգ ավուր հաց" և այլն:

214. Երկրորդ խմբին են պատկանում այն գոյականները, որոնք արտահայտում են տեղանուններ, հատկապես սրբավայրերի, վանքերի անունները: Այս գոյականները սեռական-տրական հոլովներում ունեն ա հոլովիչը, որն ավելանում է բառահիմքի վրա: Մյուս հոլովների՝ բացառականի և գործիականի կազմությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով: Այդ հոլովման են պատկանում Ասվածածին, Սուրբ Թորոս (Ջրփթորոս), Անարծաթ իրժիշկ, Լուսավորիչ, Բարուխտի, Արֆին, Փըրզիչ և այլ բառեր՝ բոլորն էլ՝ սրբավայրերի անուններ:

Ահա հոլովման ընդհանուր պատկերը.

Ուղղ.հայց.	Ասվածածին(ը)	Լուսավորիչ(ր)
Սեռ.տրակ	Ասվածածնա(ն)	Լուսավորչա
Բազ.	Ասվածածնէն	Լուսավորչէն
Գործ.	Ասվածածնօք	Լուսավորչօք

Հոլովումը կազմվել է գրաբարի ա վերջադրական հոլովման համաբանությամբ : Սակայն եթե գրաբարում այդ հոլովմանը են թարկվում են մարդկանց հատուկ անունները, ապա բարբառում այդ հոլովումը պահանջվել է միմիայն կրոնական իմաստով գործածվող հատուկ անունների, այսինքն սրբավայրերի անունների հոլովման ժամանակ: Ըստ երևույթին ժամերգությունների կամ կրոնական ծեսերի ժամանակ լսվող հոլովածւն է անցել բարբառ Այսպես . Թորոս անունը որպես մարդու՝ մահկանացուի անուն, ենթարկվում է ի հոլովման՝ Թորօսի, Թորօսէն և այլն: Իսկ

Թօրօսա հոլովածւը գործածական է որպես վանքի անուն, այն էլ սուրի բառի հարադրութեամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - "Սուրի Թօրօս" կապակցութեան մեջ սուրի բառից մնացել են միայն ս և փ հնչյունները: Ս-ն էլ ձայնեղացել, դարձել է զ: Սրանք էլ կցվել են Թօրօս բառին: Այսպիսով այդ վանքի անունը դարձել է Ջրփթօրօսա վանք):

215. Մալաթիայի բարբառն ունի հոլովման կանոնավոր և կուռ սիստեմ: Հոլովումների տարբերությունն ի հայտ է գալիս եզակի թվի սեռական հոլովում: Բոլոր գոյականները և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը պատկանում են հոլովումներից որևէ մեկին: Որոշ բառերում նկատվող հոլովման կրկնաձևավորությունը գրական լեզվի կամ այլ բարբառների ազդեցության արդյունք է (դունի-դան, շունի -շան և այլն): Եզակի թվի բացառական, գործիական և հոգնակի թվի բոլոր թեք հոլովների վերջավորությունները ընդհանուր են բարբառում: Չկան զարաուղի կամ անկանոն կոչված հոլովումներ, եթե նկատի չունենանք գրաբարտիպ հոլովման պատկանող բառերը, որոնք դիտվում են իբրև գրաբարյան վերապրուկ և գործածական են առանձին արտահայտությունների մեջ կամ էլ հավաքական իմաստ են արտահայտում:

ի-ն բարբառի ամենատարածված ու ամենագործուն հոլովումն է, որն իր ազդեցությանն է ենթարկել նաև այլ հոլովումների պատկանող շատ բառեր (ընկեր, աղջիկ և այլն), ինչպես նաև փոխառյալ բառերի զգալի մասը:

Հատկանշական է բարբառի գործիական հոլովի օք վերջավորությունը, որը կազմվելով գրաբարի հոգնակի թվի գործիականի մի բանի հոլովածուսի օրինակով՝ համաբանութեամբ ծավալվել և ընդհանրացել է բոլոր գոյականների և գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերի վրա:

ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

216. Որական ածականներն ունեն համամատության արժեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական:

217. Ածականի դրական աստիճանն ընդհանուր է հայերենի դրական աստիճանի հետ. Օրինակ՝ մանձ դրդա, սիվ բօն "սև գուլն" աղգէգ մարթ, գանանչ դէրէվ և այլն:

218. Բաղդատական աստիճանը կազմվում է մի բանի եղանակներո

ա) Գործածվում է դրական աստիճանը բացառական խնդրով, որ ընդունում է համեմատվող առարկան. օրինակ՝

Ան շաղան ան շաղայէն մանձ է:

Ան ախիհնը մէգալէն աղգէգ է:

բ) Համեմատությունը կատարվում է քէնց, քէնց թէ շաղկապ- ներով: Համեմատվող առարկան այդ դեպքում դրվում է ուղղական. հոլովով:

Սուրէնը խէլօք է, քէնց Ագօն:

Դանձը ձանդըր է, քէնց ձառը:

Փօրըս մօղ է, քէնց քօրըս:

գ) Իմաստի սաստկությունն ցույց տալու համար գործ է անվան թուրքերեն "դահա" (ափսի) մակբայը:

"Մանձ դըղաս դահա աղգէգ գարթա յա", կամ "Մանձ դըղաս քըզդիգ դըղայէս դահա աղգէգ գարթա յա":

 գայնիւհա կանգնիւ, գայնիմ ա, գայնէցա, գայնի՛ր,
 գանչիւհա կանաչիւ, գանչիմ ա, գանչէցա, գանչի՛ր,
 զըզվիւհա կծուիւ, զըզվիմ ա, զըզվէցա, զըզվի՛ր,
 զըռվիւհա կռուիւ, զըռվիմ ա, զըռվէցա, զըռվի՛ր,
 թաղիւհա դառիւ, թաղիմ ա, թաղէցա, թաղի՛ր,
 թէղնիւհա զեղնիւ, թէղնիմ ա, թէղնէցա, թէղնի՛ր,
 թըթվիւհա թթուիւ, թթվիմ ա, թթվէցա, թթվի՛ր,
 թըռմիւհա թառամիւ, թըռմիմ ա, թըռմէցա, թըռմի՛ր,

Թըռչիլ և Թըռչիլ, Թըռչիմ ա, Թըռչէցա, Թըռչի՛ր,
 ժանգօղիլ և ժանգոտիլ, ժանգօղիմ ա, ժանգօղէցա, ժանգօղի՛ր,
 խօսիլ և խօսիլ, խօսիմ ա, խօսէցա, խօսի՛ր,
 հօքնիլ և հոգնիլ, հօքնիմ ա, հօքնէցա, հօքնի՛ր,
 ձաքիլ և ձագիլ, ձաքիմ ա, ձաքէցա, ձաքի՛ր,
 ձընիլ և ձնանիլ, ձընիմ ա, ձընէցա, ձընի՛ր,
 մաշիլ և մաշիլ, մաշիմ ա, մաշէցա, մաշի՛ր,
 նըստիլ և նստիլ, նըստիմ ա, նըստէցա, նըստի՛ր,
 սաղգիլ և սատակիլ, սաղգիմ ա, սաղգէցա, սաղգի՛ր,
 ցամքիլ և ցամքէլ, ցամքիմ ա, ցամքէցա, ցամքի՛ր,
 փազմիլ և բազմիլ, փազմիմ ա, փազմէցա, փազմի՛ր,
 փանիլ և բանիլ, փանիմ ա, փանէցա, փանի՛ր:

278. ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ

ԲՈՒՍԱՆԻԼ > ՓՈՒՍՆԻԼ, ԱՆՑԱՆԵԼ > ԱՍՆԻԼ

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ - փոլսնիլ ասնիլ
 Ապտնի - փոլսնէլոլ ասնէլոլ
 Վաղակատար - փոլսիր անցիր
 Հարակատար - փոլսած անցած
 Ենթակայական - փոլսնօղ ասնօղ
 Ժխտման - փոլսնիր ասնիր

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի

Հոգնակի

փոլսնիմ	ասնիմ	փոլսնինք	ասնինք
փոլսնիս	ասնիս	փոլսնիք	ասնիք
փոլսնի	ասնի	փոլսնին	ասնին

ԱՆՑՅԱԼԻ

ԱՊԱԻՆԻ

Եզակի

Հոգնակի

փոլսնէյի	ասնէյի	փոլսնէյաք	ասնէյաք
փոլսնէյիր	ասնէյիր	փոլսնէյիք	ասնէյիք
փոլսնէր	ասնէր	փոլսնէյին	ասնէյին

ՍԱՀՄԱՆԱՆԱՆ ԵՂԱՆԱԿ
Ն Ե Ր Կ Ա

ԾՊԱԿԻ		ՀՈԳՆԱԿԻ	
փոլսնիմ ա	զասնիմ ա	փոլսնինք ա	զասնինք ա
փոլսնիս ա	զասնիս ա	փոլսնիք ա	զասնիք ա
փոլսնի յա	զասնի յա	փոլսնին ա	զասնին ա

ԱՆՅՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ

ԾՊԱԿԻ	
փոլսնէյի յա	զասնէյի յա
փոլսնէյիր ա	զասնէյիր ա
փոլսնէր ա	զասնէր ա

ՀՈԳՆԱԿԻ	
փոլսնէյաք ա	զասնէյաք ա
փոլսնէյիք ա	զասնէյիք ա
փոլսնէյին ա	զասնէյին ա

Ա Պ Ա Ի Ն Ի

ԾՊԱԿԻ	ՀՈԳՆԱԿԻ
փոլսնէլու յիմ	փոլսնէլու յիք
փոլսնէլու յիս	փոլսնէլու յէք
փոլսնէլու յէ	փոլսնէլու յէն
ասնէլու յիմ	ասնէլու յիք
ասնէլու յիս	ասնէլու յէք
ասնէլու յէ	ասնէլու յէն

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱԻՆԻ

ԾՊԱԿԻ	
փոլսնէլու էյի	ասնէլու էյի
փոլսնէլու էյիր	ասնէլու էյիր
փոլսնէլու յէր	ասնէլու յէր

ՀՈԳՆԱԿԻ	
փոլսնէլու էյաք	ասնէլու էյաք
փոլսնէլու էյիք	ասնէլու էյիք
փոլսնէլու էյին	ասնէլու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

փոփոխի իմ	անցիր իմ
փոփոխի իս	անցիր իս
փոփոխի է	անցիր է

Հոգնակի

փոփոխի իք	անցիր իք
փոփոխի էք	անցիր էք
փոփոխի են	անցիր են

ԱՆՑՑԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

փոփոխի էյի	անցիր էյի
փոփոխի էյիր	անցիր էյիր
փոփոխի էր	անցիր էր

ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

Հոգնակի

փոփոխած իմ	անցած իմ	փոփոխած իք	անցած իք
փոփոխած իս	անցած իս	փոփոխած էք	անցած էք
փոփոխած է	անցած է	փոփոխած են	անցած են

ԱՆՑՑԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

փոփոխած էյի	անցած էյի
փոփոխած էյիր	անցած էյիր
փոփոխած էր	անցած էր

Հոգնակի

փոփոխած էյաք	անցած էյաք
փոփոխած էյիրք	անցած էյիրք
փոփոխած էյին	անցած էյին

ԱՆՑՑԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի

Հոգնակի

փոփոխ	անց	փոփոխը	անցանք
-------	-----	--------	--------

փոփոխար	անցար	փոփոխար	անցար
փոփոխավ	անցավ	փոփոխան	անցան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
զրփոփոխանիմ	զասնիմ	զրփոփոխանինք	զասնինք
զրփոփոխանիս	զասնիս	զրփոփոխանիք	զասնիք
զրփոփոխանի	զասնի	զրփոփոխանին	զասնին

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
զրփոփոխանէյի	զասնէյի	զրփոփոխանէյաք	զասնէյաք
զրփոփոխանէյիր	զասնէյիր	զրփոփոխանէյիք	զասնէյիք
զրփոփոխանէր	զասնէր	զրփոփոխանէյին	զասնէյին

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի			
բիղի փոփոխանիմ	բիղ ասնիմ		
բիղի փոփոխանիս	բիղ ասնիս		
բիղի փոփոխանի	բիղ ասնի		

Հոգնակի			
բիղի փոփոխանինք	բիղ ասնինք		
բիղի փոփոխանիք	բիղ ասնիք		
բիղի փոփոխանին	բիղ ասնին		

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի			
բիղի փոփոխանէյի	բիղ ասնէյի		
բիղի փոփոխանէյիր	բիղ ասնէյիր		
բիղի փոփոխանէր	բիղ ասնէր		

Հոգնակի			
բիղի փոփոխանէյաք	բիղ ասնէյաք		
բիղի փոփոխանէյիք	բիղ ասնէյիք		

բիղի փուսնէյին բիղ ասնէյին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի Հոգնակի
փուսի՛ր, անցի՛ր փուսէ՛ք անցէ՛ք

Այս խոնարհման են պատկանում հետևյալ բայերը՝
հանքչիլ (հանգիլ), հանքիմ ա, հանքիր իմ, հանքա, հանքի՛ր
հաքնիլ (ազանիլ), հաքնիմ ա, հաքիր իմ, հաքա, հաքի՛ր
հասնիլ (հասանիլ), հասնիմ ա, հասիր իմ, հասա, հասի՛ր
մառնիլ (մեռանիլ), մառնիմ ա, մառիր իմ, մառա, մառի՛ր
թըքնիլ (ղիպիլ), թըքնիմ ա, թըքիր իմ, թըքա, թըքի՛ր
փախնիլ (փախչիլ), փախնիմ ա, փախիր իմ, փախա, փախի՛ր
գըքնիլ (կպչիլ), գըքնիմ ա, գըքիր իմ, գըքա, գըքի՛ր
փլիլ (փլչիլ), փլիմ ա, փլիր իմ, փլա, փլի՛ր :

279. Ա խոնարհման ԳԱՐՁ ԲԱՅՄԻ

Աղալ > աղալ խաղալ > խաղալ

Գ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ - աղալ խաղալ
Ապառնի - աղալու խաղալու
Վաղակատար - աղցիր խաղցիր
Հարակատար - աղցած խաղցած
Ենթակայական - աղցող խաղցող
Ժխտման - աղար խաղար

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի Հոգնակի
աղամ խաղամ աղանք խաղանք
աղաս խաղաս աղաք խաղաք
աղա խաղա աղան խաղան

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի Հոգնակի
աղայի խաղայի աղայաք խաղայաք
սղայիր խաղայիր աղայիք խաղայիք
իղար խաղար աղային խաղային

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱՆ

Ն Ե Ր Կ Ա

Եզակի

զաղամ ա	խաղամ ա
զաղաս ա	խաղաս ա
զաղա յա	խաղա յա

Հոգնակի

զաղանք ա	խաղանք ա
զաղաք ա	խաղաք ա
զաղան ա	խաղան ա

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի

զաղայի յա	խաղայի յա
զաղայիր ա	խաղայիր ա
զաղար ա	խաղար ա

Հոգնակի

զաղայաք ա	խաղայաք ա
զաղայիք ա	խաղայիք ա
զաղային ա	խաղային ա

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի

աղալու յիմ	խաղալու յիմ
աղալու յիս	խաղալու յիս
աղալու յէ	խաղալու յէ

Հոգնակի

աղալու յիք	խաղալու յիք
աղալու յէք	խաղալու յէք
աղալու յէն	խաղալու յէն

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՐՆԻ

Եզակի

աղալու էյի	խաղալու էյի
աղալու էյիր	խաղալու էյիր
աղալու յէր	խաղալու յէր

Հոգնակի

աղալու էյաք	խաղալու էյաք
աղալու էյիք	խաղալու էյիք

աղալու էյին խաղալու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

աղցիր իմ	խաղցիր իմ
աղցիր իս	խաղցիր իս
աղցիր է	խաղցիր է

Հոգնակի

աղցիր իք	խաղցիր իք
աղցիր էք	խաղցիր էք
աղցիր են	խաղցիր են

ԱՆՅՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

աղցիր էյի	խաղցիր էյի
աղցիր էյիր	խաղցիր էյիր
աղցիր էր	խաղցիր էր

Հոգնակի

աղցիր էյաք	խաղցիր էյաք
աղցիր էյիք	խաղցիր էյիք
աղցիր էյին	խաղցիր էյին

ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

աղցած իմ	խաղցած իմ
աղցած իս	խաղցած իս
աղցած է	խաղցած է

Հոգնակի

աղցած իք	խաղցած իք
աղցած էք	խաղցած էք
աղցած են	խաղցած են

ԱՆՅՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

աղցած էյի	խաղցած էյի
աղցած էյիր	խաղցած էյիր
աղցած էր	խաղցած էր

Հոգնակի

աղցած էյաք	խաղցած էյաք
------------	-------------

աղցած	էյիք	խաղցած	էյիք
աղցած	էյին	խաղցած	էյին

ԱՆՏՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի		Հոգնակի	
աղացի	խաղացի	աղացինք	խաղացինք
աղացիր	խաղացիր	աղացիք	խաղացիք
աղաց	խաղաց	աղացին	խաղացին

ԳԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
գաղամ	զը խաղամ	գաղանք	զը խաղանք
գաղաս	զը խաղաս	գաղաք	զը խաղաք
գաղա	զը խաղա	գաղան	զը խաղան

ԱՆՑՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
գաղայի	զը խաղայի	գաղայաք	զը խաղայաք
գաղայիր	զը խաղայիր	գաղայիք	զը խաղայիք
գաղար	զը խաղար	գաղային	զը խաղային

ՀԱՐԿԱՄԻՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
բիզ աղամ	բիզի խաղամ	բիզ աղանք	բիզի խաղանք
բիզ աղաս	բիզի խաղաս	բիզ աղաք	բիզի խաղաք
բիզ աղա	բիզի խաղա	բիզ աղան	բիզի խաղան

ԱՆՑՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
բիզ աղայի	բիզի խաղայի	բիզ աղայաք	բիզի խաղայաք
բիզ աղայիր	բիզի խաղայիր	բիզ աղայիք	բիզի խաղայիք
բիզ աղար	բիզի խաղար	բիզ աղային	բիզի խաղային

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի		Հոգնակի	
աղա	խաղա	աղացէք	խաղացէք

Այս ձևով են խոնարհվում՝

երթալ>էրթալ, երւիլ>էրվալ, թնդալ>թընդալ, խնդալ>խընդալ,
խոխալ>խօխալ "նախանծել", կարդալ>գարթալ, կայծկլալ>գագ-
զըլդալ, կսկծալ>զըսկըծալ, կրծտել>զըջրդալ, հազալ>հազալ,
հաւատալ>հավդալ, հւալ>հէվալ, հոզալ>հօքալ, խղմալ>խըղջալ,
մխալ>մըխալ, մնալ>մընալ, պժգալ>բըշկալ, բօրբալ "ցատկել",
հօրփալ "ցատկոտել", հընդտալ "հոտոտել" և այլն:

280. Ա խոնարհման Ածանցակոր ԲԱՅԵՐ

Մոռանալ>մառնալ Ամաչել>ամըշնալ

Դ Ե Ր Ի Ա Յ Ն Ե Ր

Անորոշ	մառնալ	ամըշնալ
Ապառնի	մառնալու	ամըշնալու
Վաղակատար	մառցիր	ամըշցիր
Հարակատար	մառցած ¹	ամըշցած
Ենթակայական	մառցող	ամըշցող
Ժխտման	մառնար	ամըշնար

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ն Ի

Եզակի		Հոգնակի	
մառնամ	ամըշնամ	մառնանք	ամըշնանք
մառնաս	ամըշնաս	մառնաք	ամըշնաք
մառնա	ամըշնա	մառնան	ամըշնան

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
մառնայի	ամըշնայի	մառնայաք	ամըշնայաք
մառնայիր	ամըշնայիր	մառնայիք	ամըշնայիք
մառնար	ամըշնար	մառնային	ամըշնային

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա

Եզակի		Հոգնակի	
մառնամ	ա զամըշնամ ա	մառնանք	ա զամըշնանք ա
մառնաս	ա զամըշնաս ա	մառնաք	ա զամըշնաք ա

1. նաև՝ մառուցած

մառնա յա զամբընա յա մառնան ա զամբընան ա

ԱՆԷՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի

մառնայի յա	զամբընայի յա
մառնայիր ա	զամբընայիր ա
մառնար ա	զամբընար ա

Հոգնակի

մառնայաք ա	զամբընայաք ա
մառնայիք ա	զամբընայիք ա
մառնային ա	զամբընային ա

Ա Վ Ա Ռ Ն Ի

Եզակի

մառնալու յիմ	ամբընալու յիմ
մառնալու յիս	ամբընալու յիս
մառնալու յէ	ամբընալու յէ

Հոգնակի

մառնալու յիք	ամբընալու յիք
մառնալու յէք	ամբընալու յէք
մառնալու յէն	ամբընալու յէն

ԱՆԵՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի

մառնալու էյի	ամբընալու էյի
մառնալու էյիր	ամբընալու էյիր
մառնալու էր	ամբընալու էր

Հոգնակի

մառնալու էյաք	ամբընալու էյաք
մառնալու էյիք	ամբընալու էյիք
մառնալու էյին	ամբընալու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

Հոգնակի

մառցիր իմ	ամբըցիր իմ	մառցիր իք	ամբըցիր իք
մառցիր իս	ամբըցիր իս	մառցիր էք	ամբըցիր էք
մառցիր է	ամբըցիր է	մառցիր էն	ամբըցիր էն

ԱՆՉՅԱԼԻ ԿԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

մառցիւր	էյի	ամըշցիւր	էյի
մառցիւր	էյիւր	ամըշցիւր	էյիւր
մառցիւր	էր	ամըշցիւր	էր

Հոգնակի

մառցիւր	էյաք	ամըշցիւր	էյաք
մառցիւր	էյիք	ամըշցիւր	էյիք
մառցիւր	էյին	ամըշցիւր	էյին

ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

մառցած	իմ	ամըշցած	իմ
մառցած	իս	ամըշցած	իս
մառցած	է	ամըշցած	է

Հոգնակի

մառցած	իք	ամըշցած	իք
մառցած	էք	ամըշցած	էք
մառցած	էն	ամըշցած	էն

ԱՆՉՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

մառցած	էյի	ամըշցած	էյի
մառցած	էյիւր	ամըշցած	էյիւր
մառցած	էր	ամըշցած	էր

Հոգնակի

մառցած	էյաք	ամըշցած	էյաք
մառցած	էյիք	ամըշցած	էյիք
մառցած	էյին	ամըշցած	էյին

ԱՆՉՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Եզակի

Հոգնակի

սառցա	ամըշցա	մառցանք	ամըշցանք
մառցար	ամըշցար	մառցաք	ամըշցաք
մառցալ	ամըշցալ	մառցան	ամըշցան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
զը մառնամ	զամըշնամ	զը մառնանք	զամըշնանք
զը մառնաս	զամըշնաս	զը մառնաք	զամըշնաք
զը մառնա	զամըշնա	զը մառնան	զամըշնան

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի	
զը մառնայի	զամըշնայի
զը մառնայիր	զամըշնայիր
զը մառնար	զամըշնար

Հոգնակի

զը մառնայաք	զամըշնայաք
զը մառնայիրք	զամըշնայիրք
զը մառնային	զամըշնային

ՀԱՐԿԱՊԱՅԱՆ ԵՂԱՆԱԿ
ԱՊԱՌՆԻ

Եզակի	
բիդի մառնամ	բիդ ամըշնամ
բիդի մառնաս	բիդ ամըշնաս
բիդի մառնա	բիդ ամըշնա

Հոգնակի

բիդի մառնանք	բիդ ամըշնանք
բիդի մառնաք	բիդ ամըշնաք
բիդի մառնան	բիդ ամըշնան

ԱՆՅՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի	
բիդի մառնայի	բիդ ամըշնայի
բիդի մառնայիր	բիդ ամըշնայիր
բիդի մառնար	բիդ ամըշնար

Հոգնակի

բիդի մառնայաք	բիդ ամըշնայաք
բիդի մառնայիրք	բիդ ամըշնայիրք

բիղի մտնային

բիղ ամըշնային

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի

Հոգնակի

մառցի՛ր, ամըշցի՛ր

մառցէ՛ք ամըշջէ՛ք

Այս ձևով են խոնարհվում հետևյալ բայերը.

աղօրնալ, արբանալ, ախկաղնալ, արթըննալ, բառվընալ, զըրնալ, գազուղնալ, զըզվէնալ, գուշտնալ, դափագնալ, էվէլնալ, էր-զըննալ, էրթըմնալ, գարմանալ, թէթէվնալ, թօլնալ, լաննալ, լօղնալ, լօսնալ, խէղջնալ, խուլնալ, խօրուենալ, հասկընալ, համօվնալ, հաստնալ, հարուենալ, հըվընդնալ, հըվըդնալ, ման-դըրնալ, գարջնալ, գաբուղնալ, բօղնալ, մազնալ, մօղիզնալ, ձանդըրնալ, ձարվընալ, ձէրանալ, նէղնալ, շօղվէնալ, շաղնալ, շէննալ, շարնալ, շօրնալ, սիվնալ, սուրնալ, սուղնալ, ցազ-նալ, ցուրդնալ, ուռէնալ, փարագնալ, փանձըրնալ, ջըբըլնալ, վէրնալ, վախնալ, բընանալ, բէշնալ և այլն:

ՊԱՏՃԱԽԱԿԱՆ ԲԱՅԵՐ

281. Պատճառական բայերը կազմվում են երկու կերպ՝ ա) ածանցմամբ, բ) նկարագրական եղանակով, այսինքն որևէ բայի և տալ>դալ- բայի հարադրուլթյամբ:

Իբրև պատճառական ածանց բարբառում գործածվում է ցուն ածանցը, որն ավելանում է ներկայի հիմքին: ներկայի հիմքում ն (ան) ածանց ունեցող բայերը զրկվում են ածանցից: Անորոշ դերբայում ցուն ածանցին կցվում է դերբայական էլ վերջավորուլթյանը, անկախ այն բանից, թե ածանցվող բայը որ խոնարհման է պատկանում. Օրինակ՝ ազանիլ>հաքնիլ-հաքցունէլ, խմել>խըմէլ-խըմցունէլ, խօսիլ>խօսիլ-խօսցունէլ, հասկանալ>հասկը-նալ-հասկըցունէլ, ցուցանել>ցուցունէլ:

Ներգործական սեռի բայերը պատճառական են դառնում ցուն ածանցի միջոցով, իսկ չեզոք սեռի բայերը, ստանալով այս ածանցը, վերածվում են ներգործական սեռի. օրինակ՝ խաղալ-խախցունէլ, կրովիլ-զըռվըցունէլ, լօղնալ-լօխցունէլ, հը-վըդնալ-հըվըդցունէլ և այլն:

Ոչ բոլոր բայերից ածանցմամբ կարելի է կազմել պատճառական ձևեր. Օրինակ՝ փէրէլ, բըրէլ, ըսէլ, բօվէլ, շընէլ,

յնքէլ ըայերի գառճառական իմաստը, այսինքն միջնորդավոր-
ման գաղափարն արտահայտվում է սալ>դալ բայի Կարադրուիթյամբ,
ինչպես՝ փէրէլ դալ, բըրէլ դալ, ըսէլ դալ և այլն:

Տալ>դալ բայը գործածվում է նաև ածանցմամբ կազմված գառ-
ճառական բայերի հետ և ստացվում է կրկնակի միջնորդավորում:
Օրինակ՝ հաբցունէլ դալ, խըմցունէլ դալ:

282. Ածանցմամբ կազմված գառճառական բայերը խոնարհվում
են էլ խոնարհման պարզ բայերի նման հետևյալ կերպ.

Հաբցունէլ	էվէլցունէլ
-----------	------------

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ	հաբցունէլ	էվէլցունէլ
Ապառնի	հաբցունէլու	էվէլցունէլու
Վաղակատար	հաբցուցիր	էվէլցուցիր
Հարակատար	հաբցուցած	էվէլցուցած
Ենթակայական	հաբցունօղ	էվէլցունօղ
Ժխուման	հաբցունիր	էվէլցունիր

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի

հաբցունիմ	էվէլցունիմ
հաբցունիս	էվէլցունիս
հաբցունէ	էվէլցունէ

Հոգնակի

հաբցունինք	էվէլցունինք
հաբցունէք	էվէլցունէք
հաբցունէն	էվէլցունէն

ԱՆՑՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

Եզակի

հաբցունէյի	էվէլցունէյի
հաբցունէյիր	էվէլցունէյիր
հաբցունէր	էվէլցունէր

Հոգնակի

հաբցունէյաք	էվէլցունէյաք
-------------	--------------

հարցունէյիք
հարցունէյին

էվէլցունէյիք
էվէլցունէյին

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի

հարցունիմ ւ գէվէլցունիմ ւ
հարցունիս ւ գէվէլցունիս ւ
հարցունէյա գէվէլցունէյա ւ

Հոգնակի

հարցունինք ւ գէվէլցունինք ւ
հարցունէք ւ գէվէլցունէք ւ
հարցունէն ւ գէվէլցունէն ւ

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Եզակի

հարցունէյի յա գէվէլցունէյի յա
հարցունէյիր ւ գէվէլցունէյիր ւ
հարցունէր ւ գէվէլցունէր ւ

Հոգնակի

հարցունէյաք ւ գէվէլցունէյաք ւ
հարցունէյիք ւ գէվէլցունէյիք ւ
հարցունէյին ւ գէվէլցունէյին ւ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Եզակի

հարցունէլու յիմ էվէլցունէլու յիմ
հարցունէլու յիս էվէլցունէլու յիս
հարցունէլու յէ էվէլցունէլու յէ

Հոգնակի

հարցունէլու յիք էվէլցունէլու յիք
հարցունէլու յէք էվէլցունէլու յէք
հարցունէլու յէն էվէլցունէլու յէն

ԱՆՅՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

Եզակի

հարցունէլու էյի էվէլցունէլու էյի

հաքցունելու էյիր	էվէլցունելու էյիր
հաքցունելու յիր	էվէլցունելու յեր

Հոգնակի

հաքցունելու էյաք	էվէլցունելու էյաք
հաքցունելու էյիք	էվէլցունելու էյիք
հաքցունելու էյին	էվէլցունելու էյին

ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

հաքցուցիր իմ	էվէլցուցիր իմ
հաքցուցիր իս	էվէլցուցիր իս
հաքցուցիր է	էվէլցուցիր է

ԱՆՅՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

Եզակի

հաքցուցիր էյի	էվէլցուցիր էյի
հաքցուցիր էյիր	էվէլցուցիր էյիր
հաքցուցիր էր	էվէլցուցիր էր

Հոգնակի

հաքցուցիր էյաք	էվէլցուցիր էյաք
հաքցուցիր էյիք	էվէլցուցիր էյիք
հաքցուցիր էյին	էվէլցուցիր էյին

Հ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր

Եզակի

հաքցուցամ իմ	էվէլցուցամ իմ
հաքցուցամ իս	էվէլցուցամ իս
հաքցուցամ է	էվէլցուցամ է

ԱՆՅՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

Եզակի

հաքցուցամ էյի	էվէլցուցամ էյի
հաքցուցամ էյիր	էվէլցուցամ էյիր
հաքցուցամ էր	էվէլցուցամ էր

Հոգնակի

հաքցուցամ էյաք	էվէլցուցամ էյաք
----------------	-----------------

հաքցուցած	էյիք	էվէլցուցած	էյիք
հաքցուցած	էյին	էվէլցուցած	էյին

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Ծգակի

հաքցուցի	էվէլցուցի
հաքցուցիր	էվէլցուցիր
հաքցուց	էվէլցուց

Հոգնակի

հաքցուցինք	էվէլցուցինք
հաքցուցիր	էվէլցուցիր
հաքցուցին	էվէլցուցին

ԳԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱՆ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Ծգակի

զը	հաքցունիմ	գէվէլցունիմ
զը	հաքցունիս	գէվէլցունիս
զը	հաքցունէ	գէվէլցունէ

Հոգնակի

զը	հաքցունինք	գէվէլցունինք
զը	հաքցունէք	գէվէլցունէք
զը	հաքցունէն	գէվէլցունէն

ԱՆՏՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

Ծգակի

զը	հաքցունէյի	գէվէլցունէյի
զը	հաքցունէյիր	գէվէլցունէյիր
զը	հաքցունէր	գէվէլցունէր

Հոգնակի

զը	հաքցունէյաք	գէվէլցունէյաք
զը	հաքցունէյիք	գէվէլցունէյիք
զը	հաքցունէյին	գէվէլցունէյին

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

Յգակի

բիդի	հարցունիմ	բիդ	էվէլցունիմ
բիդի	հարցունիս	բիդ	էվէլցունիս
բիդի	հարցունէ	բիդ	էվէլցունէ

Հոգնակի

բիդի	հարցունիներ	բիդ	էվէլցունիներ
բիդի	հարցունէք	բիդ	էվէլցունէք
բիդ	հարցունէն	բիդ	էվէլցունէն

ԱՆՅՅԱԼԻ ԱԳԱՅԻ

Յգակի

բիդի	հարցունէյի	բիդ	էվէլցունէյի
բիդի	հարցունէյիք	բիդ	էվէլցունէյիք
բիդ	հարցունէր	բիդ	էվէլցունէր

Հոգնակի

բիդի	հարցունէյաք	բիդի	էվէլցունէյաք
բիդի	հարցունէյիք	բիդ	էվէլցունէյիք
բիդի	հարցունէյին	բիդ	էվէլցունէյին

ՀՐԱՄԱՅԱՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Յգակի

Հոգնակի

հարցո՛ւր	էվէլցո՛ւր	հարցուցէ՛ք	էվէլցուցէ՛ք
----------	-----------	------------	-------------

Նկարագրական նդանակով կազմված պատմառական բայերում ցուն բայը մտում է անհոփոխ և խոնարհվում է միայն դալ-ը՝ բարէլ դուլի, սլորէլ դուլիր և այլն: Իսկ բայի խոնարհման մասին անս 5 288:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Հարցանել հարցունէլ բայը էլ խոնարհման անանցավոր բայ լինելով հանդերձ՝ կազմվել և խոնարհվում է պատմառական բայերի նման՝ հարցունիմ, հարցուցի, հարցունսդ, հարցո՛ւր, հարցուցէ՛ք և այլն:

ԿՐԱՎՈՐԱՆՈՆ ԲԱՅԵՐ

283. Կրավորական սեռը կազմվում է ներգործական սեռի բայերից վ անանցի միջոցով: է և ի խոնարհման բայերը վ անանցըն ընդունում են ներկայի հիմքի և դերբայական մասնիկի միջև, իսկ ա խոնարհման ներգործական բայերը՝ անցյալի հիմքի

և դերբայական մասնիկի միջև: Կրավորական բայերի դերբայական մասնիկն է իլ• օրինակներ՝ աղալ>աղալ-աղասվիլ, գրել>ըր-րել-ըրրվիլ, բանալ>փանալ-փասվիլ, խօսիլ>խօսիլ-խօսվիլ, խաղալ>խաղալ-խաղասվիլ, կարդալ>գարթալ-գարթասվիլ, բնրել>փերել-փերվիլ, հասկանալ>հասկընալ-հասկըսվիլ և այլն:

284. Պատճառական բայերը կրավորական են դառնում ցու-նել վերջավորությունը վերածելով ցրվիլ-ի• այսպես՝ իջուցանել>էջցունել-էջցրվիլ, էվելցունել>էվելցրվիլ, փակուցանել>փագցունել-փագցրվիլ և այլն:

285. Մի քանի բայերում կրավորականը կազմվում է անկանոն ձևով: Այսպես՝ իջանել>էջնալ, մտանել>մըղնալ, գտանել>բըղնալ բայերի կրավորականը պետք է կազմվեր անցյալի հիմքից, բայց կազմվում է նսրկայի հիմքից՝ էջնրվիլ, բըղնրվիլ մըղնրվիլ: Այս անկանոնությունը կարելի է բացատրել լծորդություն փոփոխությամբ: Սրանք սկզբում ե>է խոնարհման բայելինելով՝ կրավորականը կազմել են նսրկայի հիմքից, ապա շունայած լծորդության փոփոխությանը, կրավորականի կազմությունը մնացել է անփոփոխ:

Կրավորական բայերը խոնարհվում են ի խոնարհման պարզ բայերի նման: Դերբայական կամ դիմային վերջավորություններից առաջ բայն ստանում է վ• ինչպես՝ սիրվիլ, սիրվիմ, սիրի սիրվիմ, սիրվիր, սիրվէցա, սիրվէցէք և այլն:

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԿԵՐՊԻ ԲԱՅԵՐ

286. Բազմապատկական կերպի բայերը կազմվում են տ>ղ, վրղ, վրող, գրող կերպածանցներով: Հիմնական կերպածանցը ղ-ն է: Սակայն երբ գործողությունը դառնում է փոխադարձ բազմապատիկ, ապա ղ ածանցին միանում է կրավորականի վ-ն և կազմում վրղ կամ ղրվ: Ստորև տալիս ննք այդ ածանցներով կազմված բազմապատկական բայերի մի քանի օրինակներ.

Դ - Օլորդիլ, գոյըրդէլ (նաև՝ գօղըրդէլ), մանդըրդէլ, թափըրդէլ, գըրվըրդիլ, բաղըրդէլ, ջանգըրդէլ, բըջըրընդէլ, թանգըրդէլ (դանակոտել - " դանակով ծակոտել՝ դանակահարել"), փըզգըրդէլ և այլն:

Վրղ - բաթվըրդիլ, բահվըրդիլ, բըզվըրդիլ,
Պրվ -(աըվ)-դաթազըրվիլ, բըսըրստվիլ,

գըող - գօխգըողէլ,

ըղ - լըզվըողէլ, լըխմըողէլ:

Սրանք խոնարհվում են է կամ ի խոնարհման պարզ բայերի խոնարհման օրինակով:

ԵՐԿՐՈՐՈՂԱԿԱՆ ԲԱՂԱՊՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

287. Երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են ապառնի և հարակատար դերբայների և լինիլ-ըլլիլ բայի հարադրությամբ: Ըլլիլ-ն այստեղ օժանդակ բայի դեր է կատարում: Ստորև տալիս ենք գրել-ըրրէլ բայի երկրորդական բաղադրյալ ժամանակների ամեն ձևից մեկական օրինակ:

ըրրած ըլլիմ	ըրրէլու ըլլիմ
ըրրած ըլլէյի	ըրրէլու ըլլէյի
ըրրած գըլլիմ	ըրրէլու գըլլիմ
ըրրած գըլլէյի	ըրրէլու գըլլէյի
ըրրած բիղ ըլլիմ	ըրրէլու բիղ ըլլիմ
ըրրած բիղ ըլլէյի	ըրրէլու բիղ ըլլէյի
ըրրած էղա	ըրրէլու էղա

Երկրորդական այս բաղադրյալ ժամանակները գործածվում են նաև թեական նէ մասնիկի հարադրությամբ, որը դրվում է ըլլիլ բայից հետո միայն՝ ըրրած ըլլիմ նէ, ըրրած էղա նէ, ըրրէլու ըլլէյի նէ և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

288. Բայերի անկանոնությունը երևան է գալիս անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում, այն է՝ սահմ. եղանակի անցյալ կատարյալ, բուն հրամայական, վաղակատար և հարակատար դերբայներում և սրանցով կազմված ժամանակներում: Անկանոն խոնարհում ունեն հետևյալ բայերը:

1. Առնելէնէլ

Ապառնի դերբայ՝ էնէլու, վաղակ.՝ էրիը, հարակ.՝ էրած, ենթակ.՝ էնօղ, ժխտման՝ էնիը:

Ըղծական ապառնի՝ էնիմ, էնիս, էնէ, էնինք, էնիք, էնէն: Անցյալ կատարյալ՝ էրի, էրիը, էրավ, էրինք, էրիք, էրին: Հրամայական եղան.՝ էրէ, էրէք:

2. Գալ>բալ

Ապառնի դերրայ՝ քալու, վաղակ. էգիր, հարակ. քալած
(նաև՝ էգած), ենթակայական՝ էգող, ժխտման՝ քար:

Ըղծական ապառնի՝ քամ, քաս, քա, քանք, քաք, քան:

Սահմ. նսրկա՝ քամ ա, քաս ա, քա յա և այլն:

Պայմ. ապառնի՝ գուքամ, գուքաս, գուքա և այլն:

Հրամայական եղանակ՝ էգօ, էգէք

3. Երթալ>երթալ

Ապառնի՝ էրթալու, վաղակ.՝ քացիր, հարակ.՝ քացած, ենթակ.՝ քացող (հազվադեպ՝ էրթըցող), ժխտման՝ էրթար, ըղծական՝ էրթամ, էրթաս, էրթա և այլն:

Անցյալ կատարյալ՝ քացի, քացիր, քընաց, քացինք, քացիք, քացին:

Հրամայական եղանակ՝ քընա՛, քացէք:

4. Ուղէլ>ուղէլ

Ապառնի՝ ուղէլու, վաղակ.՝ գէրիր, հարակ.՝ գէրած, ենթակայական՝ ուղող, ժխտման՝ ուղիր:

Ըղծական՝ ուղիմ, ուղիս, ուղէ, ուղինք և այլն:

Անցյալ կատարյալ՝ գէրա, գէրար, գէրավ, գէրանք, գէրաք, գէրան:

Հրամ. եղանակ՝ գէր, գէրէք.

5. Էղիլ>ըլլիլ

Ապառնի՝ ըլլէլու, վաղակ. էղիր, հարակ.՝ էղած, ենթակ.՝ էղող, ժխտման՝ ըլլիր:

Ըղծական՝ ըլլիմ, ըլլիս, ըլլի, ըլլինք և այլն:

Անցյալ կատարյալ՝ էղա, էղար, էղավ, էղանք, էղաք, էղան:

Հրամայական եղանակ՝ էղի՛ր, էղէ՛ք.

6. Տալ>դալ

Ապառնի դերրայ՝ դալու, վաղակ.՝ դուվիր, հարակ.՝ դուված, ենթակ.՝ դրվող, ժխտման՝ դար:

Ըղծական՝ դամ, դաս, դա, դանք, դաք, դան և այլն:

Սահմ. նսրկա՝ դամ ա, դաս ա, դա յա և այլն:

Պայմ. ապառնի՝ գուդամ, գուդաս, գուդա և այլն:

Անցյալ կատարյալ՝ դուվի, դուվիր, դուվավ, դուվինք, դուվիք, դուվին:

Հրամ. եղանակ՝ դո՛ւր, դուււ՛կէք:

7. Դնել թընէլ

Ապառնի՝ թընէլու, վաղակ.՝ թըրիր, հարակ.՝ թըրած, ենթ.՝ թընօղ, ժխտման՝ թընիր:

Ըղծական՝ թընիմ, թընիս, թընէ և այլն:

Անցյալ կատարյալ՝ թըրի, թըրիր, թըրավ, թըրինք, թըրիք, թըրին:

Հրամ. եղանակ.՝ թի՛ր, թըրէք:

8. Լալ լալ

Ապառնի՝ լալու, վաղակ.՝ լացիր, հարակ.՝ լացած, ենթ.՝ լացօղ, ժխտման՝ լար:

Ըղծական՝ լամ, լաս, լա, լանք, լաք և այլն:

Սահմ. եղանակ ներկա՝ լամ ա, լաս ա, լա յա և այլն:

Պայմանական՝ գուլամ, գուլաս, գուլա և այլն:

Անցյալ կատարյալ՝ լացի, լացիր, լացավ, լացինք, լացիք, լացին:

Հրամայական եղանակ՝ լաց, լացէք.

9. Տանի լղանիլ

Ապառնի՝ դանէլու, վաղակ.՝ դարիր, հարակ.՝ դարած, ենթ.՝ դանօղ, ժխտման՝ դանիր:

Ըղծական՝ դանիմ, դանիս, դանի, դանինք և այլն:

Անցյալ կատարյալ՝ դարի, դարիր, դարավ, դարինք, դարիք, դարին:

Հրամ. եղանակ՝ դա՛ր, դարէք.

10. Բերել փերէլ, ասել ըսել

Որպես էլ խոնարհման պարզ բայեր՝ անցյալի հիմքում սըրանք պատք է ունենային ցոյական հիմք, այնինչ նրանց անցյալի հիմքը արմատական է էլ խոնարհման ածանցավոր բայերի նըման.

Անցյալ կատարյալ՝ փերի, փերիր, փերավ, փերինք, փերիք, ըսի, ըսիր, ըսավ, ըսինք, ըսիք, ըսին:

Հրամայական եղանակ՝ փէ՛ր, փերէք, ըսէ՛, ըսէք:

Գրաբարում իսկ բերել բայի անցյալ կատարյալը կազմվում էր արմատական հիմքով՝ ուրեմն բարբառային ձևը գրաբարի շարունակութունն է:

115. Անկանիւ շիյնալ, գտանել ըրդնալ, ելանել էլլալ, իջանել էշնալ, մտանել մըրդնալ, տեսանել ղէսնալ բայերը, ինչ լիս նշել ենք, անցել են ա խոնարհման ածանցավոր բայերի շարքը: Ներկայի հիմքից կազմված ձևերում նրանք խոնարհվում են իբրև ա խոնարհման բայեր, սակայն անցյալի հիմքից կազմված ձևերում նշված բայերը խոնարհվում են ի խոնարհման ածանցավոր բայերի օրինակով:

Ահա այդ բայերի խոնարհումը անցյալի հիմքից կազմված ձևերում.

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

իյնալ - ընգա, ընգար, ընգավ, ընգանք, ընգաք, ընգան,
բըղնալ-բըղա, բըղար, բըղավ, բըղանք, բըղաք, բըղան,
էլլալ -էլա, էլար, էլավ, էլանք, էլաք, էլան,
իշնալ իշա, իշար, իշավ, իշանք, իշաք, իշան,
մըրդնալ-մըրդա, մըրդար, մըրդավ, մըրդանք, մըրդաք, մըրդան,
ղէսնալ-ղէսա, ղէսար, ղէսավ, ղէսանք, ղէսաք, ղէսան:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ընգիր, ընգէք, բըղիր, բըղէք, էլիր, էլէք, իշիր, իշէք,
մըրդիր, մըրդէք, ղէսիր, ղէսէք:

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Վաղակատար՝ ընգիր, բըղիր, էլիր, իշիր, մըրդիր, ղէսիր:
Հարակատար՝ ընգած, բըղած, էլած, իշած, մըրդած, տեսած:

ՊԱԿԱՍՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

289. 1) Եմ>իմ

Սահմ. ներկա՝ իմ, իս, է, ինք, էք, էն,
անցյալ լանկատար՝ էլի, էյիր, էր, էյաք, էյիք, էյին:
Պակասող ժամանակները լրացվում են ըլլիլ բայով:

2) Կամ>զամ

Սահմ. ներկա՝ զամ, զաս, զա, զանք, զաք, զան.
Անցյալի անկատար՝ զայի, զայիր, զար, զայաք, զայիք, զային:
Պակասող ժամանակները լրացվում են ըլլիլ բայով:

3) Գիտեմ>բըղէմ

Սահմ. ներկա՝ բըղէմ, բըղէս, բըղէ, բըղէնք, բըղէք, բըղէն:

Անց. անկատ.՝ բրդէյի, բրդէյիր, բրդէր, բրդէյաք, բրդէյին, բրդէյիք:

Պակասող ժամանակները լրացվում են քիղնալ բայով:

4) Ունիմ>ունիմ

Սահմանակա՝ ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին:

Անց.անկատ.՝ ունէյի, ունէյիր, ունէր, ունէյաք, ունէյիք, ունէյին:

Պակասող ժամանակները լրացվում են ունէնալ բայով:

ՅԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐԶՈՒՄ

290. Պարզ կազմութիւն ունեցող բայերի ժխտականը կազմվում է դրական ձևերի վրա ավելացնելով չ մասնիկը (բաղաձայնով սկսվող բայերն ստանում են չը): Այդպես են կազմվում ըղձական եղանակի և սահմանական անցյալ կատարյալի ժխտականները : չ ժխտականը միշտ դրվում է բայերից առաջ. այսպես՝ չավլէյին, չավլէցի, չավլէցիր, չավլէցանք, չավլէցիք, չավլէցին:

291. Դերբայների և օժանդակ բայի հարադրութեամբ կազմված բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ ձևերում ժխտական է դառնում միայն օժանդակ բայը՝ չ մասնիկով: Արդի հայերենի նման օժանդակ բայը չ ստանալով՝ ընկնում է խոնարհվող բայից առաջ: ժխտական օժանդակ բայը եզակի երրորդ դեմքում չէ-ի փոխարեն ունի չի ձևը, իսկ հոգնակի 2-րդ և 3-րդ դեմքերում չէք-ի, չէն-ի փոխարեն չիք, չին, այսպես՝ չիմ, չիս, չի, չինք, չիք, չին:

292. Սահմանական եղանակի նտրկա և անցյալ անկատար ժամանակների ժխտականը կազմվում է օժանդակ բայերի ժխտական ձևերի և դրական խոնարհման հարադրութեամբ, ըստ այնմ անփոփոխ պահպանվում է ա մասնիկը. Օրինակ՝ չիմ փէրիմ ա, չիմ խաղամ ա, չիմ ուղիմ ա, չիմ փէրէյի յա, չիմ ուղէյի ա:

նույն այդ մասնիկը պահպանվում է նաև վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակների ժխտական ձևերի կազմութեան ժամանակ: Օրինակ՝ չիմ փէրիր ա, չիս փէրիր ա, չի փէրիր ա և այլն:

293. Պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտականը կազմվում է ժխտման դերբայի և օժանդակ բայերի ժխտական ձևերի հարադրութեամբ (տես § 256)՝ չիմ քը-

րիւ, չիս բըրիւ, չի բըրիւ, չիմ գարթար, չէյի գարթար:

294. Հարկադրական եղանակի ժամանակների ժխտական ձեւերում չ մասնիկը դրվում է բիդի (բիդ) եղանակիչի վրա, ու այս դեպքում կրճատվելով՝ դառնում է բի(ը). քանի որ բազմայնից առաջ չ-ի փոխարեն բայերն ստանում են չը, պատճառով

§ 28-ի այն Օրինաչափորեն կոխվում է չի-ի, և եղանակիչն այսպիսով դառնում է չիբի (ձայնավորով սկսվող բայերից առաջ՝ չիբ)՝ չիբի բըրիմ, չիբ ավլիմ և այլն:

295. Արգելակման հրամայականը կազմվում է բուն հրամայականի վրա ավելացնելով մի արգելականը: Ձայնավորով ըսկըսվող բայերից առաջ այն կարող է դառնալ նաև մ(մը), իսկ շեշտն ստանում է բայի առաջին վանկը՝ մը էրթա, մ էրթա, մ ավլէ: Մ-ն արտասանվում է անջատ:

296. Պատճառական, կրավորական, քազմապատկական, անկանոն և պակասավոր բայերի ժխտական ձևերը կազմվում են նույն հիմունքներով:

297. Ստորև տալիս ենք գրել >բըրէլ, խօսիլ >խօսիլ, աղա աղալ բայերի ժխտական խոնարհման աղյուսակը:

Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

Անորոշ	բըրէլ	խօսիլ	աղալ
Ապառնի	բըրէլու	խօսէլու	աղալու
Վաղակատար	բըրիր	խօսիր	աղցիր
Հարակատար	բըրած	խօսած	աղցած
Ենթակայական	բըրօղ	խօսօղ	աղցօղ
Ժխտման	բըրիբ	խօսիբ	աղար

Ը Ղ Ձ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ա Պ Ա Ռ Ն Ի

չըբըրիմ	չըխօսիմ	չաղամ
չըբըրիս	չըխօսիս	չաղաս
չըբըրէ	չըխօսի	չաղա
չըբըրինք	չըխօսինք	չաղանք
չըբըրէք	չըխօսիք	չաղաք
չըբըրէն	չըխօսին	չաղան

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

չըբըրէյի	չըխօսէյի	չաղայի
չըբըրէյիր	չըխօսէյիր	չաղայիր
չըբըրէր	չըխօսէր	չաղար
չըբըրէյաք	չըխօսէյաք	չաղայաք
չըբըրէյիք	չըխօսէյիք	չաղայիք
չըբըրէյին	չըխօսէյին	չաղային

ՍԱՀՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ր Կ Ա

չիմ բիրիմ ա	չիմ խօսիմ ա	չիմ աղամ ա
չիս բըրիս ա	չիս խօսիս ա	չիս աղաս ա
չի բըրէյա	չի խօսիյա	չի աղայա
չինք բըրինք ա	չինք խօսինք ա	չինք աղանք ա
չիք բըրէք ա	չիք խօսիք ա	չիք աղաք ա
չին բըրէն ա	չին խօսին ա	չին աղան ա

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

չէյի բըրէյիյա	չէյի խօսէյիյա	չէյի աղայիյա
չէյիր բըրէյիր ա	չէյիր խօսէյիր ա	չէյիր աղայիր ա
չէր բըրէր ա	չէր խօսէր ա	չէր աղար ա
չէյաք բըրէյաք ա	չէյաք խօսէյաք ա	չէյաք աղայաք ա
չէյիք բըրէյիք ա	չէյիք խօսէյիք ա	չէյիք աղայիք ա
չէյին բըրէյին ա	չէյին խօսէյին ա	չէյին աղային ա

Ա Պ Ա Ռ Ն Ի

չիմ բըրէլու	չիմ խօսէլու	չիմ աղալու
չիս բըրէլու	չիս խօսէլու	չիս աղալու
չի բըրէլու	չի խօսէլու	չի աղալու
չինք բըրէլու	չինք խօսէլու	չինք աղալու
չիք բըրէլու	չիք խօսէլու	չիք աղալու
չին բըրէլու	չին խօսէլու	չին աղալու

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

չէյի բըրէլու	չէյի խօսէլու	չէյի աղալու
չէյիր բըրէլու	չէյիր խօսէլու	չէյիր աղալու

չէր բըրելու
չէյաք բըրելու
չէյիք բըրելու
չէյին բըրելու

չէր խօսելու
չէյաք խօսելու
չէյիք խօսելու
չէյին խօսելու

չէր աղալու
չէյաք աղալու
չէյիք աղալու
չէյին աղալու

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր

չիմ բըրիր ա
չիս բըրիր ա
չի բըրիր ա
չինք բըրիր ա
չիք բըրիր ա
չին բըրիր ա

չիմ խօսիր ա
չիս խօսիր ա
չիս խօսիր ա
չինք խօսիր ա
չիք խօսիր ա
չին խօսիր ա

չիմ աղցիր ա
չիս աղցիր ա
չի աղցիր ա
չինք աղցիր ա
չիք աղցիր ա
չին աղցիր ա

ԱՆՅՅԱԼ ԿԱՂԱԿԱՏԱՐ

չէյի բըրիր ա
չէյիր բըրիր ա
չէր բըրիր ա
չէյաք բըրիր ա
չէյիք բըրիր ա
չէյին բըրիր ա

չէյի խօսիր ա
չէյիր խօսիր ա
չէր խօսիր ա
չէյաք խօսիր ա
չէյիք խօսիր ա
չէյին խօսիր ա

չէյի աղցիր ա
չէյիր աղցիր ա
չէր աղցիր ա
չէյաք աղցիր ա
չէյիք աղցիր ա
չէյին աղցիր ա

Հ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր

չիմ բըրած
չիս բըրած
չի բըրած
չինք բըրած
չիք բըրած
չին բըրած

չիմ խօսած
չիս խօսած
չի խօսած
չինք խօսած
չիք խօսած
չին խօսած

չիմ աղցած
չիս աղցած
չի աղցած
չինք աղցած
չիք աղցած
չին աղցած

ԱՆՅՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

չէյի բըրած
չէյիր բըրած
չէր բըրած
չէյաք բըրած
չէյիք բըրած
չէյին բըրած

չէյի խօսած
չէյիր խօսած
չէր խօսած
չէյաք խօսած
չէյիք խօսած
չէյին խօսած

չէյի աղցած
չէյիր աղցած
չէր աղցած
չէյաք աղցած
չէյիք աղցած
չէյին աղցած

ԳԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

չիմ թըրիը	չիմ խօսիր	չիմ աղար
չիս թըրիը	չիս խօսիր	չիս աղար
չի թըրիը	չի խօսիր	չի աղար
չինք թըրիը	չինք խօսիր	չինք աղար
չիք թըրիը	չիք խօսիր	չիք աղար
չին թըրիը	չին խօսիր	չին աղար

ԱՆՅՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

չէյի թըրիը	չէյի խօսիր	չէյի աղար
չէյիը թըրիը	չէյիը խօսիր	չէյիը աղար
չէր թըրիը	չէր խօսիր	չէր աղար
չէյաք թըրիը	չէյաք խօսիր	չէյաք աղար
չէյիք թըրիը	չէյիք խօսիր	չէյիք աղար
չէյին թըրիը	չէյին խօսիր	չէյին աղար

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա Գ Ա Ռ Ն Ի

չիբի թըրիմ	չիբի խօսիմ	չիբ աղամ
չիբի թըրիս	չիբի խօսիս	չիբ աղաս
չիբի թըրէ	չիբի խօսի	չիբ աղա
չիբի թըրինք	չիբի խօսինք	չիբ աղանք
չիբի թըրէք	չիբի խօսիք	չիբ աղաք
չիբի թըրէն	չիբի խօսին	չիբ աղան

ԱՆՅՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

չիբի թըրէյի	չիբի խօսէյի	չիբ աղայի
չիբի թըրէյի	չիբի խօսէյիը	չիբ աղայիը
չիբի թըրէք	չիբի խօսէր	չիբ աղար
չիբի թըրէյաք	չիբի խօսէյաք	չիբ աղայաք
չիբի թըրէյիք	չիբի խօսէյիք	չիբ աղայիք
չիբի թըրէյին	չիբի խօսէյին	չիբ աղային

ԱՆՅՅԱԼԻ ԱԳԱՌՆԻ

չիբի թըրէյի	չիբի խօսէյի	չիբ աղայի
-------------	-------------	-----------

չիբի բըրէյիր	չիբի խօսէյիր	չիբ աղայիր
չիբի բըրեր	չիբի խօսէր	չիբ աղար
չիբի բըրէյաք	չիբի խօսէյաք	չիբ աղայաք
չիբի բըրէյիք	չիբի խօսէյիք	չիբ աղայիք
չիբի բըրէյին	չիբի խօսէյին	չիբ աղային

ԱՐԳՇԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

մի՛ բորէ	մի՛ խօսիր	մի՛ աղա (մաղա)
մի՛ բորէցէք	մի՛ խօսէցէք	մի՛ աղացէք(մաղացէք)

Մ Ա Կ Բ Ա Յ Ն Ե Ր

Մալաբիայի բարբառում գործածվող մակբայներն են՝
 անդին "անգամ ժամանակ" , "ամմէն աղին" միշտ
 անդին -անդին "երբեմն-երբեմն"

ամմէնէվին

առաչ

առաչկ

առչի "առաջի, նախորդ" առչի օրը "նախորդ օրը"

անթին "այս կողմը"

անթին "այդ կողմը"

անթին "այն կողմը"

ասօր "այսօր"

գանուխ

դարվէդար "տարեց-տարի"

դէղօք-դէղօք

դէղնըզդէղօք "տնդն ու տնդը"

էդէվ, էդէվը, էդէվէն

էղբը, էղբէն

էվէլ, էվէլի , "առավել, ավելի"

էրէգ "երեկ"

էրթալօք "հնազհետե"

ըռընզվան "երեկոյան"

թարվար "դարի ի վայր"

թարվէր "դարի ի վեր"

թէմ -թէմի

թէմ-թիմաց

թօրս "դուրս"
թօրսէն "դրսից"
հարու "հեռու"
հէրու "հերու, անցյալ տարի"
հէղ "անգամ"
հըմա "հիմա, այժմ"
ծարէծար "ծայր ի ծայր"
մէգէն "միանգամից"
մէգ-մէգ "երբեմն-երբեմն"
մէյդէդ "միասին"
մէշաէդ "մեջ տաղը"
մընազ "մենակ"
յօդիզ
նէրս
նէրսէն
նօրէն "դարձյալ"
շադ "շատ"
շիդգէ շիդազ "ճիշտ"
շադուց, շադուցվա "վադուց"
շուդ "շուտ"
շուդվէն "շուտվանից"
չօրսթին "չորս կողմը"
սարէս-նարէս "այսպէս-այնպէս"
սըրդօթ "սրտանց"
վադը
վադվընէ "վադվանից"
վանքաց "առավոտյան"
վանքըցուք "արշալույսից առաջ"
վադը վանքաց "վադ առավոտյան"
վադնէք "առավոտյան շուտ"
վէրը "վերը"
ուզիմ -չուզիմ "կամա-ակամա"
փընավ
թիչ
թիչ մը "մի թիչ"
թօդգուզ "գաղտնի"

օղորթ " միշտ, ուղղորդ'
օջ " ուշ " :

Մակբայների շարքը կարելի է դասել նաև մի խումբ դերանուններ, որոնք գուգահեռաբար Օգտագործվում են թե՛ իբրև դերանուն և թե՛ իբրև մակբայ: Դրանք են՝ հօս, հօդ, հօն, անքան, անդան, անբան, անդրդար "այսչափ", անդրդար "այդչափ", անդրդար "այնչափ", անբէս "այսպես", անդբէս "այդպես", անբէս "այնպես":

299. ՓՈՒՍՈՒՅԱԼ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Փոխառյալ մակբայները մեծ մասամբ թուրքերեն բառեր են, սակայն կան նաև պարսկական կամ արաբական բառեր, որոնք բարբառ են անցել ոչ թե ուղղակի, այլ միջնորդաբար՝ թուրքերենի միջոցով:

Սրինակ՝ արաբ *hālḥāt* բառը հնչյունափոխված ձևով մտել է թուրքերենը՝ *halḥat*, և նույն ձևով էլ անցել բարբառ՝ հալբաթ: Բարբառի փոխառյալ մակբայներն են՝

անջախ "հազիվ"

անվան "հնում"

բէլբի "գուցե"

բիրդան "հանկարծ"

բիրդան -բիր "միանգամից"

գադիմի "միշտ"

գինա "նորից"

դահա "ավելի"

գօոգօոընա

գօոօք, գօոփգործիական հոլովի վերջավորությունը՝ օք
թաքի "միայն թե"

թէք "միայն "

իշտայ "ահավասիկ"

իշտէ

հալա "դեռ"

հաջաբա "արդյոք"

հնլբանթ "երևի"

նահախ "իզուր"

սադա "անընդհատ"

սամթին "հորմար"
 սէբէ թէ "հաշվիր թե"
 սէբէ թի "հաշվիր որ"
 սըխ "խիտ"
 ուսուլ "կամաց"
 քաշկա "երևի թե"
 օրթան "մէջտեղ"
 քօռքօռնա "կուլր-կուլր" և այլն

Կ Ա Պ Ե Ր

300. Բարբառում գործածվող կապերն ու կապական բառերն են. առաջ "առաջ" -ետադաս, օրինակ՝ քրզմէն առաջ -"քեզնից առաջ"
 առչէվ "առջև" -ետադաս, օրինակ՝ քու քաշած ըռէհէթութու- նըդ. աշկիս առչէվը փերիմ ա -"քո քաշած հանգստությունը աչքիս առջև եմ բերում":
 քէս "պես" -ետադաս, օրինակ՝ հըռէնք քէֆին քէս քըզի փա- նէցունէն ա-"իրանց քեֆի պես քեզ բանեց- նում են":
 դազ "տան" -ետադաս, օրինակ՝ անօնք նըստիր էն մանձ ձառին դազը-"նրանք նստել են մեծ ձառի տակը":
 դէդ "տեղ" (փոխարան) -ետադաս, օրինակ՝ օքիզին դէդ էշը փա- նէցունէն ա-"եզան փոխարան էշին են բանեց- նում":
 գադ "գատ, բացի" -ետադաս, օրինակ՝ քրզմէն գադ հէչ մարթ շէգավ- "քեզնից բացի ոչ մի մարդ չեկավ"
 ըդուր "վասն, համար" -ետադաս, օրինակ՝ ընծի ըդուր" - "ինձ համար"
 ըմար, հըմար "համար" -ետադաս, օրինակ՝ ընծի ըմար, անուր հըմար -"ինձ համար, նրա համար"
 թէմ "դեմ" -ետադաս, օրինակ՝ դունին թէմ "տան դեմ" ,միր թէմ վավ է գայնիր "մեր դեմ ով" է կանգնել"
 թըրի "դեպի" -նախադաս, օրինակ՝ Ագօփը հայի յա թըրի դուն "Հակոբը նայում է դեպի տուն"
 թիմաց "դիմաց" -ետադաս, օրինակ՝ իմ ախփարըս նստիր է անուր թիմաց -,"իմ նդրայրը նստել է նրա դիմաց"

հանդէ "պատճառով, համար" -ետադաս, օրինակ՝ ինչու՞ հանդէ
"ինչու համար", անուր հանդէ - "նրա պատ-
ճառով"

հարգէ "մինչև" -նախադաս, օրինակ՝ հարգէ քաղաք-"մինչև քաղաք,"
հարգէ բըշէր -"մինչև գիշեր"

հէղ "հետ" -նտադաս, օրինակ՝ ախիօրըս հէղ փանիմ ա, "աշ-
խատում եմ եղրորս հետ!"

մէչ "մեջ" -ետադաս, օրինակ՝ քիրքին մէչ, "գրքում", թու-
լուիին մէչ մէղու լէցուցիր էն, "տկի մեջ
մեղու են լցրել"

մօղ "մոտ" -ետադաս, օրինակ՝ առչի օրը հարսաս բընաց քնրիիս
մօղ, "անցյալ օրը մայրիկս գնաց քնուս
մոտ"

յատկը "հետո", ետադաս, օրինակ՝ ուղէլէն յատկը վըլասվիր,
"ուսուլուց հետո լվացվիր"

վորա "վրա", նտադաս, օրինակ՝ Արթինը նըստիր է ծառին վը-
րա, "արութուներ նստել է ծառի վրա"

քէնց "քան" -նտադաս, օրինակ՝ դանձը ծանդըր է, քէնց ծա-
ռը "տանձը ծանր է, քան ծառը":

քօվը , ,քօվ, մոտ" -ետադաս, օրինակ՝ Սուրէնը գայնիր է
անօր քօվ, "Սուրենը կանգնել է նրա քօվ,
մոտ" :

ինչպէս արդի հայերենում և մի շարք այլ բարբառներում,
Մալաթիայի բարբառում կապերի մի մասը հոլովվում է ինչպես՝
առաջ-առչէն, առչօք, մէչը-մէչէն-մէչօք, վըրաս-վըրայէն, վը-
րայօք, յաղրը-յաղբէն-յաղբօք, դագը-դագէն-դագօք և այլն:
Օրինակներ՝ ուրէն մէչէն հանիր իմ "ջրի միջից եմ հանել",
փառան վըրայօք զաքիր է "քեռի վրայով է կապել" և այլն:

Շ Ա Ղ Կ Ա Պ Ն Ե Ր

301. Բարբառում գործածվող շաղկապներն են.

յոււ,յուր, յուը "ծայնավորով վերջացող բառնրից հետո՝ որ":

ուր - բաղաձայնով վերջացող բառնրից հետո՝ "որ":

Ալ, ա -"էլ"

ութ - "թե"

յաի -"երբ"

յաճ ու - "երբ որ"

հա. . . հա-"թե. . . թե" օրինակ՝ հա օրիուն մՅմ խօստացիր էս,
հա հըրէն՝ փան " թե որքին մոմ ես խօստացել,
թե իրսն՝ քան":

համ - "և" ,

համ. . . համ -"և . . . և"

նէ-"եթե"

հըմրա - "քայց"

հաքա -"ապա"

ՓՈՒՍԱԻՅԱԼ ՇԱՂԿԱԴՆԵՐ

յա - "կամ"

քի-"որ, թե"

ամմա- "քայց"

չունքի -"որովհետև"

իսէ - "մինչդեռ"

սանքի -"այսինքն"

դէյի -"իբր թե"

լաքին-"քայց"

ՅԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

302. Բարըտում գործածվող ծայնարկություններն են.

ա՛խ - "ցավ, զարմանք, արտահայտելիս"

ա՛հ - "ցավ արտահայտելի՜ս"

քա՛հ - "ափսոսանք արտահայտելիս"

քա՛ն - "ափսոսանք արտահայտելիս"

դէ՛ - " վճռականություն արտահայտելիս"

է՛ - "դժկամություն արտահայտելիս"

է՛հ - "անտարբերություն արտահայտելիս"

էրնէ՛գ - "երանի"

է՛յ - " մեկին կանչելիս"

հայդէ - "դէհ, զնա"

մսդա՛ - "ափսոսանքի արտահայտություն"

ո՛ւֆ - "ցավի քացականչություն"

վա՛խ - "վախի, զարմանքի արտահայտություն"

վա՛յ - "վախի քացականչություն"

բա՛ - "կանանց կողմից զործածվող կոչական բառ"

օ՛ - "զարմանքի քացական շուրջուն"

օ՛խ - "ուրախության կամ ցովի քացական շուրջուն"

օ՛յ, օ՛ֆ - "ցովի, կսկծի արտահայտություն" :

303. Բացի վերոհիշյալ սովորական ծայնարկություններից բարբառում կան նաև ընտանի կենդանիներին կանչելու կամ վանելու հատուկ ծայնարկություններ: Դրանք են.

ը՛ն-ը՛ն - (հավ կանչելու)

օ՛շ-օ՛շ - (շուն կանչելու)

փի՛շ-փի՛շ - (կատու կանչելու)

գա՛լ-գա՛լ - (կով կամ հորթ կանչելու)

բը՛շէ-բը՛շէ - (հավ բշելու)

օ՛շտ - (շուն բշելու)

փի՛շտ - (կատու բշելու)

չո՛ւշ - (էշ կանգնեցնելու)

չօ՛-չօ՛ - (էշ բշելու)

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՐԲՐ

304. Բարբառում կան հետևյալ նշանակավորող բառերը.

Թօղ

Հա

Մաղը "մանավանդ"

Ձէ, շէ թէ

Ձէնէ թէ

Ձէնէ քի

Ձըլլա քի "մի գուցե, շլինի թե "

Բօնէ "գոնե"

Փ ո խ ա ո յ ա լ

Ըլլայի, իլլայի քի "մանավանդ, մանավանդ որ"

Յանի - "այսինքն "

305. Մալաթիայի բարբառի բառապաշարն ունի երեք շերտ՝ 1) գրաբարից ավանդված բառեր, 2) բարբառային բառեր, 3) այլ լեզուներից՝ հատկապես թուրքերենից, փոխառություններ:

1. Գ ր ա բ ա ռ ի ց ավանդված բառեր

Այս բառաշարը բարբառի հիմնական ֆոնդի անբաժանելի մասն է կազմում: Գրաբարի հետ ընդհանուր (անփոփոխ կամ հըն-դյունափոխված) բառերի քանակը հասնում է շուրջ 1600-ի, բառացանկում տրված են վարդ բառերը, որոշ ղեպքերում էլ՝ բարդ և անանցափոք բառերը: Միայն արմատական բառերի թիվն անցնում է 1100-ից:

Մալաթիայի բարբառում պահպանվել է լրաբարի բառային ֆոնդի մեջ մանող բառերի մի զգալի քանակ: Դրանցից են. ա-գահաբահ, ագիաբի, ազգասկ, ածելահաձէլ, ալիւրալիւր, աղաղ, աղալաղալ, աղբիւրախփիւր, ասելալսէլ, բանափան, բարիաբարի, գարիաբարի, երկուաէրգու, սրսքաիւրէք, կանգնիազայնիւ, մասնաւաղ, ծովաձօփ, քարաքար և այլն:

Այս կարգի բառերը բարբառում պահպանել են ընդհանուր հայերենին հատուկ իմաստները: Սակայն կան որոշ բառեր, որոնք իմաստափոխվել են: Այսպէս՝ "անկողին" բառը զրաբարում նշանակում էր "անկողին, բարձ, ամուսնություն", սակայն Մալաթիայի բարբառում՝ "ընկօղին" բառը ունի միայն "վերմակ" իմաստը:

"Յիշել" զրաբարում արտահայտում էր "մտաբերել" իմաստը, իսկ բարբառում՝ "իշէլ" նշանակում է "նմանվել մեկին":

Որոշ բառեր ստացել են բառիմաստի նեղացում կամ լայնացում: Օրինակներ՝ "մեկնել" զրաբարում արտահայտում է «բաժանել, տարածել, վարդել (ձուրքը), թորգմանել» իմաստները, իսկ բարբառում "մէյնէլ" ունի միայն "իջոէլ" իմաստը: "Դաւարկ" - զրաբարում "փուլ, պարապ", իսկ բարբառում՝ "թարդազ" նշանակում է նաև "լարապ, դատարկ" և ապա՝ "անամեջ նղնզյա փող, որի վրա փաթափում են մանածը":

"խոշոր" քաղը բարբառում գործածութիւնն շունի: Սակայն նրա ածանցյալ ձևերը՝ խօշրուք և խօրշուք, արտահայտում են այնպիսի իմաստներ, որոնք առնչվում են "խոշոր, մեծ" իմաստի հետ: Ըստ այնմ խօշրուք նշանակում է "ծավարի, ալյուրի, հատիկի խոշորները": Իսկ խօրշուք նշանակում է "մարմնի վերա խոշոր ուռուցքներ, խոցեր":

Մսիլ - գրաբարում՝ "ցրտից դողդողալ, մրսել": Իսկ բարբառում մըսիլ՝ "կիսավառվել": Խարակել գրաբարում նշանակում է "կիսավառվել", իսկ բարբառում՝ խարդէլ (հնչյունափոխված) նշանակում է "արևի տակ գուլնը գցել, հագուստը կեղտի մեջ մաշել":

Մաշկ գրաբարում՝ „1. մորթի, կաշի 2. բուրդ 3. մուշտակ“, իսկ բարբառում՝ մաշկ՝ „մորթի, ընդեղեն, կիսածած ձու“:

Հետաքրքիր են "աներ", "աներօագ" քառերի իմաստներն ու գործածութիւնները: Հայտնի է, որ ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում և հայ բարբառներում աներ նշանակում է "կնոջ հայրը", աներօագ՝ "կնոջ եղբայրը", իսկ աներօագի որդի իմաստն արտահայտելու համար դիմում են նկարագրական սղանակին՝ "աներօագի որդի, անոր թոռ": Մալաթիայի բարբառում այս բառերը այլ գործածութիւնն ունեն: Այսպես՝ անէրօագ նշանակում է "կնոջ հայրը" (արդի հայերենում նրան համապատասխանում է աներ բառը), անէր "կնոջ եղբայրը" (արդի հայերենում՝ աներօագ), իսկ անէրօագ՝ "կնոջ սղբոր որդին" (արդի հայերենում՝ անոր թոռը):

Սասանիլ - գրաբարում նշանակում է "դողալ, երերալ, խախտել" (այստեղից էլ՝ անսասան բառը), բարբառում սասանիլ նշանակում է "պտուղները անհամ դառնալ, համը կորցնել" և այլն:

2. Բարբառային բառեր

Բարբառն ունի գրաբարին անձանոթ բառերի մի զգալի քանակ: Առանձին հետաքրքրութիւն արժանի են այն բառերը, որոնք չեն ավանդված մեր մատենագրութիւնի մեջ, չկան արդի հայերենում, ոչ էլ նոր փոխառութիւններ են: Բարբառային բառերի մյուս մասը ընդհանուր հայերեն բառերի հիմքի վրա կազմված նոր բարդութիւններն ու ածանցումներն են: Հետևաբար բարբառային բառերի շարքը կարելի է բաժանել 2 խմբի .

ա) զուտ բարբառային բառեր: Այդ կարգի բառերից են՝ հարզէ "մինչև", հանդէ "վասն, համար", անալօք "հի", թօրթա "ըսկ", դէնէր "կտուր", վաղնէք -"վաղ առավոտյան, յուսաբացից առաջ", իվիրդը մըզնալ "համոզել", ըլուր "վասն, համար", հօրվալ "ցատկել", բօրքալ "ցատկել", դէդէր "անկողին", ձըլաիէլ "շակել, հարդարել", խօրթալ "խոմբացնել", գօսըողիլ "ծալալատիկ նստել", մօլօրօղ "տեսնոն ընդ առաջ", մանուղ "կատվի ծագ", գըթղուք "ազգականնարի կողմից նորածին երեխային տրվող նվերներ", ջարնաշուշար "պատանդանի վրա դրված կոճղ, որը երախտնարի համար ծառայում է իբրև խաղալիք" և այլն: Այս բառերի մի մասը կարող է լինել նաև այլ բարբառներում:

բ) Երկրորդ խմբի մեջ են մտնում այն բառերը, որոնք կազմված են հայերենին հայտնի արմատներից, բայց ածանցման կամ բառաբարդման միջոցով ստացել են նոր իմաստներ, որպիսիք սովորաբար չկան ոչ գրաբարում, ոչ էլ արդի հայերենում: Բազմաթիվ օրինակներից նշենք մի քանիսը.

Ափրանուն - "խաչեղբայր, հարսանիքի ժամանակ ձեսային առաջնորդող երիտասարդ, որը սովորաբար լինում է իր բարեկամաններից" (եղբայր+նուլյն կամ՝ եղբայր+անուն): Աղղըզօրուստ -(աղտ+կորուստ) "հագուստ, որի վրա կնիտը չի երեվում":

Աղրնդէզ -(աղնդն+ընդ+նկ) "աղեղ գործիքով մեջ անգամ գզած ըամբակ, որն Օգոստոսից լվում է պտորույզի համար":

Աղօթգում "արևելք" (հավանաբար աղօթակողմն բառից):

Անգաշխուլ (անգանջ+խուլ) "միջատ, որը մտնելով ականջը՝ խլացնում է այն":

Անթափ (ան+թափ) "թոնրի կողից ընկած կիսաեփ հաց":

Աքօք աստըղ (ազի+ով(օք) աստղ) "գիսավոր աստղ, այլ տեղերում այն կոչվում է պոչավոր կամ գիսավոր աստղ":

Բաղզից (պտտ+կից) "պտտը պտտին կղած հարևան":

Բաղսըրդէլ (պաղ+սիրտ+ել) "պաղել (սերը, մտերմությունը), անտարբեր դառնալ":

Գավթար (կավ+դար) "կավահող ունենցող դարավանդ տուղ. այս կավահողը ծառայում է իբրև օճառ":

- ճղէլ (կող սլ) "հացը թոնրի կողին կպցնել":
- Կողվէլ "կողը(կողքի) կրա պտկսլ՝ կոթնել":
- Կրղասկան (տղա+ձգան) "ծծմայր կին, որը ծննդաբերությունից հետո քառասուն օրվա ընթացքում չի շփվում այլ մարդկանց հետ":
- Թազնէլ "թակով ձեծնել":
- Թարլէցունէլ (թափալսցուցանել) "միսը ալիսաւիս յուղով հագցնել":
- Թրքալնոց "գղալնոց"
- Թրքալղէլ "գղալով ուտել, գղալահարնել":
- Լուսրնգլուս "լուսնեայի լույս":
- Լօղհնդ } "երկար գոչով փայտ կամ քար, որով ամրացնում են
Լօղքար } սանիքնայրը՝ տունը կաթնլուց իրկսլու համար":
- Լօսձագ (լույս+ձակ) "լուսամուտ, լուսանցք":
- Խօնջընթասկ (խոնջանթընթացք) "վարտիքի այն մասը, որի անցքերով անց է կացվում խոնջանը":
- Հացծըվան կամ հասսվան "հաստ սավան, հոցի սավան, որն օգտագործվում է նաև թուր, ընկույզ հավաքսլու, ինչպես նաև մրգեր չորացնելու համար":
- Մէյղէղէլ (մեկսեղնել) "միացնել, մեկտեղ դարձնել":
- Հօղլաթ (հող+լաթ) "հատուկ տեսակի հող, որը լցվելով քարուրի մեջ՝ դրվում է նրսխայի տակը, նրա մարմինը և սնդաշորը մաքուր պահելու համար":
- Չագաշկ (ձակ+աշք) "աչքածակ":
- Հառձագիչ (ձառ ձակիչ) "հայտնորիկ":
- Մաղնէլ (մատն-ել) "մատննրով ազահարար ուտել":
- Մանձրխնոց (մանածի+ձախանոց) "մանվածքի վանառատողի":
- Մըսղուրուր (միս+տրորնել) "մարմնի որևէ մասի կապտելը":
- Մուզընդօն (մուկ+տոն) "մկնարի տոնը, այդ օրը նրսխաննրը մկնարի ընթրը լցնում են բոված ցորսն": Ըստ նրաույթին դա հնթանոսական սովորությունների մնացորդ է:
- Շըռֆէղ "քարուրի մեջ դրվող կալահող" (տնս հօղլաթ):
- Վասկ -վամառ (վաստակ+վամառնել) "առ ու ձախս":
- Վըրանոց "վերարկուի վրայով հագնելիք բարակ հագուստ":
- Փէրընդէկ (բերան+ընդ+եկ) "խրձների, վարկերի բերանը կապալիք

վարան կամ հաստ թել”:

Այդ շարքը կարգի է դասել նաև բաղարկությամբ (ΚΑΘΗ-
ΤΑΚΗΚΑΥΜΑ) կազմած բառերը: Այսպես՝ հետան և լես (լեսուել
"մանրէլ, հղկել") արմատներից կազմվել է լէսան բառը: Ծուլս
և մուր արմատներից կազմվել է ձըրխէլ -մըրխէլ բառը: Եղիծ և
լնդի արմատներից կազմվել է յեղիջ (եղինջ) բառը: Զար-մար,
լըուր-մուր, տուն-մուն ձևերի նմանակությամբ կազմվել է հասա-
մաստ ձևը, որի նրկրորդ մասը սկսել է գործածվել ինքնուրույն,
"մաստ ասէղ" արտահայտության մեջ՝ "մեծ ասեղ" նշանակությամբ:

3. Փոխառյալ բառեր

ինչպես արևմտահայ շատ բարբառներում, այնպես էլ
Մալաթիայում, փոխառությունները բարբառի բառապաշարի զգալի
մասն են կազմում: Եվ դա բնական է: Դարեր ի վեր գտնվելով
օտար նվաճողների լծի տակ, անմիջական շփում ունենալով այլ
ազգերի, ժողովուրդների հետ, հեռու լինելով Հայաստանից և
առհասարակ հայաբնակ շրջաններից, պետք է որ հայկական հարու-
գատ ձևերը ժամանակի ընթացքում տևիլիք տային այլ լեզուներից
փոխառված բառերին:

Մալաթիան 1516 թվից սկսած եղել է Թուրքիայի տիրապե-
տության տակ: Մալաթիացիները անմիջական շփում և առնչություն
են ունեցել թուրքերի հետ, նրանց պատական լեզուն միշտ եղել
է թուրքերենը: Հետևաբար ամենից շատ փոխառությունները կա-
տարվել են թուրքերենից: Այլ լեզուներից՝ արաբերենից, վարս-
կերենից, հունարենից փոխառությունները կատարվել են միջնոր-
դաբար՝ թուրքերենի միջոցով:

Հ. Աճառյանը, խոսելով Պոլսահայ բարբառի փոխառութ-
յունների մասին, նշում է, որ միայն թուրքաբանից փոխառված
բառերը անցնում են չորս հազարից: Մալաթիայի բարբառում թուր-
քերենից փոխառությունները չեն զիջում Պոլսի բարբառին: Սուլյ
նիսկ այնպիսի հայերեն բառեր, ինչպիսիք են՝ եզ, այծ, գառ,
ոչխար, նապաստակ և այլն, բարբառում չունեն իրենց հայերեն
հոմանիշը: Դրանց փոխարեն բարբառում գործածում են միայն
թուրքերեն բառեր՝ օքիզ, գաչի, օղլափ, գոյուն, ողավշան և այլն

1) Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն հին շրջան,
Երևան, 1959, էջ 16:

Պոխտոությունների մեջ կարսլի է գանազանել հստակալ խմբերը.

ա) Մաքուր փոխտոություններ: Սրանց թիվը շատ շատ է. 0-րինակ՝ թօխում "սնրմ", դավշան "նապաստակ", փէրօն "պատառաքաղ(բառը հունարսն է, բայց փոխառվել է թուրքսրենի միջնորդությամբ) և այլն:

բ) Թուրքերեն արմատներով և հայերեն ածանցներով կամ դերբայական վերջավորություններով կազմված բառեր. օրինակ՝ ամուղէք "հորսղրայրներ"

ախսօնել "կախարդել օձի խայթի դեմ" թուրք. *şirsonlamag*

բաշլայել "սկսել" թուրք. *başlamag*

Բարըշիլ "հաշտվիլ" թուրք. *baruşmag*

էզմել "ծզմել" թուրք. *əzmag*

շալել "նվազել", "շմշկել", թուրք. *calmag*

դաղդըրնել "ցրվել, ցաք ու ցրիվ դառնալ" թուրք. *dağdurlamag*

թօիել "հավաքել" թուրք. *toplamag*

խալլսել "ազատվել" արաբ. *xalal*

խարջել "ծախսել" արաբ. *xarac*

իասօղիլ "ծանգոտել" թուրք.: *paslamag*

բ) Այս խմբի մեջ կարսլի է դնել այն սրկրորդական բաղադրյալ ժամանակնսրը, որոնք կազմվում են թուրքերեն միշ դերբայական ածանցով կազմված բայերից և հայերեն էնէլ, ըլլիլ բայերից (առաջինը՝ ներգործական, իսկ սրկրորդը՝ կրավորական կամ չեզոք բայերի համար): Այսպես՝

Բաթմիշ էնէլ "կորցնել"

բաթմիշ ըլլիլ "կորչել"

խավուրմիշ էնէլ "խորովել, տապակել" և այլն:

դ) Այս խմբի բառերը այնպիսի կրկնավորներ են, որոնք գանազան բայերի հետ գործածվելով՝ կարծես ցույց են տալիս նրանց բնածայնական պատկերը: Օրինակներ՝

Աիալ-Թաիալ փախավ դունէն

Թէլ-Թայ էնէլ "կարգի բերել"

Թիր-Թիր Թօղա յա ցուրդէն

Թընգըր-Թընգըր գէրթա, գուրթա

հօնգուր-հօնգուր գուլա յա

խըլըմ-խըլըմ էնէլ "թալանել"

ջափ-ջափ էնէլօք ուղէ յա

ջայիր-ջայիր զըվառի
ջըվիր-ջըվիր էնէլ "ճնճղուկի պես ծայն հանալ"
շառըլ-շառըլ թափի յա բըրդինքը
շափուր-շուփուր գուղէ յա
վըղըր-վըղըր էնէլ "վխաալ"
վըզըր-վըզըր գէրթա դուն
վըզիգ-վըզիգ էնէլ "վազվզել"
վիւի-վիւի փըրցունէլ
բըստըր-բըստըր բալլէ յա
փըթըր-փըթըր գէփէ յա

306. Հայերենից փոխառյալ բառեր
Մալաթիայի թուրքերենի խոսվածքում

Լինելով Փոքր Ասիայի զարգացած ժողովուրդներից մեկը՝ հայերը միշտ էլ աչքի են ընկել կուլտուրայի զարգացման բարձր աստիճանով, արհեստների, երկրագործության և գյուղատնտեսության այլ մյուզարի մշակման իրենց վարպետությամբ:

Հարևան ժողովուրդները հայերի հետ ապրելով կողք-կողքի, ամենօրյա առևտրական կամ տնտեսական հարաբերություններ ունենալով նրանց հետ, ստեղծվել են լեզվական ընդհանրություններ, որոնք ամենից փոքր իրենց դրսևորումն են գտել բառային փոխառությունների մեջ:

Այդպիսին է եղել նրևույթը նաև Մալաթիայում: Մենք վերը նշեցինք, որ Մալաթիայի բարբառը զգալի թվով բառեր է փոխառել թուրքերենից: Սակայն Մալաթիայի թուրքերեն էլ իրենց հերթին բառեր սն փոխառել հայերենից: Այդ փոփոխությունները կատարվել են Մալաթիայի բարբառի միջոցով: Իհարկե, այժմ դժվար է որոշել այդ փոխառությունների չափը:

Սովորաբար հայ բարբառագիտական աշխատությունների մեջ գրում ենք այդ լեզուներից կատարած փոխառությունների մասին: Սակայն չէ՞ որ այդ բարբառներն էլ իրենց հերթին ազդել են հարևան ազգերի կամ ժողովուրդների բառապաշարի հարստացման վրա:

Տարբերությունը միայն այն է, որ երև հայ բարբառների փոխառությունները այլ լեզուներից եղել են հարկի կամ անհարկի, կամա թե ակամա, ապա հայերենից փոխառությունները:

Յոյնը են անհրաժեշտաբար: նրանք սովորաբար ընդգրկել են կեն-
ցադի, գյուղատնտեսության և կուլտուրայի ընագավառները:

Ստորև տալիս ենք մի համառոտ ցանկ Մալաթիայի բարբա-
ռի այն հայերեն բառերի, որոնք ըստ բարբառախոս մալաթիացի-
ների վկայությունն փոխառվել և լայն զործածություն ունեին Մա-
լաթիայի թուրքական բարբառում կամ խոսվածքում:

Հայերեն բառեր	Մալաթիայի բարբառ	փոխառված ձև թուրքերանում	բուն թուրքական բ ա ո
1. ալոջ	ալուջ	ալըջ	յաբան էլմասը
2. ալիշ	ազիշ	ազիշ, այիշա	աթէշ բուրայի
3. անանուխ	աննուխ	աննըխ	նանա
4. անասուն	անասըմ	անասըմ	հայվան
5. առաստաղ	արըստաղ	արըստազ	արասթազ
6. բակ	փազ	փէզ	հավլա
7. բակլայ	փաղլա	փազլա	ֆասուլլա
8. բարաւոր	փալաւար	բարավար	ուսթէշէզ
9. բրինձ	փիրինձ	փիրինջ	դուլյու
10. գոմ	բոմ	բոմ	աղըլ
11. գործաւար	բօզվար	բօզբէր	վար
12. գրաւ	բըրավ	բիրավ	զիրէվ
13. դատարկ	թարդակ	թէրդէզ	զամըշ
14. զնդան	զինդան	զինդան	հափս
15. թափ	թափ	թափ	հուլըմ
